

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՅԻԼՅԱՆ
ՏԱՅԿ ՄԽՈՅԱՆ

ՏՅՈՒՄԻՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՄԻ
ՏԱՅԿԱԿԱՆ
ՏԱՄԱՅՆՔՆԵՐԸ
20-ՐԳ ԳԱՐՈՒՄ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՐՏԱՏՐԱՎԵՐՆԵՐ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ, ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՅԻԼՅԱՆ,
ՀԱՅԿ ՄԽՈՅԱՆ**

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018**

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 710

Հրատարակվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ:
Տպագրվում է ՀՀ սփյուռքի նախարարության դրամաշնորհով:

Խմբագիրներ՝

պ.գ.դ., դոց. Արման Եղիազարյան
բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

Գրախոսներ՝

պ.գ.թ., դոցենտ Հովհաննես Ալեքսանյան
պ.գ.թ., դոցենտ Մխիթար Գաբրիելյան

Մինասյան Էդիկ Գարեգինի, Մայիլյան Բենիամին Վիկտորի,
Մխոյան Հայկ Խաչիկի

Մ 710 Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. պատմու-
թյուն և մարտահրավերներ /Է. Մինասյան, Բ. Մայիլյան, Հ. Մխոյան/: Կո-
լեկտիվ մենագրություն: Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 152 էջ:

Эдик Гарегиневич Минасян, Бениамин Викторович Маилян,
Айк Хачикович Мхоян

Армянские общины в Северного Кавказа в XX веке, история и вызовы.
Коллективная монография, Ереван, Из-во ЕГУ, 2018, 152 с.

Edik Minasyan, Beniamin Mailyan, Hayk Mkhoyan

The Armenian Communities of the North Caucasus: History and Challenges.

Yerevan, YSU Press, 2018, 152 pp.

Կոլեկտիվ մենագրությունում ներկայացվում են ՀԽՍՀ սահմաններից դուրս, Հյուսիսային Կովկասում բնակվող հայկական համայնքների և հայաբնակ կենտրոնների հայության պատմաժողովրդագրական գործընթացները: 20-րդ դարում՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային անկախության տարիներին, սկզբնաղբյուրների և գրականության քննական ուսումնասիրության արդյունքում լուսաբանվում են Հյուսիսային Կովկասի, մասնավորապես Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում հայկական համայնքների պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ՝ հասարակական-քաղաքական, հոգևոր, կրթամշակութային կյանքը, հայության թվաքանակը, տեղաբաշխման շրջանները, մայրենի լեզվի իմացության աստիճանն ու գրագիտությունը: Մենագրությունը նախատեսված է պատմաժողովրդագրության հարցերով զբաղվող մասնագետների, պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2336-7

© ԵՊՀ հրատ., 2018

© Մինասյան Է., Մայիլյան Բ., Մխոյան Հ., 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի իրողություն է, որ հայկական համայնքների պատմությունը հայ ժողովրդի պատմության անքակտելի ու բաղկացուցիչ մասն է կազմում: Հնարավոր չէ հայոց ամբողջական, գիտական պատմությունը շարադրել առանց հայկական համայնքների պատմության: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ հայ համայնքների պատմության ուսումնասիրությունն ու նշանակությունը հաճախ են ընդգծվել հայ նշանավոր գործիչների կողմից: Հայտնի գրող ու մտածող Հովհաննես Թումանյանն իր ժամանակի լայնախոհությամբ ու խորաթափանցությամբ կարևորեց հայկական համայնքների պատմությունը լուսաբանելու խնդիրը¹: Անվանի պատմաբան Լեոն գրել է. «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, որ նա կազմվում է հայ գաղութների (համայնքների) հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով...»:

Հասկանալ և բացատրել այն ամենը, ինչ 19-20-րդ դարերում կատարվեց բուն Հայաստանում այնպիսի արագասահ ուժգնությամբ, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթե նրանցից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և մայր երկրի կյան-

¹ Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 156:

քը միախառնված, ամբողջացած է և անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»²:

Ահա թե ինչու, եթե հայ ժողովուրդի աշխարհասփյուռ հատվածի նշանակության տեսանկյունից ենք դիտարկում կատարված հետազոտությունը, ապա պետք է փաստել՝ հայկական համայնքների պատմության անցյալն ու ներկան հայոց պատմագիտության թույլ ուսումնասիրված ասպարեզներից են: Եվ դա հասկանալի է: Միայն վերջին տասնամյակներում հնարավոր դարձավ շրջադարձ կատարել դեպի պատմագիտության կողմից պայմանների բերումով անտեսված այս բնագավառը:

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները նշանակալի դեր են խաղացել հայ-ռուսական հարաբերություններում՝ նպաստելով դրանց հետագա զարգացմանը: Ռուսահայ համայնքների, այդ թվում՝ Հյուսիսային Կովկասի հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը գիտական հետազոտության կայուն հիմքերի վրա դրվեց միայն 20-րդ դարի երկրորդ կեսին, որի արդյունքում բացահայտվեց ու ցույց տրվեց հայկական այդ համայնքների ոչ միայն սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական, այլև հոգևոր-մշակութային կյանքի պատմությունը, որը խիստ կարևոր է թե՛ հայագիտության և թե՛ ռուսական պատմագիտության համար:

Հայ պատմագիտության մեջ խորհրդահայ համայնքներին նվիրված գիտական առանձին ուսումնասիրությունները բացակայում են: Որոշ ուսումնասիրողներ ներկայացրել են խորհրդահայ տարբեր համայնքների վերաբերյալ մասնակի, հպանցիկ ակնարկներ: Խորհրդահայ համայնքների պատմության ամբող-

² **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 73:

ջական կամ խորհրդային ժամանակաշրջանի որևէ պատմափուլն ընդգրկող ուսումնասիրություն կատարված չէ: Թերևս բացառություն են կազմում Հ. Ալեքսանյանի երկու ծավալուն մենագրությունները, որոնք վերաբերում են 1917 -1991 թթ խորհրդահայ համայնքների պատմությունը: Մինչհեղափոխական Ռուսաստանի հայ գաղթօջախների սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և հասարակական-քաղաքական պատմության բազմաթիվ իրողություններ հանգամանալիորեն ուսումնասիրվել են հայ գաղթօջախների պատմության խնդիրներով զբաղվող պատմաբանների կողմից³:

Խորհրդահայ համայնքների 1920-ական թթ. պատմության որոշ խնդիրների, մասնավորապես Կրասնոդարի երկրամասի հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական և կրթական հիմնահարցերի ուսումնասիրմամբ զբաղվել է Վ. Ադոբաշյանը: Խորհրդահայ համայնքների պատմության հետազոտության համար նոր փուլ ազդարարվեց 1990-ական թթ., երբ մի շարք հետազոտողներ (Մ. Մինասյանը, Վ. Գրիգորյանը, Ժ. Անանյան, Վ. Խաչատուրյանը, Ս. Դավթյանը, Ս. Տերեչչենկոն և ուրիշներ)

³ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Երևան, 1964, հ. 2, Երևան, 1967, **Վ. Միքայելյան**, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1801-1917, Երևան, 1970, նույնի՝ Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, На Крымской земле, Ереван, 1974, **Վ. Բարխուդարյան**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, նույնի՝ Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, հ. 2, (1860-1917 թթ.), Երևան, 1985, **Ջ. Անանյան**, Армянская колония Григориополь, Ереван, 1969, **Լ. Սողոմոնյան**, Армянская колония Армавира, Ереван, 1981, **Ա. Գրիգորյան**, Армяне в Средней Азии (вторая половина XIX в. - 1917 г.), Ереван, 1984, **Վ. Խաչատուրյան**, Образование армянской колонии в Астрахани, 1983, № 4, **Վ. Ադոբաշյան**, Из истории армянского населения на территории Краснодарского края, ЛСГ, 1968, № 7, **Ս. Մ. Արշարունի**, Մոսկվայի հայ մամուլը, Երևան, 1971, **Գ. Գևորգյան**, Հայ ազգագրություն և բանահյուսություն, գիրք 10, Երևան, 1980:

ձեռնամուխ եղան նորովի արժևորելու ռուսահայ տարբեր գաղութների պատմությունը, հրատարակեցին նոր աշխատություններ⁴: Այդ հրատարակություններն իրենց ժամանակագրական շրջանակը հասցնում են մինչև խորհրդային առաջին տարիները և խորհրդահայ համայնքների պատմության վերաբերյալ համապարփակ ու բազմակողմանի ուսումնասիրություններ չեն: Չնչին բացառություններով այդ աշխատությունները կրկնում են նախորդ շրջանի ուսումնասիրությունները, բացակայում է նոր նյութերի և խորհրդահայ համայնքների պատմության բազմակողմանի քննությունը:

Վերջին շրջանում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների պատմության բաժնի աշխատակիցների ջանքերով հրատարակվել են ռուսահայ գաղթօջախների մինչ-խորհրդային շրջանի պատմությունն ընդգրկող արժեքավոր աշխատություններ⁵, որոնցում ներկայացված է այդ գաղութների պատմությունը, որը, սակայն, ավարտվում է 1917 թ. իրադարձություններով, առանձին դեպքերում հպանցիկ ներկայացված են մինչև 1920 թ. ընկած իրադարձությունները: «Հայ սփյուռք» հանրագիտարանը ներկայացնում է Ռուսաստանի հայ գաղթօ-

⁴ Տե՛ս **М. Минасян**, Армяне Причерноморья, Ереван, 1990, **В. Григоряни**, Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Ереван, 1994, **Ж. Ананян, В. Хачатурян**, Армянские обиданы России, Ереван, 1993, **А. Терещенко**, Армянское население Донском и Северо-кавказском регионах в 20-х годах XX века, ՊԲՀ, 1992, № 2-3, **Ա. Դավթյան**, Հայկական և հայախառն բնակավայրերը Հյուսիսային Կովկասում, Երևան, 2001, **Վ. Բարխուդարյան**, Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Երևան, 2006:

⁵ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 1, Երևան, 2003, հ. 2, Երևան, 2003:

ջախների պատմության մինչեղափոխական շրջանը, մասնավորե՛ն նաև քաղաքացիական պատերազմի շրջանը:

Հաջորդ՝ «Հայ գաղթաշխարհի պատմություն» կոլեկտիվ երկհատոր աշխատությունը հայ համայնքների պատմությունը հասցնում է մինչև 1920 թվականը: Առաջին հատորում ներկայացված է Ռուսաստանի հայ համայնքների պատմությունը, որը, սակայն, նախկինում կատարված ուսումնասիրությունների համառոտ շարադրանքն է: Երկհատորյակը ներկայացնում է ընդամենը 1917-1920 թթ. ընդգրկող առանձին իրադարձություններ, այն էլ՝ ոչ բոլոր տարածաշրջանների հայության վերաբերյալ:

1920-1930-ական թթ. ԽՍՀՄ-ի, այդ թվում Հյուսիսային Կովկասի հայ ազգաբնակչության թվի, նրա աճի շարժընթացի, տեղաբաշխման և այլ գործընթացների վերաբերյալ, բացի վերոհիշյալ նյութերից, առկա են նաև այլ մարդահամարների համեմատական նյութեր, ինչպես նաև թեմատիկ հետազոտություններ:

Առանցքային նշանակություն ունեն հետազոտության ժամանակաշրջանի հայկական մամուլի ուսումնասիրությունները, որոնք հարուստ նյութ են պարունակում Ռուսաստանի, մասնավորապես Հյուսիսային Կովկասի հայության կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ: Հատկանշական է, որ 1917 թ. հեղափոխությանը հաջորդած 2-3 տարիներին ռուսահայ տարբեր կենտրոններում կյանք մտան հայկական համայնքային մամուլի մի շարք օրգաններ, որոնք կաղապարված չէին գաղափարական սահմանափակումներով և, իրավամբ, ներկայացնում էին ազգային ազատ մամուլը: Այս պարբերականների հրատարակությունը թեև կարճատև եղավ, սակայն նրանք համակողմանի լուսաբանեցին հայության վիճակը քաղաքական անկայուն այդ տարիներին՝ էապես խթանելով հայ կյանքի զարթոնքը:

Ռուսահայ համայնքների պատմությունը խորհրդահայ պատմագիտության մեջ ուսումնասիրել և մենագրություններով հանդես են եկել մի շարք անվանի պատմաբաններ՝ Ա. Աբրահամյանը, Վ. Ոսկանյանը, Վ. Միքայելյանը, Վ. Բարխուդարյանը, Ժ. Անանյանը, Ա. Յուստո, Վ. Խաչատրյանը և ուրիշներ:

Հյուսիսային Կովկասի հայ համայնքների հետ Հայաստանի անկախ հանրապետության շփումներին է անդրադարձել Է. Մինասյանն իր մենագրությունում⁶: Հյուսիսային Կովկասի հայ համայնքների հետ հայրենիքի կապերի որոշ դրվագներ քննության են ենթարկված նաև Ա. Եղիազարյանի, Մ. Անանյանի, Ա. Հովհաննիսյանի, Մ. Հովսեփյանի և Հ. Վարդանյանի հեղինակած «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը» կոլեկտիվ մենագրության մեջ: Հյուսիսային Կովկասի հայ համայնքների, նաև Աբխազիայի 1917-1921 թթ. պատմության հարցերին է անդրադարձել Բ. Մայիլյանն իր մենագրությունում: Հյուսիսային Կովկասի հայ համայնքների ժողովրդագրական գործընթացներն իրենց մենագրություններում քննության առարկա են դարձրել նաև ՀՀ սփյուռքի նախկին նախարար Հ. Հակոբյանն ու Վ. Խոջաբեկյանը^{7,8}:

Բացի նշված աշխատություններից՝ հրատարակված «Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի IV հատորի երկու գրքերի առանձին գլուխներում ենթազույգված ներկայացվել են «Հայությունը խորհրդային հանրապետություններում»

⁶ Տե՛ս **Է. Մինասյան**, «Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.)», Երևան, 2018:

⁷ Տե՛ս **Հ. Հակոբյան**, Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017:

⁸ Տե՛ս **Վ. Խոջաբեկյան**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարում, XXI դարի շեմին, Երևան, 2001:

բաժինները, որոնցում համառոտ անդրադարձ կա Հյուսիսային Կովկասի հայ համայնքների պատմությանը, ինչը բացակայում էր խորհրդային տարիներին կազմված նախկին ակադեմիական հրատարակության ութհատորյակի էջերում:

Ուսումնասիրությունը համեստ փորձ է ՌԴ հայկական համայնքների պատմության համապատկերում մեկ ամբողջության մեջ դիտարկելու Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքը 20-րդ դարում:

Կարևորելով սույն գիտահետազոտական աշխատանքի անհրաժեշտությունը՝ միաժամանակ կարող ենք փաստել, որ այն կխթանի նմանաբնույթ ուսումնասիրությունների իրականացմանը, որոնք հնարավորություն կտան առավել խորը հետազոտելու և վերլուծելու նշված համայնքների պատմության դեռևս չբացահայտված ծալքերն ու էջերը, ճշգրտումներ մտցնելու առանձին հիմնահարցերում՝ լայն շրջանառության մեջ դնելով նորահայտ փաստեր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայերը Մերձկասայան տարբեր շրջաններում բնակվում էին 18-րդ դարի սկզբներից, սակայն, երբ կառուցվեց Ղզլարը, հայերը փոխադրվեցին նորակառույց այս ամրոցը: Ղզլարը բնակեցման առաջին տարում՝ 1735-1736 թթ., ունեցել է շուրջ 400 հայ բնակչություն:

1775 թվականի «Աստրախանի նահանգի ցուցակում» նշվում են Ղզլարում բնակվող 1.222 հայեր (63,5 %) և 470 վրացիներ (24,4 %) այն դեպքում, երբ քաղաքն ուներ ընդամենը 1.924 բնակչություն: Ընդ որում՝ ներկայացվում էր միայն հարկատու բնակչությունը, և, բնականաբար, մեծ թվով հայեր դուրս էին մնացել ցուցակից⁹:

18-րդ դարի 70-ական թվականներին Ղզլար ժամանած Գիլդենշտեդը բավական ուշագրավ տեղեկություններ է թողել Ղզլարի և ղզլարահայերի մասին: Քաղաքի թաղամասերից առաջինը նա հիշատակում է «Հայկականը», որը, ըստ երևույթին, եղել է ամենից շատ բնակեցվածը: Ղզլարի հնագույն շինություններից էր հայկական փայտաշեն եկեղեցին, որը կառուցվել էր 1754 թ.՝ ավելի ուշ, քան ռուսականն ու վրացականը: Տարիներ անց հայ համայնքի թվաքանակի մեծացմանը զուգընթաց պահանջ է զգացվել ունենալու նաև երկրորդ եկեղեցին, որը կառուցվել է 1772 թ.¹⁰:

⁹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Լ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 68:

¹⁰ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Երևան, 2003, էջ 351-352:

Մոզդոկում կառավարությունը մեծ արտոնություններ էր տալիս բնակվողներին: Եվ պատահական չէր, որ Մոզդոկի առաջին բնակիչները դարձան Ղզլարից գաղթած հայ երկրագործները, արհեստավորներն ու առևտրականները:

Կովկասահայերի անընդհատ ներհոսքի հետևանքով 1760-ական թվականների վերջերին Մոզդոկն արդեն ուներ 300 և ավելի հայ բնակչություն: Մոզդոկի հիմնադրումից հետո քաղաքը նոր գաղթականներով, հատկապես հայ վաճառականներով համալրելու, նրանց սիրաշահելու և շահագրգռելու քաղաքականությունն եղել է կառավարող շրջանների ուշադրության կենտրոնում: 1767 թ. դեկտեմբերի 31-ին Ղզլարի պարետին ուղղված Արտաքին գործերի պետական կոլեգիայի հրամանում հատկապես ընդգծվում էր նորաբնակների արտոնյալ գոյավիճակի ապահովումը՝ անմաքս առևտուր, վարելահողերի, արոտավայրերի և այգիների՝ ըստ ազգությունների հատկացում, ժողովրդական սովորույթներով առաջնորդվող ազգային դատարանների հաստատում և այլն¹¹:

Այսպիսով՝ 18-րդ դարի 60-ական թվականների կեսերից ևս մեկ հայկական համահավաք գաղթօջախ ձևավորվեց Թերեքի ավազանի երկրորդ խոշոր բնակավայրում՝ Մոզդոկում:

18-դարի երկրորդ կեսին Մոզդոկը, ըստ նրանում բնակություն հաստատած ժողովուրդների, բաժանված էր 3 թաղամասերի՝ հայկական, վրացական և օսական: Առավել բնակեցվածը հայկական թաղամասն էր: Այստեղ 1778 թ. կառուցվել է հայկական առաջին եկեղեցին, իսկ մեկ տարի անց հայ բնակչության

¹¹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 69:

թվի մեծացման հետևանքով անհրաժեշտ դարձավ կառուցելու նաև երկրորդ եկեղեցին¹²:

Թե՛ Մոզդոկում և թե՛ Ղզլարում հայ բնակչության թվաքանակի աճի ընդհանուր գործընթացը ոչ միայն չի ընդհատվել, այլև հետագա զարգացում է ապրել: Այն իրականացվել է 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին Հայաստանից, Իրանի հայաշատ շրջաններից, ինչպես նաև Դերբենդից և շրջակա հայկական գյուղերից հայերի զանգվածային նոր գաղթի և Հյուսիսային Կովկասում վերաբնակվելու հետևանքով:

Ուշագրավ են ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հ. Արղությանի փաստարկները՝ հայ գաղթականներին Ռուսաստանում բնակեցնելու և նրանց տնտեսական վիճակը բարելավելու կապակցությամբ: Առաջին հերթին նա շեշտը դնում էր հարցի քաղաքական կողմի վրա՝ ընդգծելով այն հանգամանքը, որ Ռուսաստանում բնակվող հայերի վիճակի բարելավումը կնպաստի նրան, որ հայ հայրենակիցներից շատերը ցանկություն կհայտնեն հարևան երկրներից տեղափոխվելու և բնակվելու Ռուսաստանում: Նույն փաստարկներն էին ընդգծում իրենց խնդրագրերում նաև իրանահայ գաղթականները: Ինչպես նշվում էր դերբենդահայերի խնդրագրերից մեկում, նորեկ ռուսահայ հպատակների համար նույնատիպ արտոնությունների սահմանումը, ինչպիսիք արդեն ունեին Ռուսաստանում բնակվող նրանց հայրենակիցները, կնպաստեր, որ ոչ միայն հայերը, այլև քրիստոնյա այլ ազգեր հարևան ասիական երկրներից գաղթեն Ռուսաստան¹³:

¹² Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 352-353:

¹³ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 70:

Ռուսական կառավարող շրջանները, առաջին հերթին նկատի ունենալով տերության շահերը և լավագույնս պատկերացնելով երկրամասի բնակեցման ու տնտեսական յուրացման հեռանկարները, ընդառաջ գնացին նորեկ հայ գաղթականներին: Շուտով՝ 1799 թ. ապրիլի, 15-ին հետևեց Պավել 1-ինի հրամանը կառավարող Սենատին՝ նախատեսված հողատարածության կրկնապատիկը հայ գաղթականներին հատկացնելու և բնակարանների կառուցման համար անհրաժեշտ փայտանյութ տրամադրելու մասին, իսկ նրանց, ովքեր կցանկանային բնակվել քաղաքում, թույլատրվում էր Հին Մաջառ կոչված վայրում հիմնել քաղաք և վերանվանել Սուրբ Խաչ: Կրոնի, դատավարության, առևտրի և այլ հարցերում նրանց շնորհվում էին նույնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեին Ռուսաստանում բնակվող նրանց հայրենակիցները¹⁴:

19-րդ դարի երկրորդ կեսին Սուրբ Խաչը Պյատիգորսկի օկրուգի հայաշատ քաղաքներից մեկն էր՝ հայկական եկեղեցիներով, հարուստ տոնավաճառներով և ծաղկուն այգիներով: Քաղաքի հայ բնակչությունը հետագայում ևս համալրվեց Դաղստանից, Անդրկովկասից և Իրանից վերաբնակվողների շնորհիվ: Դարի 70-ական թվականների կեսերից Ռյազանի, Վորոնեժի և Ստավրոպոլի նահանգներից Սուրբ Խաչ փոխադրվեցին նաև ռուսներ¹⁵:

1907 թ. Սուրբ Խաչ քաղաքում կար հայերին պատկանող 369 տուն և 1.962 երկսեռ հայ բնակչություն¹⁶:

¹⁴ Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 353:

¹⁵ Ст'ю Ставропольская губерния в статистическом, географическом, историческом, сельскохозяйственном отношениях, Ставрополь, 1987:

¹⁶ Մանրամասն տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 71:

19-րդ դարի 30-ական թվականներին չերքեզահայերը Հյուսիսային Կովկասում հիմնադրեցին Արմավիրի հայկական գաղթօջախը, ևս մեկ հայաբնակ քաղաք երկրամասում, որին վիճակված էր զգալի դեր խաղալ թե՛ Կովկասի տնտեսական կյանքում և թե՛ հայ-ռուսական հարաբերություններում:

Ղզլարից ու Մոզդոկից գատ՝ նորաստեղծ վարչատնտեսական կենտրոնները՝ Եկատերինոդարը, Ստավրոպոլը, Վլադիկավկազը և մյուսները նույնպես տնտեսական գործունեության լայն հեռանկարներ էին խոստանում հայ վաճառականներին: Պատահական չէ, որ վերոհիշյալ քաղաքների առաջին բնակիչների թվում էին նաև հայ վաճառականները, որոնց մի մասը ժամանակավոր, իսկ շատերն արդեն մշտական բնակություն էին հաստատել:

Կուբանի մարզի Մայկոպ քաղաքում հայկական գաղթօջախ ձևավորվեց 19-րդ դարի 60-ական թվականներին: Շահութաբեր առևտրից, ինչպես նաև Մայկոպի շրջակա ազատ և բարեբեր հողերից օգտվելու նպատակով այստեղ վերաբնակվեցին հայեր Նոր Նախիջևանից, Երևանից, Թիֆլիսից, Նախիջևանից, Կովկասի գանազան քաղաքներից և Արևմտյան Հայաստանից: Դարի 80-ական թվականներին Մայկոպն ուներ 50 տուն հայ բնակչություն, որոնք մեծ մասամբ վաճառականությամբ էին զբաղվում¹⁷:

1777 թ. Ստավրոպոլի բերդի կառուցումից հետո հայ բնակչության առանձին հատվածներ սկսեցին վերաբնակվել այստեղ: Առաջին վերաբնակիչների թվում կրկին առանձնանում էին նոր-նախիջևանցի հայ վաճառականներն ու երկրագործները, որոնք

¹⁷ «Նոր դար», 1888, N 169, էջ 2-3:

աչքի առաջ ունեին ապագա առևտրաշահ քաղաքի հնարավորություններն ու շրջակա բարեբեր հողերի առկայությունը: 19-րդ դարի առաջին տասնամյակների վավերագրերն արձանագրել են Ստավրոպոլում հայ համայնքի գոյության, հայկական աղոթատան և նրանում հայ քահանայի ներկայության փաստը:

Վլադիկավկազի նորակառույց բերդաքաղաքը ևս հանգըրվանեց հայ գաղթականներ Կովկասի և Անդրկովկասի հայաշատ տարբեր շրջաններից: Կարճ ժամանակում այստեղ ձևավորվեց փոքրիկ, բայց համահավաք հայկական գաղթօջախ, որը 19-րդ դարի 30-ական թվականների կեսերին ուներ իր եկեղեցին¹⁸:

19-րդ դարի առաջին կեսին հայկական փոքրիկ գաղթօջախ ձևավորվեց նաև Թերեքի մարզի Գրոզնի ամրոցում, որտեղ հայերը սկսել էին բնակվել հիմնադրման առաջին իսկ օրից: Նրանք հիմնականում Գրոզնիում տեղակայված զինվորական գնդերի հայազգի զինձառայողներ էին, ինչպես նաև վաճառականներ: 19-րդ դարի 40-ական թվականների վերջին Գրոզնի ամրոցում արդեն հաստատվել էր փոքրիկ հայ համայնք: Հետագայում Գրոզնու հայերի թիվը զգալիորեն աճեց Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի տարբեր շրջաններից հայերի վերաբնակեցման հետևանքով:

Գեորգիևսկը և Կովկասյան գծի մյուս բերդաքաղաքների հարուստ տոնավաճառները շուտով դարձան հայ վաճառականների կենտրոնացման կարևոր հենակետը: Կովկասի առաջին փոխարքա Պ. Պոտյոմկինի օրոք Նոր Նախիջևանից Գեորգիևսկ հրավիրվեցին հայ վաճառականներ, որոնք, կապ հաստատելով չերքեզահայ վաճառականների հետ, աշխույժ առև-

¹⁸ Մանրամասն տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 72:

տուր սկսեցին լեռնականների հետ: 1783 թ. Գեորգիևսկում արդեն կար հայկական գաղութ, որտեղ հայերն ունեին իրենց առևտրական խանութաշարքը:

19-րդ դարի կեսերին զգալի թվով չերքեզահայեր Անդրկուրանից, իսկ հետագայում նաև Արմավիրից փոխադրվեցին Պյատիգորսկ: 19-րդ դարի 90-ական թվականներին Պյատիգորսկում կար ձևավորված հայ գաղթօջախ՝ բաղկացած 90 տուն հայերից, որոնց մեծ մասը վաճառականներ էին, իսկ մնացածը՝ արհեստավորներ¹⁹:

19-րդ դարի կեսերից դեպի Դերբենդ հայ գաղթականության նկատելի հոսք սկսվեց Ղզլարից, Աստրախանից, Ղարաբաղից, Շամախուց, Թիֆլիսից, Իրանի հայաշատ տարբեր շրջաններից:

Ռուսական կառավարությունը, փաստորեն, կազմակերպեց հայերի վերաբնակեցում Թերեքի ավազան՝ ունենալով քաղաքական ու տնտեսական որոշակի շահախնդրություններ²⁰: Մեծամեծ խոստումների և սիրաշահելու միջոցով գաղթն իրականացնելիս ռուսական իշխանությունները, անշուշտ, հետամուտ էին նաև տերության ռազմաքաղաքական շահերին:

Հայ գաղթականներին Ռուսաստանի հովանու ներքո ներգրավելն ու արտոնություններով ապահովելը բոլոր ժամանակների համար էլ եղել են քաղաքական և դիվանագիտական կարևոր քայլեր: Կովկասը վերջնականապես նվաճելու, իսկ այնուհետև Անդրկովկաս ներթափանցելու ձգտումով տարված Ռուսաստանը կովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայերի մեջ համակիրներ և աջակիցներ գտնելու նպատակ ուներ: Խոս-

¹⁹ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 359-360:

²⁰ Մանրամասն տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 73:

տումներով և զիջումներով սիրաշահվում էր մի ամբողջ ժողովուրդ, որը Ռուսաստանի հետ էր կապում օտարի լծից ազատագրվելու հույսը: 18-րդ դարի վերջին Ղուկաս կաթողիկոսը Արդությանի միջոցով շնորհավորական նամակ հղեց Պավել I-ին՝ կայսերական գահին բազմելու առթիվ և հայերի արտոնությունները պահպանելու ու շարունակելու խնդրանքով: Պատահական չէ, որ կայսրը չհապաղեց հայոց կաթողիկոսին ուղարկել 1799 թ. հոկտեմբերի 28-ի իր բարձրագույն հրովարտակը:

Նոր հրովարտակն Աստրախանի հետ միասին տարածվում էր նաև Ղզլարի ու Մոզդոկի հայ համայնքների վրա՝ պաշտոնապես հաստատելով նախկինում նրանց համար խոստացված, բայց մասամբ միայն իրագործված արտոնությունները²¹:

Բարձրագույն թույլտվությամբ Աստրախանում, Ղզլարում և Մոզդոկում բնակվող հայերը համարվում էին կայսրության ժամանակավոր հպատակներ: Հրամայվում էր ազգային սովորույթների և իրավական նորմերի համաձայն դատ ու դատաստան վարել Աստրախանում հիմնված Ասիական ընդհանուր դատարանի սկզբունքով և հայ համայնքից ընտրված անդամների միջոցով: Հայ վաճառականներն ազատվում էին ռուսական վաճառականական գիլդիաներում գրանցվելուց: Մետաքսամշակությամբ զբաղվող հայերը և նրանց տներն ազատվում էին զորքին օթևան հատկացնելու պարտականությունից, քանի դեռ նրանք զբաղվելու էին արդյունագործության այդ ճյուղով: Փոխարենը նախատեսվում էր դրամ գանձել նրանցից և հատուկ օթևաններ վարձել զորքի համար: Հրովարտակը Ղզլարի հայերին իրա-

²¹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 74:

վունք էր վերապահում հողատուրք վճարելու պայմանով վարձակալել Ղզլարի շուրջ գտնվող հողերը:

Նույն պայմանով թույլատրվում էր օգտվել նաև ձկնորսական վայրերից: Աստրախանի, Ղզլարի և Մոզդոկի հայերին թույլատրված բոլոր ապրանքներով և սեփական մանուֆակտուրային արտադրանքով ինչպես Ռուսաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Վերջին դեպքում միայն անհրաժեշտ էր վճարել առևտրական կանոնադրությամբ նախատեսված մաքսը: Խրախուսվում էր զարգացնել ամեն տեսակի արդյունագործություն և արդյունաբերություն՝ սեփական ցանկություններին և ունակություններին համապատասխան: Ընդհանուր սկզբունքներով և հիմնական հարցերում արտոնագիրը արտահայտում էր Մոզդոկի և Ղզլարի հայ համայնքների շահերը²²:

Արտոնագիրը տնտեսական զարգացման ազատ ուղի էր հարթում տակավին 18-րդ դարի վերջերից համայնքների ներսում ձևավորվող առևտրաարդյունաբերական շերտերի համար և որոշակիորեն պաշտպանում էր նրանց շահերը: Արտոնագիրը չանտեսեց նաև հայ հոգևորականությանը՝ վերջինիս համար ապահովելով արտոնյալ վիճակ՝ ընձեռելով նրանց լայն հնարավորություններ և իրավունքներ: Կայսերական հրովարտակը հայոց կաթողիկոսին ճանաչում էր Ռուսաստանում բնակվող հայերի հոգևոր պետ, իսկ նրա ներկայացուցիչ Հովսեփ Արղությանին թույլատրում էր վանքեր ու եկեղեցիներ կառուցել, Աստրախանում ունենալ հայոց հոգևոր կոնսիստորիա և ազատորեն դավանել հայոց կրոնը:

²² Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 75:

Կայսերական հրովարտակում տեղ գտած արտոնությունների հիման վրա և դրանց շրջանակներում ձևավորվեց Ղզլարի և Մոզդոկի հայկական գաղթավայրերի ինքնավարությունը: Ընդհուպ մինչև 19-րդ դարի սկիզբը, այսինքն՝ մինչև հայկական դատարանների հիմնումը Ղզլարում և Մոզդոկում հայ համայնքների ներսում դատական գործերն իրականացվել են համայնքի ավագի կամ ծերերի կողմից, որոնք բանավոր, վիճող կողմերին համոզելու եղանակով հաշտեցրել են նրանց և համապատասխան որոշում կայացրել: Հայ համայնքների գույքային, մուրհակային և այլ հարցերը քննվել են Աստրախանի հայկական-ասիական դատարանում, իսկ քրեական գործերը՝ 1793 թ. Մոզդոկում բացված վերին սահմանապահ դատարանում, որի կազմում ընդգրկված էին նաև հայ և վրաց համայնքներից 2-ական անդամներ. 1802 թվականից վերջինները մտան գավառային դատարանի կազմ²³: 1799 թ. կայսերական արտոնագրի թույլտվությամբ 1800 թ. Ղզլարում և Մոզդոկում միաժամանակ հիմնվեցին հայկական դատարաններ, որոնք 19-րդ դարասկզբի վավերագրերի մի մասում հիշատակվում են նաև որպես ռատհաուզներ²⁴:

Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայկական դատարանների՝ ազգային սովորույթների և ավանդույթների վրա խարսխված ու դրանց օգնությամբ դատ ու դատաստանը իրականացնելու հատկանիշները բնորոշում էին համայնքների ազգային պատկերը՝ ընդգծելով դրանց ինքնուրույն գոյությունը:

Ղզլարի, Մոզդոկի, ինչպես նաև Աստրախանի հայկական դատարանները գործեցին մինչև 1841 թվականը՝ ի տարբերու-

²³ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 76:

²⁴ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 363-365:

թյուն Նոր Նախիջևանի հայկական դատարանի, որը պահպանվեց ընդհուպ մինչև դարի 60-ական թվականների վերջերը: Անկասկած, առաջինների համար հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ դրանք ոչ թե միատարր հայաբնակ քաղաքներ էին, ինչպես, օրինակ, Նոր Նախիջևանը, այլ բազմազգ, տարալեզու և տարբեր կրոն դավանող ժողովուրդների բնակավայրեր: Դրանց համար համընդհանուր կառավարման մարմինների և օրենքների հաստատումն անհրաժեշտ էր և հրատապ²⁵: Աշխարհիկ դատարանից բացի՝ Ղզլարի և Մոզդրոկի հայկական գաղթավայրերում գործել են նաև համայնքների հոգևոր կառավարչությունները: Հոգևոր կառավարչությունը տնօրինել է հայ համայնքի հոգևոր կյանքի զանազան հարցերը, սահմանել եկեղեցու աստիճանավորների պարտականությունները և իրավասության շրջանակները, համայնքից գանձվող հասույթների չափը և տնօրինման եղանակները: Հոգևոր կառավարչության միջոցով ստեղծվել է կապ էջմիածնի Մայր աթոռի հետ:

Ձևավորվելով օտար միջավայրում՝ Հյուսիսային Կովկասի հայ համայնքները ոչ միայն չձուլվեցին օտարազգ և տարալեզու այդ խառնարանում, այլև ազգային սովորույթների ու բարքերի անխոնջ հետևողականությամբ պահպանեցին ազգի դիմապատկերը: Այդ ամենը հայկական գաղթավայրերի ինքնավար գոյությունը ապահովող վճռորոշ լծակն էր, իսկ առանձնաշնորհումների համար հարատև պայքարն ուղղված էր համայնքների ինքնուրույնության և անկախության պահպանմանը: Առանձին համայնքներով հաստատվելու հանգամանքը հայ համայնքներին ձերբազատում էր դրսի օտարամուտ միջամտություններից:

²⁵ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 76:

Եկեղեցու, դպրոցի, ազգային և հասարակական զանազան կազմակերպությունների շուրջը համախմբված կովկասահայերը հետագայում ևս կարողացան պահպանել ազգային ինքնատիպությունը, կենցաղավարության, վարքուբարքի և նիստուկացի մեջ վաղեմի սովորույթներով առաջնորդվելու ձգտումը:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները տնտեսական ուրույն զարգացում ապրեցին: Ղզլարը հիմնադրվել էր շատ սահմանափակ հողատարածքի վրա: Բերդավանի մոտակա հարևանները կազակական ստանիցաներն էին, որոնց բնակիչները, ծանրաբեռնված զինվորական ծառայությամբ, մասամբ նաև զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Նման պայմաններում հայ վերաբնակիչները ստիպված էին ինքնուրույն սկսել իրենց տնտեսական կյանքը²⁶:

Երկրագործության համար բավարար և անհրաժեշտ հողերի բացակայությունը զգալիորեն սահմանափակեց դաշտավարության՝ հացահատիկային կուլտուրաների մշակության հնարավորությունը: Այդուհանդերձ, Ղզլարի հայ զանգվածը բնակչության առաջնահերթ պահանջները բավարարելու նպատակով, թեև սուղ պայմաններում, բայց ձեռնամուխ եղավ նաև հացահատիկային կուլտուրաների մշակությանը: Ղզլարի շրջակայքում աճեցվող հացահատիկը միայն մասամբ էր բավարարում բնակչության պահանջները, իսկ պահանջարկի մնացած մասը ձեռք էր բերվում Մոզդոկի շրջանից: Առաջին պլան էր մղված եկամտաբեր ու մեծ պահանջարկ ունեցող կուլտուրաների՝ բրնձի, խաղողի, բամբակի, քունջութի, տորոնի մշակումը, մանավանդ

²⁶ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 77:

որ դրանց անհրաժեշտությունը ընդգծվել էր նաև կառավարության կողմից:

Անասնապահությունը տարածում չստացավ. ղզլարահայերը բավարարվել են հարևան կիսաքոչվոր նողայներից գնված անասուններով և անասնապահական մթերքներով:

Դաշտավարության համար անհարմար բնահողի առկայությունը Մոզդոկի շրջակայքում, անկախ հայ երկրագործների գործադրած ջանքերից, չկարողացավ ցանկալի արդյունք տալ: Այդ իսկ նկատառումներով մոզդոկաբնակ հայերը գերադասեցին ագարակներ հիմնել քաղաքից դուրս, առավել ընդարձակ և նպաստավոր հողատարածքում²⁷:

Գյուղատնտեսական կուլտուրաների մշակությամբ առավելապես զբաղվում էր երկրամասի գյուղական վայրերի հայ բնակչությունը: Այսպես, եթե Ղզլարին շրջակա 3 հայկական գյուղերի բնակչությունը, տեղական բնակլիմայական պայմաններից ելնելով, զբաղվում էր հիմնականում այգեգործությամբ և խաղողագործությամբ, ապա Մոզդոկի մոտ գտնվող Կասանո-Յամա հայաբնակ գյուղի բնակչությունը հարմարավետ հողատարածքի պայմաններում՝ նաև դաշտավարությամբ և անասնապահությամբ: Հայերը զբաղվում էին նաև այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Աճեցնում էին նաև խաղող: Ունեին թթենու այգիներ, զբաղվում էին մետաքսի մշակությամբ, իսկ արտադրանքը, տեղում սպառելուց բացի, վաճառքի էին հանում: Եղեսիաբնակ հայերի մի մասը, հատկապես ագարակ ունեցողները, զբաղվում էին նաև անասնապահությամբ:

²⁷ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 78:

18-րդ դարի կեսերից ղզլարահայերը զբաղվում էին նաև քունջուփի, բամբակի, տորոնի, իսկ ավելի ուշ՝ նաև դեղնաներկի և կապարի մշակությամբ, որոնք եկամտաբեր էին և լայն պահանջարկ ունեին ռուսական շուկաներում: Քունջուփի և բամբակի մշակությունը Ղզլարի շրջանում շարունակվեց մինչև 19-րդ դարի 30-ական թվականների կեսերը, բայց հետագայում գրեթե լիովին անտեսվեց հայ երկրագործների կողմից²⁸:

Ամբողջ Կուբանի մարզում, մասնավորապես Արմավիրում արդյունաբերության զարգացման առանձնահատուկ կողմն էր գյուղատնտեսական հումքի վերամշակությունը: Հենց դրանով էլ բացատրվում էր ավրաղացային, օճառի, յուղի ու ձեթի արտադրության ֆաբրիկաների և գործարանների լայն զարգացումը: Արմավիրում ձիթհան ձեռնարկություններ ունեին Հակոբ Պոպովը, Հախվերդևը, Բաբանը, Բարանովը և այլ հայեր: Արևածաղկի ձեթի արտադրությամբ Արմավիրը 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբներին դարձել էր ամբողջ Հյուսիսային Կովկասի հիմնական կենտրոններից մեկը:

1875 թ. Հովհաննես Տարասովը Արմավիրում և ամբողջ Կուբանի մարզում բացեց առաջին բամբակագտիչ գործարանը: 1913 թ. Արմավիրում արդեն գործում էին չորս նմանատիպ ձեռնարկություններ²⁹: 1841 թ. Արմավիրում բացվեցին մի շարք խանութներ, որոնք վաճառում էին Ստավրոպոլից և Թիֆլիսից ներմուծված ապրանքներ: 1842 թ. սկսած՝ Արմավիրում գործում էր ամենամյա տոնավաճառ: 19-րդ դարի երկրորդ կեսից կապիտա-

²⁸ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 368-369:

²⁹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 79:

լիզմի զարգացմանը համընթաց տոնավաճառային առևտուրն իր տեղը աստիճանաբար սկսեց զիջել մշտական առևտրին³⁰:

Արևելյան Կովկասում առաջինը հայերը նախաձեռնեցին շաքարեղեգնի մշակումը: 1835 թ. ղզլարահայ Ե. Մանվելովը Լենքորանից Ղզլար փոխադրեց և աճեցրեց շաքարեղեգնի արմատներ: Որոշակի էր հայերի ներդրումն երկրամասում այգեգործության, բանջարաբուստանային կուլտուրաների մշակության գործում: 18-րդ դարի 80-ական թվականների կեսերին Ղզլարի շրջակա այգիներում նրանք աճեցնում էին հիմնականում խաղող, ինչպես նաև խնձորենի, ծիրանենի, սալորենի, տանձենի, ալենի և թթենի: Բանջարանոցներում և բուստաններում մշակում էին սեխ, ծմերուկ, զանազան կանաչիներ, լոբի, բադրիջան, վարունգ և այլն, որոնց մի մասն անձանոթ էր եկվոր ռուս երկրագործներին: Բանջարանոցներ ուներ ղզլարահայերի մեծ մասը: Տնամերձ հողակտորներից ստացված բանջարեղենը հիմնականում սպառվում էր տեղում:

Յուրահատուկ նշանակություն ուներ խաղողագործությունը: Թերեքի ավազանում այդ նոր կուլտուրան մեծածավալ զարգացում ստացավ և շատ եկամտաբեր էր: Խաղողագործությամբ և գինեգործությամբ զբաղվում էին նաև այստեղ բնակություն հաստատած կազակները, սակայն տնտեսության այդ ճյուղերն երկրամասում լայն տարածում ստացան հատկապես 18-րդ դարի կեսերից՝ հայերի և վրացիների վերաբնակեցումից հետո³¹:

18-րդ դարի երկրորդ կեսին հայ և վրացի վերաբնակիչների շնորհիվ խաղողագործությունը Թերեքի շրջանում, մասնավորապես Ղզլարում դարձել էր տնտեսության հիմնական ճյուղը: Շու-

³⁰ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 371:

³¹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 79:

տով կառավարության հովանավորող քաղաքականության և հայ երկրագործների նախաձեռնության շնորհիվ Ղզլարի ճահճուտները վերածվեցին խաղողի և այլ մրգատու այգիների: Ղզլարահայերին շահագրգռելու նպատակով կառավարությունը մոտ մեկ դար այգետերերից յուրաքանչյուրին խաղողի մեկ տնկած վազի դիմաց 5-ական կոպեկ էր հատուցում, իսկ Մոսկվայում պետական հատուկ տեղ էր հատկացված Ղզլարից բերված գինիների պահեստավորման համար:

Հյուսիսկովկասյան բնակավայրերի շարքում Ղզլարն ասքի էր ընկնում նաև թթենու լայնածավալ այգիներով: 18-րդ դարի սկզբներից ռուսական կառավարող շրջաններում մեծ ուշադրություն էր դարձվում հարավային երկրամասում, մասնավորապես Թերեքի ավազանում (այստեղ կլիմայական նպաստավոր պայմաններ կային թթենու աճեցման համար) շերամապահության և մետաքսամշակության զարգացմանը: Մետաքսագործությանը զարկ տալու նպատակով խրախուսվում էր նաև այդ կուլտուրայի մշակությանը լավ ծանոթ հայերի և վրացիների բնակեցումը Արևելյան Կովկասում: Դեռևս 1718 թ. Թերեքի ափին հողեր են տրամադրվել հայազգի Սաֆար Վասիլևին՝ թթենիների աճեցման և մետաքսի մշակության համար: Տարբեր արտոնությունների շնորհիվ նպատակ ունեւր շահագրգռելու և նորանոր վարպետ-մետաքսագործներ հրավիրելու Իրանի հայաշատ շրջաններից:

19-րդ դարի 30-ական թվականների կեսերին միայն Ղզլարի շրջակայքում հայերն արդեն աճեցրել էին 500.000 թթենի և տարեկան մինչև 75 փուֆ մետաքս էին արտադրում: Թթենիների աճեցմամբ և հում մետաքսի մշակությամբ զբաղվում էին հատկապես հայաբնակ վայրերում: Թթենու առատ ծառատուն-

կերով աչքի էին ընկնում Մոզդոկը (1825 թ.՝ 27.352 թթենի), Ղզլարի երեք հայկական գյուղերը (միասին՝ 74.480 թթենի), Փարփուչ հայաբնակ գյուղը (45.018 թթենի), Գեորգիևսկը (2.001 թթենի), Ստավրոպոլը (43.088 81 թթենի), Սարաֆիննիկովո գյուղը (1.197 թթենի) և այլն³²: Թթենիների մեծ մասը պատկանում էր նշված տեղերում բնակվող հայերին, որոնք երկրամասում հում մետաքսի հիմնական մշակողներն էին:

Արհեստագործությունը հյուսիսկովկասյան հայկական գաղթավայրերի տնտեսական կյանքի կարևոր ճյուղերից մեկն էր:

Ղզլարի և Մոզդոկի հայ արհեստավորներն աշխատում էին ներմուծված հումքի հիման վրա: Շուկաներում գնված անասունների կաշին և մորթին օգտագործվում էին կոշկակարության, գդակագործության, մուշտակագործության և մյուս արհեստների համար: Առևտրի միջոցով ձեռք բերված երկաթը, պղինձը, փայտը, ոսկին, արծաթը նպաստում էին հայերի համար ավանդական դարձած մի շարք այլ արհեստների՝ դարբնության, հյուսնության, ոսկերչության, արծաթագործության զարգացմանը:

Ղզլարում, Մոզդոկում և մյուս հայաբնակ վայրերում հայ արհեստավորներն առևտրական շարքերին կից զբաղեցնում էին կրպակներ, որտեղ և պարապում էին նախընտրած արհեստով: Մի շարք բնակավայրերում լայն տարածում էին գտել արհեստագործության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին տակառագործությունը, հյուսնությունը, աղյուսագործությունը և այլն: Գրեթե բոլոր հայաբնակ վայրերում տարածված էր և բնակիչների նախասիրած զբաղմունքն էր գորգեր և կարպետներ գործելը: Կանայք զբաղվում էին արհեստագործության մի շարք այլ ճյուղերով ևս՝

³² Տե՛ս Վ. Քարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 81:

բրդի վերամշակմամբ, ոչխարի, այծի և ուղտի բրդից թելի ստացմամբ և ներկմամբ: Ղզլարում տարածված էր նաև ջուլիակությունը, որով նույնպես միայն կանայք էին զբաղվում:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերում զարգացում էին ապրում արդյունաբերության այն ճյուղերը, որոնց համար կար համապատասխան նյութական բազա: Արտադրության այս կամ այն ճյուղին քաջածանոթ հայերը, օգտվելով առանձնաշնորհումներից և կառավարության հովանավորող քաղաքականությունից, ձեռնարկում էին արտադրության այն ճյուղերի զարգացումը, որոնք նախ համապատասխան նշանակություն ունեին և խրախուսվում էին կառավարության կողմից, և երկրորդ՝ առավել շահութաբեր էին թե՛ ձեռնարկատիրոջ, թե՛ պետության համար: 18-րդ դարի վերջերին արդեն Ղզլարում և Մոզրոկում գործում էին գինու և օղեթորման գործարաններ, մետաքսամշակման ֆաբրիկաներ, կաշեգործարաններ և այլն: Դրանք թեև վավերագրերում հիշատակվում են որպես ֆաբրիկագործարաններ, բայց ավելի շուտ տնայնագործական արհեստանոցներ էին՝ մի քանի, երբեմն տասնյակի չհասնող վարձու բանվորների առկայությամբ, ձեռքի աշխատանքի վրա հիմնված արտադրանեղանակով և ձեռնարկության տարեկան ոչ մեծ արտադրագումարով: Ընդհանուր առմամբ այսպիսին էր պատկերը ընդհուպ մինչև 19-րդ դարի 70-80-ական թվականները: Այդ ժամանակ պարզունակ այս արհեստավորական ձեռնարկություններին փոխարինեցին շոգու և մեխանիկական շարժիչներ ունեցող, մի քանի տասնյակ բանվորներ ընդգրկող և հազարավոր ռուբլիների արտադրագումար ապահովող ֆաբրիկագործարանները:

Գինեգործության և օղեգործության զարգացումը Կովկասյան մարզում անմիջականորեն կապվում էր հայ վերաբնակիչ-

ների գործունեության հետ: Ղզլարահայերի եկամտի հիմնական աղբյուրը խաղողի սեփական այգիներից ստացվող էժան, մեծ քանակությամբ արտադրվող կարմիր գինին էր (չիխիր), որը մասամբ սպառվում էր տեղում, իսկ հիմնականում փոխադրվում էր Աստրախան՝ վաճառքի³³:

18-19-րդ դարերում Հարավային Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում հաստատված հայկական գաղթավայրերը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային կյանքի կարևոր կենտրոններ էին: Նրանցից յուրաքանչյուրը կարողացավ ստեղծել բավական ուրույն մշակույթ, որը, բնույթով ազգային լինելով, կրում էր նաև ռուսական միջավայրի ազդեցությունը՝ միաժամանակ խաչաձևվելով տեղական ժողովուրդների մշակութային կյանքին:

Դպրոցը, աճող սերնդի կրթության և լուսավորության գործը հայ համայնքների առաջնահերթ և հրատապ խնդիրներից էին: Դրա համար էլ գաղթավայրերի ղեկավար և հոգևոր գործիչներն իրենց ուշադրությունը բևեռում էին հատկապես այդ խնդրի վրա՝ ձգտելով շուտափույթ լուծում տալ հարցին:

Հյուսիսային Կովկասում հայ կրթամշակութային կյանքի աչքի ընկնող կենտրոնը Ղզլարն էր: Ղզլարում հայկական առաջին վարժարանը բացվել է 1817-1818 թթ. ժամանակի աչքի ընկնող գործիչներից մեկի՝ Գևորգ Խուբովի (1762-1829) օգնությամբ և մասնակցությամբ³⁴:

Ղզլարի վարժարանը բացման տարում ունեցել է հարյուրից ավելի աշակերտներ: Դպրոցը պահվել է մի քանի ղզլարահայե-

³³ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 83:

³⁴ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Գևորգ Մելիքսեթյան Խուբով (Նյութեր և նոթեր), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1950, N 1-2:

րի, մասնավորապես Խոջյան եղբայրների և Գևորգ Խուբովի միջոցներով: Դասավանդվող առարկաների թվում էին՝ «Հին և Նոր կտակարաններ», «եկեղեցական արարողություն», «ռուսերեն և հայերեն քերականություն», «հռետորություն», «թվաբանություն», «առևտրական հաշվապահություն» առարկաները³⁵:

Ղզլարի հայ պատանիների համար բարձրորակ ուսումնարան հիմնելու առաջարկով Եփրեմ կաթողիկոսը 1829 թ. դիմեց Կազանի համալսարանի պրոֆեսորի ընթերակա Մանասևին: Վերջինս այդ մասին հայտնեց Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձու Մ. Մազնիցկուն, որը և շուտով Կազանի համալսարանի խորհրդից ձեռք բերեց ուսումնարանի բացման թույլտվությունը: Մանասևը 1820 թ. ապրիլի 17-ի Եփրեմ կաթողիկոսին նամակով տեղեկացրեց, որ ուսումնական հաստատությունների կանոնադրության համաձայն՝ իրեն արդեն հաջողվել է ներկա տարվա մարտի 14-ին բացել Ղզլարի գավառական ուսումնարանը:

Տասնամյակներ շարունակ Ղզլարի գավառական (քաղաքային) ուսումնարանը հայ համայնքի կրթական կարևոր օջախներից մեկն էր, որտեղ հարյուրավոր հայ պատանիներ նախնական կրթություն էին ստանում: Ղզլարի գավառական դպրոցի վերատեսուչ Դ. Բոգդանովիչի՝ 1867 թ. կաթողիկոսին հղած զեկուցագրից տեղեկանում ենք, որ դպրոցը տեղավորված էր պետական շենքում, ուներ 138 աշակերտ և կրոնի ու հայոց լեզվի մեկական ուսուցիչ: Դպրոցն ունեցել է հարուստ գրադարան՝ բաղկացած 878 գրքից³⁶:

³⁵ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 84:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 85:

1829 թ. աշնանը բացվեց Ղզլարի մասնավոր արական պանսիոնը, որը, չորսամյա դասընթացը դեռ չավարտված, երրորդ տարում՝ 1831 թ. աշնանը, փակվեց:

1871 թ. մայիսի 30-ին հանդիսավոր պայմաններում բացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում կառուցված հայոց քարաշեն ուսումնարանը, որի հիմքը դեռևս 1867 թ. օրինել էր Ղզլար այցելած Գևորգ Դ կաթողիկոսը: Ղզլարի հայ հասարակությունը զանազան առիթներով և տարբեր ժամանակներում դպրոցի կառուցմանը նվիրել էր նշանակալի գումար՝ շուրջ 9.000 ռուբլի: Ուսումնարանն ուներ 3 դասարան և 1 նախակրթական բաժին, որոնց սպասարկում էին 5 ուսուցիչ և մի վերակացու: Տարիներ շարունակ դպրոցի պահպանության աղբյուրներն էին քաղաքի 3 եկեղեցիների դրամագլխի տոկոսները, աշակերտների մի մասի վճարած վարձը և հայ համայնքի նվիրատվությունները:

1872 թ. Ղզլարում բացվեց նաև «Մարիամյան» ուսումնարանը³⁷, որը տարիներ շարունակ չունեի սեփական դպրոցական շենք: 1883 թ. ղզլարցի Գ. Մամաջանյանը ընտրվեց օրիորդաց դպրատան շինության հոգաբարձու և իգական ուսումնարանին ընծայեց մի շքեղ, երկհարկանի տուն:

19-րդ դարի 80-ական թթ. կեսերին Ղզլարում բացվեց նաև մասնավոր իգական ուսումնարան, որի նախաձեռնողը Թիֆլիսի Գայանե իգական դպրոցի շրջանավարտ Նինա Անանովան (Շերմազանյանց) էր: Այս տարիներին Ղզլարի արական և իգական ուսումնարաններից յուրաքանչյուրը բաղկացած էր 4 բա-

³⁷ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 85:

ժանմունքից (դասարանից), որոնցում ուսանում էին 109 աշակերտ և 70 աշակերտուհի:

1820 թ. արքունի դպրոցական իշխանությունների ենթակայությամբ բացվեց Մոզդոկի գավառական ուսումնարանը, որը հայ պատանեկության կրթության կարևոր օջախներից մեկն էր: Ըստ Ստավրոպոլի նահանգի վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 1862 թ. Մոզդոկի ուսումնարանն ուներ 128 աշակերտ (ռուսներ՝ 13, վրացիներ՝ 17, հայեր՝ 53, օսեր՝ 40 և լեռնցի՝ 5): Դարավերջին Մոզդոկի քաղաքային երկսեռ ուսումնարանում սովորում էր 90 հայ երեխա³⁸:

Դեռևս 1847 թ. Մոզդոկի հայ հասարակությունը խնդրագրով դիմեց թեմի առաջնորդին և 1849 թ. փետրվարի 16-ին հանդիսավոր պայմաններում բացվեց Մոզդոկի ծխական ուսումնարանը, որը, սակայն, կարճատև կյանք ունեցավ:

1867 թ. Մոզդոկ այցելած Գևորգ կաթողիկոսը քաղաքի նշանավոր անձանց ներկայությամբ հայտնեց իր մտադրությունը՝ եկեղեցական գումարով 400 ձրիավարժ աղքատ մանկանց համար 2 ուսումնարան բացելու մասին: Կաթողիկոսի հորդորներից ոգևորված Մոզդոկի պատվավոր քաղաքացի, վաճառական Գրիգոր Թուշմայանը խոստացավ սեփական ծախսով կառուցել ուսումնարանի քարաշեն շենքը՝ դպրոցի 200 աղքատ մանկանց համար: Այդ վարժարանի բացման հանդեսը կատարվեց 1868 թ. ապրիլին:

Մոզդոկցի Գրիգոր և Քերովբե Թուշմայանները Աստրախանի հայոց կոնսիստորիա առաքեցին ստորագրված պարտավորագիր՝ խոստանալով 7 տարի ժամկետով սեփական ծախսով

³⁸ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 86:

ապահովել հայկական ուսումնարանը, անհրաժեշտության դեպքում վերանորոգել այն, իսկ 7-ամյա ժամկետը լրանալուց հետո՝ մշտապես հանձնել Սուրբ Աստվածածին եկեղեցուն:

Դպրոցի համար նյութական ապահով աղբյուր ստեղծելու նպատակով Մոզդուկի ծխական դպրոցի հոգաբարձուներ Մ. Ուլուխանյանցը, Հ. Թուշմալյանը, Հ. Գյանջումյանցը և Պ. Շլթյանը 1872 թ. կեսերին, յուրաքանչյուրը 500 ռ. ներդնելով, մոմի գործարան հիմնեցին³⁹:

1875 թ. բացվեց Մոզդուկի իգական ուսումնարանը, որի շենքը, այլ հարմարություններից բացի, իր սենյակներից մեկում ուներ թատերական բեմ, որտեղ մոզդուկահայ թատերասերները հայ օրիորդների մասնակցությամբ ներկայացումներ էին տալիս:

1849 թ. Ստավրոպոլում ևս բացվեց հայկական վարժարան, որը սկզբում ուներ 23 աշակերտ: Դպրոցի հիմնադրումից երկու տարի անց նորնախիջևանցի վաճառական Ալաջալով եղբայրներն ուսումնարանի համար նոր շենք կառուցեցին եկեղեցու գավթում, որտեղ արդեն ուսում էին ստանում 30-ից ավելի մանուկներ:

19-րդ դարի 70-ական թվականներից Ստավրոպոլի հայկական ծխական ուսումնարանները ստացան մշտապես գործելու և նյութապես ապահով վիճակում գտնվելու երաշխիք: Դպրոցներում դասավանդվում էին հայոց և ռուսաց լեզուներ, կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն: Դասընթացն ավարտողները կարող էին ընդունվել գիմնազիա⁴⁰:

Հայ պատանիների և աղջիկների կրթօջախներ էին նաև Ստավրոպոլի արական և իգական գիմնազիաները:

³⁹ Տե՛ս «Արարատ», 1873, էջ 465, «Մշակ», 1875, հ. 14, էջ 2:

⁴⁰ Տե՛ս **Քարխուրարյան Վ., Ալեքսանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 87:

Եկատերինոդարում՝ Կուբանի մարզի հայաշատ այս կենտրոնում, դպրոցական կյանքը զգալի աշխուժացում ապրեց դարի 60-ական թվականների սկզբից: Հայոց վարժարանի սկզբնավորման գործում մեծ ծառայություն մատուցեց դեռևս 1856 թ. քաղաքի հայ երիտասարդների կամավոր նվիրատվություններով և բարեգործական նպատակով հիմնված ընկերությունը: Դպրոցի բացմանը և հետագա ապահովմանն օգտակար եղան նորնախիջևանցիները՝ օգնության ձեռք մեկնելով Եկատերինոդարի իրենց ազգակիցներին:

1870 թ. քաղաքում հիմնվեց նաև իգական հայկական դպրոց, որը պահվում էր համայնքի միջոցներով: Այն սկզբում մեկդասյան էր և հիմնադրման հաջորդ տարում ուներ 20 աշակերտուհի և մեկ ուսուցչուհի:

Հյուսիսկովկասյան մյուս հայկական գաղթավայրերում կրթական գործի կազմակերպումը սկսվեց ավելի ուշ՝ 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Կրթական հիմնական օջախները եկեղեցական ծխական դպրոցներն էին, որոնց բացումը և գոյատևումն անմիջականորեն կապվում էր հայ համայնքների նյութական հնարավորությունների հետ:

Վլադիկավկազում ծխական արական դպրոցը բացվեց 1874 թ., իսկ իգական ուսումնարանը՝ 1883 թ.: Այստեղ առավել առաջադիմեց օրիորդաց դպրոցը, որը հիմնադրումից մեկ տարի անց ուներ արդեն 46 աշակերտ, իսկ 1891 թ.՝ գրադարան-մատենադարան՝ 200-ից ավելի գրքերով ու պարբերականներով:

Թերեքի շրջանի հայերի համար կարևոր կրթական օջախ էր 1868 թ. հիմնադրված Վլադիկավկազի արհեստավորական ուսումնարանը⁴¹:

1872 թ. մեկդասյան արական ծխական դպրոց բացվեց Սուրբ Խաչում, քսան տարի անց այնտեղ հիմնվեց նաև իգական մեկդասյան դպրոց: Այս երկու դպրոցներում դարավերջին արդեն ուսանում էին 85 հայ պատանիներ ու աղջիկներ: Պյատիգորսկում ևս թեմակալի առաջարկությամբ և մի քանի հայ երիտասարդների նախաձեռնությամբ 1888 թ. հիմնվեց ծխական մեկդասյան արական դպրոց: 1896 թ. տվյալներով դպրոցում սովորում էր 35 աշակերտ:

Դարավերջին Գրոզնու փոքրիկ հայ համայնքը նույնպես արձագանքեց մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին: 1895 թ. Գրոզնիում հիմնվեց ծխական դպրոց և «Աղքատախնամ հոգաբարձություն», որը հոգում էր չքավոր աշակերտների կարիքները: Ժողովրդի առաջարկությամբ նորակառույց ուսումնարանը, ի պատիվ թեմի առաջնորդի, կոչվելու էր «Խորենյան»:

19-րդ դարում բացվեցին բազմաթիվ ծխական դպրոցներ. Եկատերինոդարում՝ 1863 թ., Եդեսիա գյուղում՝ 1866 թ., Արմավիրում՝ 1869 թ. արական, իսկ 1880 թ.՝ օրիորդաց ուսումնարան, Մոզդոկում՝ 1868 թ., Վլադիկավկազում՝ 1870 թ., Սուրբ Խաչում՝ 1874 թ. և այլն:

Այսպիսով՝ Ռուսաստանի հարավային ծայրամասում ձևավորված հայկական գաղթավայրերը կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը համաքայլ ազգային զարթոնք

⁴¹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 88:

ապրեցին, որը դրսևորվեց նաև ազգային լուսավորության և մշակույթի, առավելապես դպրոցական կյանքի զարգացման մեջ: Միայն Աստրախանի թեմում, որն ընդգրկում էր հյուսիսկովկասյան գրեթե բոլոր հայկական գաղթավայրերը, բացվեցին 14 ազգային դպրոցներ, որոնք ընդհուպ մինչև 80-ական թվականների կեսերը ազգային լուսավորության տարածման հիմնական կրթօջախներն էին:

1884 թ. փետրվարի 16-ի կայսեր կողմից հաստատված «Կովկասի հայ լուսավորչական-եկեղեցական ուսումնարանի մասին կանոնները» առաջին լուրջ հարվածը հասցրին հայ ազգային դպրոցներին⁴²:

1885 թ. մարտի 5-ին Թերեքի մարզի ժողովրդական ուսումնարանների տնօրենը կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուի առաջարկությամբ հրահանգավորեց Թերեքի մարզի պետին՝ փակելու մարզի տարածքում գործող Վլադիկավկազի երկու մեկդասյան, Մոզդուկի երկու երկդասյան և Ղզլարի արական երեքդասյան և իգական երկդասյան եկեղեցական-ծխական հայկական դպրոցները: Նույն թվականին փակվեցին նաև Կուբանի և Դադստանի երկրամասի եկեղեցական-ծխական հայկական դպրոցները:

Հայկական դպրոցների դեմ սկսված հալածանքների պայմաններում հյուսիսկովկասյան հայկական դպրոցների մի մասին հաջողվեց պահպանել գոյությունը՝ դրվելով լուսավորության մի-նիստրության տնօրինության տակ: Գոյատևման նույնպիսի ելք գտան նաև Արմավիրի և մի շարք հայկական գաղութների տար-

⁴² Տե՛ս Վ. Քարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 89:

րական դպրոցները՝ վերաբացվելով որպես նոր սկզբունքով գործող դպրոցներ:

Թատերական արվեստի սկզնավորումն ու զարգացումը Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում նույնպես ընթացան 19-րդ դարի կեսերին տեղի ունեցած հասարակական-քաղաքական տեղաշարժերի անմիջական ազդեցության տակ: Մոսկվայի, Պետերբուրգի և այլ վայրերի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած և հայրենի շրջաններ վերադարձած հայ երիտասարդությանը հուզող հարցերից մեկը ազգի մշակութային ու մտավոր զարգացմանը նպաստելու ձգտումն էր: Արևմտահայերի թատերական կյանքում սկսված աշխուժությանը շուտով արձագանքեցին նաև ռուսահայերը: Ազգային լեզվով թատրոն ունենալուն նախանձախնդիր ղզլարահայերն այդ մարզում առաջին և հաջողակ փորձն արեցին⁴³: 1859 թ. դեկտեմբերի 18-ին 300 քաղաքացիների ներկայությամբ Հ. Քոչաբեկյանի և Մ. Իսահակյանի մասնավոր դպրոցների առաջավոր աշակերտների ուժերով ներկայացվեցին Ս. Մանդինյանցի աշխատասիրած «Հայոց լեզուն կամ հարսնախոսություն Սովիոյի կամ Պետրոս և Բարբարե» բեմադրությունը: Աշակերտական ներկայացումների հիման վրա հետագայում ինչպես Ղզլարում, այնպես էլ հյուսիսկովկասյան մյուս հայաբնակ վայրերում ստեղծվեցին սիրողական թատրոններ:

Հյուսիսկովկասյան հայերի թատերական կյանքում կարևոր դեր են կատարել Կ. Պոլսից, իսկ հետագայում նաև Այսրկովկասից հյուրախաղերի եկած նշանավոր դերասաններն ու դերասանական խմբերը: Կ. Պոլսից ժամանած Թովմաս Ֆասուլյաճյանը

⁴³ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 90:

թատերախումբ է կազմակերպել սկզբում Մոզդոկում, ապա՝ Ղզլարում:

Դեռևս Մոզդոկում եղած ժամանակ Ֆասուլյաճյանը նամակով դիմել էր Ղզլարում ապրող բժիշկ Հովհաննեսյանին՝ այնտեղ նույնպես ներկայացումներ կազմակերպելու մտադրությամբ: Ֆասուլյաճյան ամուսինները 1867 թ. նոյեմբերի սկզբներին ժամանեցին Ղզլար: Նրանց խմբի կազմում էին նաև Մոզդոկից հրավիրված Հ. Կուսիկյանը և Վ. Ցարայանը ու երկու ռուս դերորատորներ: Շուտով Ֆասուլյաճյանի շուրջը համախմբվեցին Ղզլարի առաջադեմ և ուսյալ հայ երիտասարդները, ինչպես նաև քաղաքի հայ մեծահարուստներ Մարգար Մամաջանյանն ու Եսայի Իզմիրյանը: Վերջիններիս ջանքերով և դրամական նվիրատվությամբ էլ գլուխ բերվեցին քաղաքի կենտրոնում գտնվող շենքերից մեկում թատերաբեմի կառուցումն ու թատերական անհրաժեշտ պիտույքների ապահովումը:

Ղզլարի նորակառույց 600 տեղանոց թատերասրահում 1867 թ. նոյեմբերին սկսվեցին Ֆասուլյաճյանների դերասանախմբի ներկայացումները: 1867 թ. նոյեմբերի կեսերից մինչև 1868 թ. մայիսի կեսերը բեմադրվել է 25 թատերական ներկայացում, որոնց մասնակցել են նաև ղզլարահայ երիտասարդներ և օրիորդներ: Ֆասուլյաճյաններին հաջողվել է գործին մասնակից դարձնել նաև ղզլարահայ օրիորդներից Թամար Ասլանյանին, Աննա Աղաբալյանին և ուրիշներին, որոնց բեմ բարձրանալը, հիրավի, նոր և հաճելի անակնկալ էր ղզլարահայ թատերասերների կյանքում⁴⁴: Ղզլարահայ երիտասարդների ջանքերով 1867 թ. վերջապես հաջողվեց Ղզլարում ունենալ առանձին թատերաս-

⁴⁴ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 91:

րահ, որը թեև շատ ընդարձակ չէր, բայց հարմար էր քաղաքի հայ հասարակության համար:

Այսպիսով՝ դպրոցի և գրականության միջոցով լուսավորության ծիլերը հայ իրականության մեջ սերմանող երիտասարդ մտավորականությունը ձեռք մեկնեց նաև թատերական արվեստին, որը ժողովրդին հոգևոր սնունդ մատակարարող, նրա մտավոր ու մշակութային զարգացմանը նպաստող նոր ուժ էր: Սիրողական թատրոնը միաժամանակ դարձավ հայոց լեզվի ամրապնդման յուրօրինակ դպրոց:

19-րդ դարի 80-ական թվականներից հյուսիսկովկասյան հայ թատերասերները ձեռնամուխ եղան կազմակերպչական մի շարք խնդիրների լուծմանը: 1892 թ. Ղզլարահայ թատերասերներին ի վերջո հաջողվեց գնել սեփական շենք, որտեղ և հարմարեցվեց բեմը՝ անհրաժեշտ պարագաներով: Փորձեր են արվել նաև թատերասերների ընկերություններ ստեղծելու ուղղությամբ: Մոզդուկի թատերասերները դեռևս 1884 թ. մշակել են ապագա ընկերության կանոնադրությունը և դիմել կառավարությանը՝ Նոր Նախիջևանի օրինակով հաստատելու թատերասերների խումբը: 1889 թ. Հ. Հարությունյանի ջանքերով կազմվեց Եկատերինոգարի թատերասերների ընկերությունը, իսկ ավելի ուշ՝ Ղզլարի, Արմավիրի և դրամատիկական այլ ընկերություններ⁴⁵:

Հյուսիսկովկասյան հայերի մշակութային կյանքում հայտնի երգչախմբերն իրենց մասնակցությունը բերեցին նաև թատերական ներկայացումներին: 1896 թ. Ղզլար հրավիրվեց Քրիստափոր Կարա-Մուրզան, որը կազմեց 100 հոգուց բաղկացած երգչախումբ: Դարավերջին Կարա-Մուրզան երգչախումբ կազմեց

⁴⁵ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 92:

նան Արմավիրում, Եկատերինոդարում և համերգներով հանդես եկավ Վլադիկավկազում, Պյատիգորսկում և հայաբնակ այլ քաղաքներում:

Հյուսիսային Կովկասի հայ համայնքները մշակութային լայն կապեր էին հաստատել մայր հայրենիքի, ռուսահայ գաղթավայրերի, ինչպես նաև մշակութային այլ օջախների հետ: Այդ կապերի շնորհիվ գաղութահայ գանգվածները մշտապես տեղեկություններ էին ստանում հայ իրականության մեջ տեղի ունեցած հասարակական-քաղաքական և մշակութային իրադարձությունների մասին:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախներն իրենց շուրջ 300-ամյա գոյության ընթացքում նշանակալի դեր խաղացին երկրամասի տնտեսական և հասարակական կյանքում: Նրանց պատմական անցյալը գաղութահայ պատմության ուշագրավ դրսևորումներից է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐԱՍՆՈՂԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները 1900-1980-ական թթ.

Հյուսիսարևմտյան Կովկասի հնաբնակ հայերը հիմնականում բնակվում էին Արմավիր, Եկատերինոդար և այլ բնակավայրերում: Կուբանի տարածքում ժամանակագրական առումով հայերի առաջին խումբը չերքեզահայերն են, որոնք ապրում էին ադիգների մեջ⁴⁶: Այդ խմբի ներկայացուցիչներին գաղթական համարել չի կարելի: Չերքեզահայերի յուրահատկությունը, որոնք ադիգերենը կիրառում էին որպես մայրենի լեզու և ընդունել էին լեռնականների նյութական ու հոգևոր մշակույթի շատ տարրեր, պահպանվում էր հայ լուսավորչական կրոնի շնորհիվ, ինչն էլ պայմանավորեց հստակորեն արտահայտված խմբային ինքնության ու ինքնագիտակցության առկայությունը⁴⁷: Նրանք զբաղվում էին գլխավորապես առևտրով ու արհեստներով, իսկ հետագայում նաև ներգրավվեցին երկրամասի արդյունաբերության մեջ: Նրանք հիմնականում ապրում էին ապահով ու բարեկեցիկ կյանքով: Կուբանի ամենահարուստ հայերն Արմավիրի ձիթհան գործարանի տեր Ավետովներն էին: «Ավետով եղբայրներ» ապրանքային ընկերությունները, որոնք արտադրում էին մինչհեղափոխական Ռուսաստանի էլիտար ձեռք, կառուցել էին

⁴⁶ Տե՛ս **Ա. Тер-Саркисянц**, Армяне. История и этнокультурные традиции, Москва, 1998, с. 285-286:

⁴⁷ Տե՛ս **Ф. Щербина**, История Армавира и черкессогаев, Екатеринодар, 1916:

Ռուսաստանի ամենամեծ ձիթհան գործարանը: Մինչև այսօր Կուբանում պահպանվել են Ավեդովների հարստության և փառքի վկայությունները:

Տարասովների (Թորոսյանների) առևտրատնտեսական կայսրությունը Կուբանի ձեռնարկատիրությունը զարգացնող այլ խոշոր ընկերությունների շարքում զբաղեցնում էր առաջին տեղը: Այս ենթախմբի ներկայացուցիչները, երկար ժամանակ սերտ շփման մեջ լինելով հարևան ժողովուրդների, մասնավորապես ռուսների հետ, 20-րդ դարասկզբին մասամբ ձուլվել են՝ կորցնելով ազգային դիմագծի մի մասը: 20-րդ դարասկզբին տեղի ունեցավ չերքեզահայերի երկրորդ ձուլումը. նրանք անցան ռուսերենին՝ ընդունելով ռուսական նյութական մշակույթը⁴⁸: Չերքեզահայերի առանձին ներկայացուցիչներ մարդահամարի ժամանակ իրենց համարել են հատուկ էթնիկ հանրություն⁴⁹: Միակ կապը թերևս առաքելական եկեղեցին էր: Արմավիրահայ համայնքի կապերը հայրենիքի հետ առաջին հերթին իրականացվում էին եկեղեցու միջոցով: Արմավիրը շարունակ գտնվում էր Էջմիածնի ուշադրության կենտրոնում և մտնում էր Աստրախանի թեմի տնօրինության տակ: Թեմի առաջնորդարանին էին հանձնված կրոնական ծեսերի կատարման հսկողությունը, եկեղեցական գումարների հավաքումը, ուսման գործի կարգավորու-

⁴⁸ Տե՛ս **А. Тер-Саркисянц**, Из истории черкесогаев (черкесских армян) // Армяне Юга России: история, культура, общее будущее. Ростов-на-Дону, 2012, с. 279-284.

⁴⁹ Տե՛ս **Итоги Всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю. Национальный состав и владение языками, гражданство**, т. 4, Краснодар, 2005, с. 7:

մը և այլն: 1910 թ. Արմավիրի հայ հասարակայնությունը էջմիածնի հոգևոր ճեմարանի օգտին նվիրաբերել է 5600 ռուբլի⁵⁰:

Արմավիրի հայկական գաղթօջախի պատմության ուշագրավ էջերից մեկը նրա մշակութային կյանքն էր: Դարերով ապրելով հետամնաց Չերքեզիայում՝ հայերը զրկված էին ազգային-մշակութային զարգացման հնարավորություններից: Տեղափոխվելով Արմավիր՝ չերքեզահայերը նախ եռանդուն կերպով ձեռնամուխ եղան դպրոցական գործի կազմակերպմանը: 1901 թ. Ալեքսանդրյան կոչված վարժարանում և մեկդասյան օրիորդաց դպրոցում ուսանում էին 661 աշակերտ-աշակերտուհիներ:

Մշակութային զարգացման բնագավառում նվաճումներ էին գրադարանների կազմակերպումն ու գրատպությունը: Արմավիրի կյանքում ուշագրավ երևույթ էր հայ պարբերական մամուլի՝ «Մշակ», «Նոր դար» և «Արձագանք» թերթերի տարածումը: 1917 թ. լույս տեսավ Արմավիրի առաջին հայերեն հրատարակությունը՝ «Կարիք» վերնագիրը կրող հասարակական-գրական և քաղաքական շաբաթաթերթը, որը կարևոր տեղ էր տալիս փախստականների նյութական ապահովության, ուսումնական գործի կազմակերպման և այլ հարցերի:

Նորաբնակ հայերը հաստատվել են այստեղ 19-րդ դարի երկրորդ կեսին, առանձնապես 90-ական թթ.: Նրանց հիմնական մասը համշենահայեր էին, մասամբ՝ նաև պարսկահայեր: Հայերի ազգագրական այս խմբի սփռման առանձնահատկությունն այն էր, որ նրանք բնակություն էին հաստատել Սև ծովի ափի երկայնքով մեկ՝ Տուապսեից մինչև Սուխում: Միայն Սոչիի վարչական օկրուգում ստեղծվեց 22 հայկական նոր շեն, իսկ

⁵⁰ Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, էջ 450-452:

1901 թ. օկրուգի հայազգի ողջ ազգաբնակչությունը կազմեց 5140 մարդ⁵¹: Համշենահայերը մեծ դեր ունեցան երկրամասի տնտեսական զարգացման գործում: Հայերի վերաբնակեցմանը նպաստում էր ռուս գործարարների աջակցությունը, քանի որ նրանք լավատեղյակ էին ծխախոտագործության ասպարեզում համշենահայերի մասնագետ լինելուն⁵²: 1903 թ. Սևծովյան նահանգում ծխախոտի մշակմամբ զբաղվում էին 68 գյուղերի բնակիչներ, ընդ որում՝ Սոչիի օկրուգում պլանտացիաների շուրջ 84 %-ը մշակում էին հայերը⁵³: Նրանք նաև հմուտ այգեգործներ էին:

Տարական իշխանության անբարյացակամ վերաբերմունքի պատճառով այս ենթախմբի ներկայացուցիչների միայն չնչին մասն է կարողացել ռուսահպատակ դառնալ՝ հարկադրվելով հողից օգտվել միայն վարձակալական իրավունքով⁵⁴: Չնայած դրան՝ թուրքահպատակ հայերը իրենց քրտնաջան աշխատանքի շնորհիվ բավական ապահով կյանքով էին ապրում: Այդ իսկ պատճառով սխալ կլինի նրանց հավասարեցնել Առաջին աշխարհամարտի ընթացքում երկրամաս եկած անօթևան ու սոված հայ զաղթականների կարգավիճակին:

Ռուսաստանում 1905-1907 թթ. հեղափոխական իրադարձությունները հարկադրեցին վերացնել ազգային դպրոցները և մարզում հասարակական կազմակերպություններ ստեղծելու

⁵¹ Տե՛ս **Ս. Անտոնյան**, Համշենահայության պատմությունից // «Բանբեր Հայաստանի արխիվների», 1979, N 3, էջ 118:

⁵² Տե՛ս **Գ. Минасян**, Переселение амшенских армян на Черноморское побережье Кавказа и первые шаги их хозяйственной деятельности (последняя четверть XIX в.) // «Вестник общественных наук АН Арм. ССР», 1977, № 1, с. 64-73:

⁵³ Տե՛ս **Մ. Минасян**, Армяне Причерноморья, Ереван, 1990, с.133-137:

⁵⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 647:

սահմանափակումները, որը նույնպես խթանեց փախստականների ներգաղթը Հյուսիսարևմտյան Կովկաս: Հայ վերաբնակիչների հիմնական զանգվածը գալիս էր Սև ծովի հարավարևելյան ափից՝ Տրապիզոնից, Սամսոնից, Չորշամբից և այլ վայրերից: Հայ գաղթականների մեծամասնությունն ապրում էր Ուչ-Դերե, Պոլկովնիչե, Վերին Դեֆանովկա, Տենգինկա և այլ գյուղերում: 1908 թ. Սևծովյան նահանգում բնակվում էր 8222, իսկ 1913 թ.՝ արդեն 15 427 մարդ, Առաջին աշխարհամարտի նախօրեին Անապայում՝ 2100, իսկ Նովոռոսիյսկում՝ 1600 մարդ⁵⁵: 1913-1916 թթ. հայ բնակչության թիվը Կուբանի տարածաշրջանում և Սևծովյան նահանգում կազմում էր 40366 մարդ: Երկրամասում հայ բնակչության աճը շարունակվեց նաև հաջորդ տարիներին: Հայ բնակչության՝ ժամանակի առումով երրորդ ներգաղթը Կուբան կապված է Առաջին աշխարհամարտի ողբերգական իրադարձությունների և Թուրքիայում հայերի ցեղասպանության հետ⁵⁶:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Հյուսիսային Կովկասում իրենց գործունեությունն աշխուժացրին Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները: Հատկապես մեծ ժողովրդականություն էր վայելում Դաշնակցությունը: 1917 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Հյուսիսային Կովկասի դաշնակցական կազմակերպությունների և խմբերի ժողովը, որտեղ որոշվեց ստեղծել Հյուսիսկովկասյան կենտրոնական կոմիտե, որի գաղափարական-կազմակերպչական կենտրոնը դարձավ

⁵⁵ Տե՛ս **В. Адобашьян**, Из истории армянского населения на территории Краснодарского края // «Вестник общественных наук», 1968, № 7, с. 53:

⁵⁶ Տե՛ս **С. Минасян**, Армяне беженцы на Северном Кавказе в 1918–1920 гг. // Армяне юга России: история, культура, общее будущее. Ростов-на-Дону, 2015, с. 50:

Արմավիրը⁵⁷: Դաշնակցությունը ակտիվորեն մասնակցեց երկրամասի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Օրինակ՝ 1917թ. ամռանը Եկատերինոդարի քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ Դաշնակցությունը հավաքեց ծայների 1.3 %-ը⁵⁸:

Հյուսիսային Կովկասի հասարակական-քաղաքական կյանքում Դաշնակցության ակտիվ դերակատարությունը պահպանվեց նաև 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: 1918 թ. գարնանը, երբ Եկատերինոդարում տեղի ունեցավ իշխանափոխություն, 1917 թ. դաշնակցական ղեկավարների գլխավորությամբ ստեղծված, 100 հոգուց բաղկացած հայկական ջոկատի ջանքերով հնարավոր եղավ խուսափել արյունահեղությունից և խուճապից: 1918 թ. ապրիլին, երբ ջոկատը հեռանում էր Եկատերինոդարից, քաղաքի իշխանությունները շնորհակալություն հայտնեցին հայկական ջոկատին օգնության համար⁵⁹:

Հայ բուրժուազիայի, առևտրականների և արդյունաբերողների մեծ մասը Փետրվարյան հեղափոխությունից հետո համագործակցեց ժամանակավոր կառավարության հետ, իսկ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո աջակցեց երկրամասի ոչ խորհրդային ուժերին: Երկրամասի հայ բանվորների և հողագուրկ գյուղացիների մեծ մասն աջակցեց խորհրդային իշխանու-

⁵⁷ Տե՛ս **М. Симонян**, Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02, с. 62:

⁵⁸ Տե՛ս **Ս. Մինասյան**, Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., Երևան, 2016, էջ 13:

⁵⁹ Տե՛ս Համշեն և համշենահայություն (գիտաժողովի նիսեր), Երևան, 2007, էջ 78-79:

թյանը⁶⁰: Հայ բնակչության քաղաքական կողմնորոշման վրա մեծ ազդեցություն ունեցրեց տեղական իշխանության վերաբերմունքը: 1917 թ. ամռանը Սևծովյան նահանգի թուրքահպատակ հայերը ժամանակավոր կառավարության կողմից տեղական մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկվելու պատճառով սկսեցին աջակցել խորհրդային իշխանությանը: Կուբանի և Սևծովյան նահանգի հայ բնակչության հիմնական զանգվածը ողջունեց ռուսական հեղափոխությունը, քանի որ ենթադրում էին, թե այն պետք է արմատապես փոխեր հայ ժողովրդի կյանքը, բայց առաջ եկած քաղաքացիական կռիվները կանխեցին դրա իրագործումը:

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Հյուսիսային Կովկասի մեծ մասում ձևավորված խորհրդային իշխանության պահանջով երկրամասի հայոց ազգային խորհուրդները վերանվանվեցին հայ ժողովրդական հեղափոխական կոմիտեների, և նոր ընտրությունների միջոցով նրանց կազմը համալրվեց բոլշևիկ գործիչներով: Փաստորեն՝ խորհրդային իշխանության օրոք ձևավորված Արմավիրի կենտրոնական կոմիտեն իր վրա վերցրեց Արմավիրում գործող Դաշնակցության Հյուսիսկովկասյան կենտրոնական կոմիտեի գործառույթները: Օրինակ՝ 1918 թ. ապրիլին Արմավիրում կազմավորված հայկական ջոկատն ուղարկվեց Սուխում՝ խորհրդային իշխանությանը համակրող ապստամբներին օգնելու⁶¹: Հազարավոր հայեր կամովին, թե հարկադրաբար մտան երկրամասի խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումների բանակների մեջ:

⁶⁰ Տե՛ս **Մ. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 62:

⁶¹ Տե՛ս **Մ. Минасян**, Армяне Причерноморья, Ереван, 1990, с. 117:

Կուբան անցած գաղթականների հիմնական մասը ապաստանեց Արմավիր, Եկատերինոդար, Մայկոպ, Եյսկ, Անապա քաղաքներում, իսկ մյուս մասը՝ շրջանի բազմաթիվ գյուղերում և կազակների ստանիցաներում: 1918 թ. կեսին միայն Արմավիրում կուտակվել էին Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի 18 հազար գաղթականներ⁶²: Կուբանի գյուղերում և կազակների ստանիցաներում ապաստանած հայերի մի հատվածին խորհրդային իշխանությունը ապահովեց հողակտորներով⁶³: Հյուսիսային Կովկաս եկած հայ գաղթականներին առաջինը օգնեցին երկրամասի հայկական կազմակերպությունները: Այդ կառույցների գործունեությունը համակարգում և ուղղորդում էր Արմավիրի կենտրոնական կոմիտեն, սակայն այդ կոմիտեի գործունեությունը 1918 թ. հունիսին Անդրկովկասից Արմավիր եկած հայ բոլշևիկների աշխատանքի պատճառով դադարեցվեց, որից հետո փակվեցին շրջանի որբանոցները, հիվանդանոցները և գաղթականական կազմակերպությունները⁶⁴:

Ռուսաստանում գործող հայկական ազգային կազմակերպությունների նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք ուներ Ռուսաստանի խորհրդային կենտրոնական իշխանությունը: 1918 թ. հունիսի 12-ին ՌԽՖՍՀ ժողկոմխորիը ընդունեց դեկրետ՝ «Հայկական ազգային խորհուրդները, պաշտպանության խորհուրդները, ռազմահեղափոխական կոմիտեները և հայկական

⁶² Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), էջ 62:

⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 66:

⁶⁴ Տե՛ս **Հ. Ալեքսանյան**, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., էջ 25-26:

բուրժուական մյուս կազմակերպությունները լուծարելու մասին»⁶⁵:

Արմավիրի կենտրոնական կոմիտեի նախկին անդամները, որոնց մեջ զգալի թվով դաշնակցականներ կային, փորձեցին հակազդել նման գործունեությանը և դիմեցին Եկատերինոդարի կենտրոնական խորհրդային իշխանությանը՝ ակնկալելով ստանալ վերջինիս աջակցությունը: Հուլիսին Կուբանի խորհրդային կառավարության միջնորդությամբ Հայկական կենտրոնական կոմիտեն ժամանակավորապես տեղափոխվեց Եկատերինոդար: Կուբանի խորհրդային կառավարության որոշմամբ փոխվեց այդ կոմիտեի կառուցվածքը, որը պետք է կազմվեր երեք անդամից՝ մեկ դաշնակցականից, մեկ ձախ էսէռից և մեկ մեծամասնականից, որոնք պետք է կոչվեին կոմիսարներ ու աշխատանքները բաժանեին իրար մեջ⁶⁶: Այդ սկզբունքով պետք է կազմվեին նաև այլ քաղաքներում գործող հայկական կոմիտեները: Դրանք պետք է գործեին խորհուրդներին կից և չպետք է ենթարկվեին Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհրդին, ինչպես նաև չպետք է դրամ ուղարկեին նրան⁶⁷: Սակայն Կուբանի խորհրդային իշխանության վերոհիշյալ որոշումը հակահեղափոխական Կամավորական «սպիտակ» զորաբանակի ռազմական հաջողությունների հետևանքով գրեթե չիրագործվեց:

Հյուսիսային Կովկասում շարունակվող քաղաքացիական կռիվների ժամանակ երկրամասի հայ գաղթականները և հնարնակ հայերը տուժեցին իրենց քաղաքական կողմնորոշման հա-

⁶⁵ Տե՛ս Հ. Ալեքսանյան, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., էջ 17:

⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 80, գ. 158, թ. 47:

⁶⁷ Տե՛ս նույն տեղում:

մար: Հատկապես շատ զոհեր եղան Արմավիրում: 1918 թ. հուլիսին «սպիտակ» գեներալ Պոկրովսկու զորագունդը գրավեց Արմավիրը: Քաղաքի հարուստ հայերի մի մասը զորքին դիմավորեց աղուհացով՝ իր վրա վերցնելով Արմավիրի մոտակայքում տեղի ունեցած մարտերում մահացած «սպիտակ» սպաների թաղման ծախսերը: Երբ գեներալ Պոկրովսկին հեռացավ քաղաքից, այն կրկին անցավ բոլշևիկներին, որոնք վրեժխնդիր եղան ոչ միայն սպիտակներին աջակցած հարուստ հայերից, այլև անմեղ գաղթականներից: Արմավիրում ապաստանած հարյուրավոր հայ գաղթականներ սրախողխող արվեցին: Որոշ հեղինակներ հիշատակել են նաև բոլշևիկների կողմից սպանված մի քանի քաղաքաբնակ հայերի մասին⁶⁸: Ժամանակի վկաներից մեկը, իր հուշերում անդրադառնալով Արմավիրի դեպքերին, գրում է. «Առհասարակ ես այն կարծիքի եմ, որ այս քաղաքացիական կռվին հայ ժողովուրդը չպիտի մասնակցեր, այդ մտքով էլ շրջաբերական էի ուղարկել Հյուսիսային Կովկասի բոլոր քաղաքներին: Չլսեց միայն Արմավիրը, ավելի շուտ՝ մի քանի հարուստներ, որոնք սկզբում հաղթող կազակներին ճաշ էին տվել: Սակայն մի քանի օր հետո քաղաք մտած բոլշևիկները, լսելով այդ ճաշի մասին, կազմակերպել էին ջարդեր, որոնց զոհ էր գնացել 50-60 հայ գաղթական»⁶⁹:

Արմավիրում խորհրդային զորքերի կողմից իրականացված հայերի ջարդերի հետևանքով շատերը փախան քաղաքից: Թիֆլիսում լույս ընծայվող լրագիրը իր հերթական համարում ընթերցողներին տեղեկացնում էր. «Եկատերինոդարից եկածները հաղորդում են, որ Արմավիրի գաղթականները խուճապի մեջ

⁶⁸ Տե՛ս **С. Ю. Рыбас**, Генерал Кутепов, Москва, 2000, с. 350:

⁶⁹ **Ս. Մինասյան**, Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., էջ 45:

փախել են Ստավրոպոլ ու Եկատերինոդար և գտնվում են անօգնական ու խղճուկ դրության մեջ, ցանկանում են հայրենիք գալ»⁷⁰:

Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների ռազմական հաջողությունները հարկադրեցին խորհրդային զորքերին հեռանալ Հյուսիսային Կովկասից: Նրանց հետ հեռացավ նաև Մոսկվայից և Անդրկովկասից Հյուսիսային Կովկաս եկած հայ բոլշևիկների մեծ մասը: Երկրամասում մնացած հայ բոլշևիկներին ոչ խորհրդային պետական կազմավորումները հետապնդեցին և հալածեցին: Ըստ ականատեսի՝ սպիտակները դաշնակցականների աջակցությամբ ձերբակալել և գնդակահարել էին հայ բոլշևիկներին, որոնց թվում կային նաև հայ գաղթականներ⁷¹: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդային իշխանության օրոք Հյուսիսային Կովկասի հնաբնակ հայության մի հատվածը, մասնավորապես հայ բուրժուազիան և դաշնակցական գործիչները, հալածվել և կողոպտվել են (առաջին հերթին հայ բոլշևիկների ջանքերով), չի բացառվում, որ ոչ խորհրդային պետական կազմավորումների օրոք նրանց մեջ լինեին մարդիկ, որոնք կցանկանային վրեժխնդիր լինել:

1918-1919 թթ. ընթացքում Եկատերինոդարում կուտակված հազարավոր գաղթականների շրջանում մոլեգնող տարատեսակ հիվանդությունները ամեն օր բազմաթիվ կյանքեր էին խլում⁷²: Հիվանդ գաղթականներին օգնելու նպատակով 1918 թ. հոկտեմ-

⁷⁰ «Աշխատավոր», 1918, հոկտեմբերի 30:

⁷¹ Տե՛ս **Ս. Ալիխանյան**, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Երևան, 1958, էջ 108:

⁷² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, սեպտեմբերի 24:

բերին քաղաքի Հայոց ազգային խորհրդի ջանքերով բացվեց մի լազարեթ: Սակայն այն չէր կարող սպասարկել քաղաքի բոլոր հիվանդ գաղթականներին: 1918 թ. վերջին Եկատերինոդարում տիրող հակահիգիենիկ դրության հետևանքով սկսվեց տիֆի և ժանտախտի համաճարակը⁷³: Եկատերինոդարի բնակչությունը դրանում մեղադրեց քաղաքում ապաստանած գաղթականներին (որոնց մեծ մասը՝ մոտ 8.000 հոգի, հայ էր) և պահանջեց վտարել նրանց: Քանի որ Կուբանի երկրամասի այլ քաղաքներում և բնակավայրերում հայ գաղթականների թիվը ևս մեծ էր, Կուբանի կառավարությունը չտեղափոխեց նրանց այլ շրջաններ, այլ 1919 թ. մարտից սահմանափակեց նոր գաղթականների մուտքը քաղաք⁷⁴:

1920 թ. հունվարին Նովոռոսիյսկ ժամանած Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթեյանի կողմից քաղաքի հյուպատոս նշանակվեց Ա. Տոնյանը: Նրա ջանքերով բացվեց հայկական հյուպատոսարանը⁷⁵: Նովոռոսիյսկի հյուպատոսարանի գոյության առաջին օրերից նրա առջև ծառայան հայրենիք մեկնող գաղթականներին աջակցելու և դրա համար անհրաժեշտ նյութական միջոցներ հայթայթելու խնդիրները: Հյուպատոսարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով Ա. Տոնյանի նախաձեռնությամբ ձևավորվեց քաղաքի Հայոց ազգային խորհուրդը, որի նախագահ

⁷³ Տե՛ս **Մ. Սիմոնյան**, Армянская диаспора Северо-Западного Кавказа: формирование, конфессиональный облик, взаимоотношения с властью, общественными и религиозными объединениями (конец XVIII - конец XX века), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02, с. 66:

⁷⁴ Տե՛ս **Ա. Մինասյան**, Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., էջ 64-65:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 128:

ընտրվեց Նովոռոսիյսկի հյուպատոսը: Քաղաքում գործող Հայոց ազգային խորհուրդն ուներ ֆինանսական, գաղթականական և մշակութային ակտիվության բաժիններ:

Խնդրո առարկա տարիներին Սոչիի շրջանը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ և քաղաքական տարբեր ուժերի տիրապետության տակ էր գտնվում, որոնք էլ տեղի հայ համայնքին ենթարկում էին տարաբնույթ հալածանքների, բռնությունների՝ փորձելով նրանց ծառայեցնել իրենց ռազմաքաղաքական շահերին: Սոչիում և նրա վարչական շրջանում բնակվում էր շուրջ 25000 հայ¹, որը կազմում էր տեղի բնակչության գրեթե 30 %-ը:

Խորհրդային իշխանության համար մարտնչում էր նաև Սոչիի վարչական օկրուգի հայերի որոշ մասը: 1917 թ. օգոստոսին Նիժնայա Շիլովկա գյուղում Սոչիի հեղկոմը հայ կամավորներից կազմակերպեց կարմիրզվարդիական ջոկատ: 1918 թ. հունվարին՝ Սոչիում խորհրդային իշխանության հաստատումից հետո, կազմավորվեցին խորհուրդներ, որտեղ ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում հայերը:

Օգտվելով Կուբանա-Սևծովյան Հանրապետության կոմունիստական իշխանությունների ծանր դրությունից և ավամերձ շրջաններում բռնկված քաղաքացիական կոիվներից՝ 1918 թ. հուլիսին վրացական զորագնդերը մուտք գործեցին Սոչի: Վրաստանի կառավարությունն այդ քայլը բացատրում և հիմնավորում էր «բոլշևիկյան անարխիային» վերջ տալու իր առաքելությամբ⁷⁶: Քանի որ արբազահայերի մի մասն ակտիվորեն համագործակցել էր խորհրդային իշխանությունների հետ, իսկ ՀՅԴ-ի տեղի ճյուղը մերժել էր հակակոմունիստական դաշինք

⁷⁶ Տե՛ս «Демократическое» правительство Грузии и английское командование // «Красный архив», 1927, № 21, с. 151:

կապելու վրաց մենշևիկների առաջարկը, նրանց «ագենտները... Սոչիի Հայոց Ազգ. Խորհրդի վրայ դրկում էին կոզակներ՝ մեղադրելով հայերին բուլշևիզմի մեջ, անվերջ բամբասանքներ էին անում կոզակների հրամատարութեան մօտ հայերի բուլշևիկութեան մասին...»⁷⁷: 1918 թ. սեպտեմբերին վրացիներին դաշնակից «սպիտակ» կազակների մի զորախումբ ավիրեց ՀԱԽ-ի գրասենյակի գույքը⁷⁸ և բռնություն գործադրեց շենքում գտնվող անձանց նկատմամբ⁷⁹: Այս տհաճ դեպքը մեծ աղմուկ հանեց⁸⁰, քանի որ դրա մասին ՀԱԽ նախագահությունն անմիջապես հեռագրել էր Թիֆլիս՝ Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանին⁸¹: Միջադեպը շտապեց հարթել իսկույն Սոչի ժամանած [«կարծես պատրաստ կը սպասէր»] կառավարական հանձնակատար Գ. Ն. Անջափարիձեն: Հայերը պահանջեցին պաշտոնից ազատել «գիւղական աւազակ կոմիսարներու»⁸²: Այդ հարցում հանձնակատարը տվել էր իր համաձայնությունը և ՀԱԽ-ին իրավունք էր վերապահել նոր թեկնածուներ առաջարկելու այդ տեղերի համար⁸³: Օրինակ՝ Սոչիի քաղաքային խորհրդի նախագահ ընտրվեց էսէռ Սարգիս Տեր-Գրիգորյանը⁸⁴:

Դրվատանքի արժանի սույն խոստումը չիրագործվեց, սակայն թույլ տրվեց, թերևս, ձեռք բերել նաև հայազգի ժողովականների համաձայնությունը՝ շրջանը Վրաստանին վարչական առումով ենթարկելու պաշտոնական Թիֆլիսի համար չափա-

⁷⁷ Տե՛ս Ա. Պոնտացի, Սոչիի վերջին անցքերը // «Աշխատատոր», 23. V. 1919:

⁷⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8:

⁷⁹ Տե՛ս «Հայրենիք», 1931, օգոստոս, էջ 149-150:

⁸⁰ Տե՛ս Հայկական ազգային խորհրդի թալանը Սոչիում // «Մշակ», 5. X. 1918:

⁸¹ Տե՛ս Հայկական միասիայում // «Հորիզոն», 7. IX. 1918:

⁸² Տե՛ս «Հայրենիք», 1931, օգոստոս, էջ 152:

⁸³ Տե՛ս Սոչիում // «Հորիզոն», 4. X. 1918:

⁸⁴ Տե՛ս Մ. Минасян, Армяне Причерноморья, Ереван, 1990, с. 116:

զանց կարևոր հարցում: Դա տեղի ունեցավ գյուղացիական համագումարում, որը մեկնարկել էր 1918 թ. դեկտեմբերի 5-ին Սոչիում:

Գ. Ն. Անջափարիձեն, որը «ընդհանրապես մեղմ և ինտելիգենտ մարդու տպավորություն կ'ընէր», շրջանային հանձնակատար նշանակեց Աշոտ Նաջարյանին: Նա «կարևոր գործիչ մըն էր և լաւ ծանօթութիւններ ունէր Ժորդանիայի և այլ պետական անձերու հետ»⁸⁵: «Խոստումնալից» այս քայլը, սակայն, եղավ լոկ դատարկ մի խայծ, և, ինչպէս ցույց տվեց Ժամանակը, չէր էլ կարող որևէ լուրջ բեկում մտցնել տեղի հայերի հետագա կյանքի մեջ: Հայազգի պաշտոնյան «իր ուղղամտութեամբ անհաճոյ կ'ըլլայ կողոպտիչ կոմիսարներուն և ճակատի սպաներու մէկ մասին». նրանց պահանջով Ա. Նաջարյանը շուտով հեռացվեց իր պաշտոնից: Նրան փոխարինեց ոմն մուս անձնավորություն, որը «ցորեկը կոմիսարութիւն կ'ընէր և գիշերը՝ աւազակութիւն»⁸⁵: Վրաց կուսակցական մամուլը հայտնում էր. «Այլանդակությունների դեմ բողոքները եղան անարդյունք: Կազակների ջոկատի գործերը մեծ զայրույթ էին առաջացրել բնակչության մեջ: Այդ բարկությունը հետագայում ևս չէր վերանում մեր հանրապետության զինվորական հրամատարության անտակտ քայլերի պատճառով»⁸⁶:

Վավերագրերը վկայում են, որ Սոչիի գրավումից հետո վրացական իշխանությունները հայ բնակչությանը ենթարկում էին բռնությունների և կողոպուտի: Շրջանային վարչակազմը մեծ մասամբ կազմված էր վրացիներից, ինչը տեղացիները բացա-

⁸⁵ Տե՛ս «Հայրենիք», 1931, հոկտեմբեր, էջ 135:

⁸⁶ В Грузии: В Сочинском округе // «Борьба», 21. XII. 1918.

սաբար էին ընդունում⁸⁷: Շրջանի հայկական գյուղերում նշանակված վրացի հանձնակատարները վարպետորեն տարատեսակ պատրվակներ էին մոգոնում բնակիչներից կաշառք ստանալու նպատակով: Ոմանք էլ անգամ դրանով չէին սահմանափակվում: Այսպես, Ներքին Լոռ գյուղի հանձնակատար Կվերկվիլիան կեղծ մեղադրանք էր ներկայացրել հայերին՝ իբր ապստամբություն նախապատրաստելու համար: Այնուհետև նա կալանավորված խեղճուկրակ երկրագործներից փրկագին էր պահանջել՝ ռազմական դատարանի առաջ կանգնելուց նրանց ազատելու պահանջով⁸⁸: Նման «հնարքներ» գործադրելուց ետ չէր մնում նաև Վերին (Գոռնոյե) Լոռ գյուղի հանձնակատար Չիչիբայան: Անպարկեշտ և զազրելի այս երևույթները համատարած և արդարացի դժգոհության ու ցասման ալիք էին առաջացնում: Անտարբեր չմնաց նաև Թիֆլիսի հայալեզու մամուլը, որը բարձրաձայնեց ու նախատեց վարչակազմի նման չարաշահումները: «Իւրաքանչիւր վրացի կոմիսար,– հայտնում է ՀՅԴ-ի լրագիրը,– լինելով «վերևից» նշանակված հայ գիւղի համար, իրեն զգում է կայսերական գահի վրայ և իր բռնութիւններով ու գազանութիւններով գերազանցում է անգամ ցարական քեոխվաներին»⁸⁹: Անկարգապահ զինվորականության կողմից գույքի, սննդի և ընտանի կենդանիների ապօրինի բռնագրավումները շուտով փչացրին նրանց փոխհարաբերությունները նաև տեղի ռուս գյուղացիության հետ⁹⁰:

⁸⁷ Տե՛ս **Н. Чернович**, Грузины, добровольцы и Сочинский округ // «Народное знамя», 26. III. 1919:

⁸⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 11:

⁸⁹ Անկախութի՛ն, թե՛ «զուլում» // «Աշխատատր», 23. V. 1919:

⁹⁰ Տե՛ս **Н. В. Воронович**, Меж двух огней (Записки зеленого) // Архив русской революции, т. VII, Берлин, 1922, с. 93:

1918 թ. սեպտեմբերին Սոչի ժամանած ՎԱԽ անդամ Ե. Պ. Գեգեչկորին երկրի վարչապետին իրազեկեց, որ իրենց «դեմոկրատական հանրապետության» հանդեպ շրջանում մինչ այդ եղած համակրանքը և բարյացակամ վերաբերմունքը փոխվել են⁹¹: Սակայն պաշտոնական Թիֆլիսը խուսանավող մի շարք քայլերով և մեքենայություններով դեռ կարողանում էր Սոչին պահել իր ազդեցության տակ: «Վրացիների անկարգությունները, – մեկնաբանում էր ժամանակակիցը, – ատելություն ստեղծեցին առաջին 4-5 ամիսներին նաև ռուս գիւղացիների մէջ, բայց Ի. Ռամիշվիլին, Գ. Անջափարիձեն, Ե. Գեգեչկորին իրենց ստեպ այցելություններով, ճառերով և զանազան տեղի սոցիալիստական գործիչների աջակցութեամբ, որոնք մտել էին վրացական ծառայութեան մէջ... և սարսափում էին Կամաւորական բանակից, մեղմացրին այդ ատելութիւնը՝ հասկացնելով, որ երկու չարիքներից փոքրագոյնը վրացական կարգերն են, քանի որ վրացիները զինուոր չեն վերցնում, իսկ Կամաւորական բանակը խիստ մոբիլիզացիա է անում»⁹²:

Սոչիում գտնվող ռուս սոցիալիստները սարսափահար էին լինում՝ ակնկալելով հակահեղափոխական «սպիտակ» բանակի առաջխաղացման դեպքում իրենց սպառնացող վտանգը: Ըստ Ա. Հակոբյանի մեկ այլ արժեքավոր վկայության՝ նրանց «վախն այնքան մեծ է, որ ա՛լ թունդ պաշտպան են վրացական ռեժիմին, կը նուիրուին անոր հաստատման: Գիւղերը կ'երթան, քարոզություններ կ'ընեն, կը վախցնեն ռուս գիւղացիները, թէ Տէնիքինցիները որ գան, զինուոր պիտի առնեն, իսկ վրացիները այդ տե-

⁹¹ Տե՛ս Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38-40:

⁹² Ա. Պոնտաջի, Սոչիի վերջին դեպքերը // «Աշխատաւոր», 13. V. 1919:

սակ մտադրութիւն չունեն: Այդ միակ տարբերութիւնը բաւական է ռուս գիւղացիութիւնը թեքելու դէպի վրաց տիրապետութիւնը»⁹³: Այսինքն՝ ցանկանալով հեռու մնալ և չներքաշվել Ռուսաստանում մոլեգնող պատերազմի մեջ՝ ռուս գյուղացիութիւնը որոշել էր համակերպվել վրացական տիրապետության հետ: Առավել ևս, որ պաշտոնական Թիֆլիսը խոստանում էր շրջանին տրամադրել լիիրավ ինքնակառավարում: Այսպիսով՝ տեղի սոցիալիստների նշանաբանն էր՝ բնակչութիւնը վրաց «դեմոկրատական հանրապետության» ազատական վարկը պետք է գերադասի «սպիտակ» գեներալների բռնատիրական վարչակարգից⁹⁴:

Ռուսաստանի հարավում հետզհետե հզորացող «Սպիտակ շարժման» առաջնորդները չէին կարող անտարբեր մնալ Սոչիի շրջանի ճակատագրի հանդեպ: Նրանք համառորեն հանդես էին գալիս «միացյալ և անբաժան» Ռուսաստանի կարգախոսով և ոչ մի պարագայում չէին ցանկանում ճանաչել Վրաստանի պատահաբար ձեռք բերած գերիշխանութիւնը Ռոմանովների կազմալուծված կայսրության այս գողտրիկ անկյունում: «Սպիտակ» զորքերի (Կամավորական բանակ) գլխավոր հրամանատար Ա. Ի. Դենիկինը պահանջում էր շրջանը մաքրել վրացական զորամիավորումներից և այնտեղ դարձյալ մտցնել ռուսական կառավարում: Երբ Վրաստանի և Հայաստանի միջև 1918 թ. դեկտեմբերին պայթեց կարճատև պատերազմը, վրաց հրամանատարութիւնը Սոչիի իր ռազմական ստորաբաժանումների նշանակալի մասը շտապ տեղափոխեց Բորչալուի գավառ: Օգտվե-

⁹³ «Հայրենիք», 1931, օգոստոս, էջ 151-152:

⁹⁴ Տե՛ս «Меморандум», Добровольческой армии английскому командованию по поводу взаимоотношений с Грузией // «Кавказское слово», 5. IV. 1919:

լով այդ հանգամանքից՝ սպիտակներն առանց կռվի առաջացան ու գրավեցին ռազմավարական մեծ նշանակություն ունեցող երկաթուղային Լոռ կայարանը⁹⁵: «Սպիտակ» զորքերին ևս մեկ հարված էր մնում՝ Սոչիին վերջնականապես տիրելու համար:

Քանի որ վրաց իշխանությունների կողմից սահմանված ծանր հարկերը բարդացրին առևտուրը և հացահատիկի հայթայթումը, նամանավանդ, որ «Սպիտակ շարժումը» մաքսային պատերազմ էր հայտարարել Վրաստանին, ուստի Սոչի քաղաքի ռուս ունևոր բնակչությունը պատգամավորական ու փաստաթղթային մի շարք որոշումներով դիմեց «Սպիտակ» բանակի հրամանատարությանը՝ վերջինիս խնդրելով անհապաղ գրավել շրջանը⁹⁶: Մեծապետական «Սպիտակ շարժմանը» համակրող տեղացի ռուսները ջանք չէին խնայում հայերին վրացիների դեմ հրահրելու համար: Ա. Հակոբյանի արժեքավոր վկայությամբ՝ «ռուս միապետական և ազատական տարրերն ալ կը խլրտին, շարունակ մեզ կը դիմեն լեզու գտնելու և ընդհանուր գործողութեան դիմելու: Բայց մենք բացարձակապէս կը մերժենք»⁹⁷:

Լոռի-Տաշիրում վրացիների ու հայերի զինաբախումը կտրուկ բարդացրեց Վրաստանում բնակվող հայերի կացությունը: Ըստ ՀԱԽ-ի անդամների վկայության՝ երկրի հայերի «ազգային զգացումների վիրաւորանքները... սովորական երևոյթներ դարձան»⁹⁸: Վրացական վարչակազմի հալածանքները, չարաշահումները և բռնությունները գնալով շատ ավելի դաժան

⁹⁵ Տե՛ս «Народное знамя», 11. II. 1919:

⁹⁶ Տե՛ս **Н. Чернович**, Грузины, добровольцы и Сочинский округ // «Народное знамя», 27. III. 1919:

⁹⁷ «Հայրենիք», 1931, հոկտեմբեր, էջ 135:

⁹⁸ Տե՛ս Սոչիի շրջանի Հայոց ազգային խորհրդի դիմումը // «Աշխատաւոր», 25. III. 1919:

բնույթ էին կրում: Դրանց համար ազդանշան է եղել ՆԳ նախարար Ն. Ռամիշվիլու գաղտնի հրահանգը: Ոստիկանության հատուկ ջոկատները հայերի բնակարաններում սկսել են գիշերային ստուգումներ, որոնք վերածվել են իսկական թալանի և օրեցօր հասել աննախադեպ չափերի: Փակվել են հայերի խանութներն ու կրպակները, կնքվել են ոչ վրացական պարբերականների գրասենյակները: Վրաց թերթերում բացահայտ շովինիստական բովանդակություն ունեցող և հերյուրանքներով լեցուն նյութեր են զետեղվել, որոնք միաբերան կոչ են արել դաժան պայքար ծավալել երկրի ողջ հայ ազգաբնակչության դեմ, բռնագրավել նրա ունեցվածքը և քշել նրանց Վրաստանից: Զառանցանքը հասել էր այն աստիճանի, որ ազգային դեմոկրատների ազդեցիկ կուսակցության պարբերականը պնդում էր. «Այժմ հայերի դեմ մենք մղում ենք իրական ռասայական պայքար: Այս պատերազմը պետք է որոշի, թե ո՞վ կգերիշխի Կովկասում»⁹⁹: Այսպիսով՝ այդ չարաբաստիկ օրերին հայ ազգաբնակչությունը զրկվեց ամեն տեսակի իրավունքներից, նրա պատիվը, ազատությունը, ունեցվածքն ու գույքը դարձան ոստիկանների ազատ քմահաճույքի առարկա: «Եւ եթէ այս տեղի է ունեցել այստեղ՝ Թիֆլիսում, – արձանագրում էին ՀԱԽ-ի անդամները, – դժվար չէ պատկերացնել հայերի դրութիւնը Վրաստանի գաւառներում, որոնք թողնված են սեփական բաղդին և ողորմաճութեանը տեղական ադմինիստրացիայի, որ սնւում և դաստիարակւում է վրաց մամուլի հայերի դէմ ուղղված բացարձակ պրօպագանդայով»¹⁰⁰:

⁹⁹ «Սաքարթվելո», 29. XII. 1918 (վրաց.):

¹⁰⁰ Դիմում Վրաց դեմոկրատական հանրապետութեան կառավարութեան նախագահին // «Մշակ», 12. I. 1919:

Էթնիկ զտման «օրինական հիմունքները» նախապատրաստելու համար վրաց մամուլի և հանրային կարծիքի կողմից հայերին սկսեցին վերագրվել «բուլշևիկեան յեղաշրջման» ծրագրեր, «Վրաստանը ներսից պայթեցնելու դաւեր»¹⁰¹: Քանի որ հայերի վիճակը Սոչիի շրջանում օրեցօր ծանրանում էր, տեղի ՀԱԽ-ը մի գաղտնի դիմում էր պատրաստել՝ ուղղված Եկատերինոդարում գտնվող անգլիական զինվորական առաքելությանը՝ «խնդրելով որ միջոցներ ձեռք առնուին այս անիշխանության վերջ մը տալու և չէզոք գօտի յայտարարելու Սոչիի շրջանը»¹⁰²: Ա. Ի. Դենիկինը, սակայն, խիստ բացասաբար էր տրամադրված բրիտանացիների միջնորդության, նաև Սոչիում վերջիններիս զինված «խաղաղարարների» հայտնվելու հեռանկարի հանդեպ: «Սպիտակ» զորավարները անհամբեր սպասում էին այն երանելի օրվան, երբ հենց իրենք կգրավեն վիճահարույց այդ շրջանը:

Հակահայկական հիստերիան, որը ողողել էր վրացալեզու մամուլի էջերը, չէր կարող իր անմիջական հետքը չթողել նաև զինծառայողների գիտակցության վրա: «Վրաց զինվորականները, – վկայում է դեպքերի ժամանակակիցը, – դէպի հայերը վերաբերում են բաւական կոպիտ ու կասկածով. հայերին համարում են թշնամի վրաց հանրապետության»¹⁰³:

Սոչիում և նրա հարակից բնակավայրերում հաճախ տեղի էին ունենում գողություններ և ավազակություններ: Կռռավարության լիազոր Մ. Խոչոլավան երկրի վարչապետին հասցեագրված իր զեկուցագրում ընդունում էր հիշյալ երևույթների առկայությունը: «Ես անձամբ տեսել եմ, – գրում է նա, – հետևանքներ

¹⁰¹ «Հայրենիք», 1929, մարտ, էջ 118:

¹⁰² «Հայրենիք», 1931, հոկտեմբեր, էջ 137

¹⁰³ «Հորիզոնի» թղթակիցներից // «Հորիզոն», 4. X. 1918:

րը մի շարք անթույլատրելի գործերի, հափշտակումների և կոպիտ վերաբերմունքի բնակչության նկատմամբ զինվորների կողմից»¹⁰⁴:

1919 թ. հունվարի 31-ին Վերին Լոռ և Կուբանսկոյե գյուղերի հայ բնակիչների ու թալանով զբաղվող վրաց մի խումբ զինվորների միջև տեղի ունեցավ ընդհարում, ընդ որում՝ վերջիններից մեկը թեթև վիրավորվեց և գերի ընկավ: «Գիւղացիները ազատ կ'արձակեն սարսափած զինուորը իր զէնքով, միայն կը խրատեն, որ այլևս ոտք չկոխէ գիւղի սահմանները»¹⁰⁵: Կարգազանց զինվորները սեփական մեղքը թաքցնելու համար միջադեպի իրական պատճառների մասին իրենց հրամանատարությանն ասել էին, թե «գիւղացիները յանկարծակի կը յարձակին իրենց վրայ»: Լուրը իմանալուն պես ավագ սպան կարգադրել էր պատժիչ մի զորախումբ ուղարկել հայ խաղաղ երկրագործների դեմ՝ իբր նրանց ապստամբությունը ճնշելու համար: Դեռ տեղ չհասած՝ կատաղած զինվորները համազարկով սպանել էին մի տարեց հովվի¹⁰⁶:

Հայ գյուղացիներն այդ պատժիչ ջոկատին թույլ չտվեցին մուտք գործել իրենց բնակավայրերը: Դրանց մատուցների մոտ իսկական ճակատամարտ տվեցին: Զենք վերցրած երկրագործներին գլխավորում էր Գաբրիել Մատիլյանը: Նա դեռ պատմական հայրենիքում թուրքերի դեմ «կռիւներու մէջ եփած» մի քաջ անձնավորությունն էր¹⁰⁷: Վրաց ջոկատի և հայերի միջև ընդհարումը տևեց մի քանի օր: Այդ ողբերգական օրերին հայերը ևս

¹⁰⁴ Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22-27:

¹⁰⁵ «Հայրենիք», 1931, հոկտեմբեր, էջ 138:

¹⁰⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ.:

¹⁰⁷ Տե՛ս «Հայրենիք», 1931, հոկտեմբեր, էջ 138:

գոհեր տվեցին. զինվորների ձեռքը պատանդ ընկած Ուչ-Դերե ավանի երկու անմեղ բնակիչ ուղեկալի կողմից սվինահարվել էին¹⁰⁸:

Սոչիի ՀԱԽ-ը և հայ հասարակայնությունը դիմումով կարողացան իրենց բողոքի ձայնը հասցնել Թիֆլիս՝ բրիտանական զինվորական առաքելությանը: Դրա բովանդակությունն անգլիացիները իսկույն հայտնել էին Վրաստանի կառավարությանը¹⁰⁹: Ազգակիցների պահանջատիրությանն առաջինը շտապեց նեցուկ կանգնել Վրաստանի ՀԱԽ-ը, որի արտահերթ նիստում որոշվել էր դիմել «կառավարութանը՝ խառը կոմիսիա կազմելու ու ուղարկելու տեղ գործերը քննելու ու հարթելու համար»¹¹⁰:

Սոչիի ՀԱԽ-ի ելույթին սատար կանգնեց նաև էսեռների տեղական կոմիտեն: Նա նախատում էր վարչակազմին, որ բռնությունների դեմ ըմբոստացած գյուղացիներին «ճնշում են դաժանությամբ հիշեցնող ցարական ժամանակների պատժիչ արշավանքները»¹¹¹: Փորձելով քավել այդ մեղքերը՝ վրաց ազգային տեղի խորհուրդը (Մ. Խոփերիա և ուրիշներ) դիմել էր ՀԱԽ-ին հատուկ ուղերձով: «Վրաց հասարակությունը,– մասնավորապես ասված է սույն վավերագրում,– արտահայտում է իր ափսոսանքը որոշ վրաց զինվորների կողմից կատարած էքսցեսների վերաբերյալ: Միաժամանակ վրաց հասարակությունը պատվիրակների միջոցով բարեխոսել է բարձրագույն ռազմական և քաղաքական իշխանությունների առջև հայ բնակչության և զորքերի միջև հակամարտությունն անհապաղ վերացնելու մասին: Վրաց հասարակությունը

¹⁰⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 14:

¹⁰⁹ Տե՛ս ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 38, թ. 17-21:

¹¹⁰ Տե՛ս Վրաստանի հայոց ազգային խորհուրդ // «Մշակ», 9. II. 1919:

¹¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7:

րակությունը հույսով է, որ բարեկամությունը հայ և վրաց եղբայր ժողովուրդների միջև չի խախտվի, և առաջացած թյուրիմացություններն ու առանձին մուսուլմանական սադրանքները հետագայում կկանխվեն ոգով բարեկամ երկու ժողովուրդների միացյալ ուժերով»¹¹²: Շրջանում գործող կուսակցական և ազգային կազմակերպությունների արտահերթ համաժողովը ևս դատապարտել էր հաճախակի դարձած բռնությունների պրակտիկան խաղաղ բնակչության նկատմամբ՝ առաջ քաշելով ռազմական գործողությունները անհապաղ դադարեցնելու մասին պահանջ¹¹³: Այսպիսով՝ հայաստյաց տրամադրություններով տողորված տարրերի սադրանքը տապալվեց, ինչն ականա հանգեցրեց նաև Սոչիում վրաց տիրապետության անկմանը:

«Սպիտակ» զինահրամանատարները ուշի ուշով հետևում էին առափնյա այս շրջանում տիրող կացությանը: Ա. Ի. Դենիկինը գրում է. «Սահմանը հատած ռուսները և առավելապես հայերը՝ հարակից գյուղերի բնակիչները, մեր առաջնային պահակակետերն էին հասցնում իրենց հետ այնտեղ կատարվող խոշտանգումների մասին տեղեկություններ և օգնություն էին հայցում»¹¹⁴: Լսելով Վերին Լոռ և Կուբանսկոյե գյուղերի շուրջ ծավալված ընդհարման մասին՝ Դենիկինը, ցանկանալով իբր դադարեցնել արյունահեղությունը, 1919 թ. փետրվարի 5-ին իրեն ենթակա զորքերին հրամայեց գրավել վիճահարույց շրջանի ողջ տարածքը¹¹⁵: Հայերի նկատմամբ «սպիտակ» գեներալների «սրտագին»

¹¹² ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7:

¹¹³ Տե՛ս նույն տեղում, թ. 4-5:

¹¹⁴ **А. Деникин**, Очерки русской смуты. Книга третья – Вооруженные силы Юга России, Москва, 2005, с. 222.

¹¹⁵ Տե՛ս «Меморандум», Добровольческой армии английскому командованию по поводу взаимоотношений с Грузией // «Кавказское слово», 5. IV, 1919:

վերաբերմունքը թերևս պայմանավորված էր քաղաքական շահով: Նրանք նպատակ ունեին հայերի օգնությամբ գրավելու Սոչին: Վրաց զինվորականության ձեռքով վնաս կրած հայկական սահմանամերձ գյուղերի հարյուրավոր բնակիչներ շտապեցին միանալ հարձակման անցած Կամավորական բանակի զորագնդին: «Սպիտակներն» իրենց հերթին աշխատեցին զինել Սոչիի, Ադլերի և Գագրայի հայերին՝ նրանց հրահրելով վրաց իշխանության դեմ: Առավել խոշոր ընդհարում եղավ Մացեստայի մոտ, որտեղ հայերը ետ մղեցին հակազորի անցած հակառակորդին¹¹⁶: Ամեն կողմից օղակված վրացական կայազորները պարտադրված էին անձնատուր լինել: Դեպքերն այնուհետև զարգացան կայծակային արագությամբ. 1919 թ. փետրվարի 6-ին և հաջորդ երեք օրում սպիտակները ռազմակալեցին Լոռ և Բզիբ գետերի արանքում գտնվող տարածքը:

Այսպիսով՝ «սպիտակ» զորավարները հմտորեն օգտագործեցին վրացական կամայականությունների հանդեպ Սոչիի շրջանի հայության ունեցած ցասումը: «Զորավար Չերեպով, որ հանդիսաւոր կերպով մուտք կը գործէ քաղաք և Հայոց Ազգ. Խորհրդի շէնքին առջևէն անցած ատեն բարձրաձայն շնորհակալութիւն կը յայտնէ եղբայր և քաջ հայերուն»¹¹⁷: Ի դեպ, այսպես, ի հայտ եկավ, աճեց և ծաղկեց ՀՅԴ տեղի ճյուղի և սպիտակ մեծապետականների հակավրացական «գաղտնի դաշինքի» մասին առասպելը: Այդ մասին իր հուշերում վկայում է վրացիների մոտ ծառայության անցած մի ռուս սպա: «Կամավորականների գործակալները,– գրում է նա,– օգտվելով հայերի և վրացիների միջև եղած ազգային թշնամանքից, կապ էին հաս-

¹¹⁶ «Հայրենիք», 1931, նոյեմբեր, էջ 143:

¹¹⁷ Նույն տեղում:

տատել դաշնակցականների տեղի կոմիտեի հետ, որոնց միջոցով նախապատրաստում էին հայերի ելույթն ընդդեմ վրացական տիրապետության: Թեպետ կամավորականները հարձակվեցին ավելի վաղ, քան բռնկվեց ապստամբությունը, հայերի ջրկատները, աջակցելով նրանց, հարվածեցին վրացական զորքերի թիկունքին»¹¹⁸:

Վրաց մամուլը, բնականաբար, շտապեց յուրովի մեկնաբանել սույն դեպքերը: «Մենք գիտենք, – գրում է ժամանակակիցը, – հայ տարրը օգնութեան գնաց Կամաւորական զօրքերին... Դա դաշնակցականների ագիտացիայի չար հետևանքն է, որը նրանք մղում էին շրջանում դէպքերից առաջ, և, որը ռեակցիայի ցեխը գցեց հայ գիւղացուն»¹¹⁹: Վրաց պետական այրերն իրենց ելույթներում արդեն սովորական էին դարձրել Վրաստանի դեմ ՀՅԴ-ի «չար» քարոզչության մասին հեքիաթը: Նրանք այդ սուտը հորինեցին, թերևս, հայ ժողովրդի նկատմամբ սեփական բարբարոսությունների իրական դրդապատճառները քողարկելու և թաքցնելու համար: Պարզ է, որ վրաց ազգայնականները իրենց ձախողման պատճառը «կը վերագրէն հայերուն և կը սպառնային վրէժ լուծել»¹²⁰: Նախարար Ն. Ռամիշվիլին Վրաստանի խորհրդարանի ամբիոնից պաշտոնապես Սոչիում գործող ՀՅԴ ճյուղին վերագրեց Դենիկինին աջակցելու մեղքը¹²¹:

Այսպիսով՝ Սոչիի դեպքերը Վրաստանում առաջացրին հակահայկական քարոզչության մի նոր և խոշոր ակիք, որը կարող

¹¹⁸ Н. Воронович, «Зелёные» повстанцы на Черноморском побережье // Деникин-Юденич-Врангель: Мемуары, Москва-Ленинград, 1931, с. 162.

¹¹⁹ «Էրթոբան» հայերի մասնակցութեան մասին Սոչիի դեպքերին // «Ժողովրդի ձայն», 15. II. 1919:

¹²⁰ «Հայրենիք», 1931, նոյեմբեր, էջ 145:

¹²¹ «Закавказское слово», 25. II. 1919.

էր ունենալ շատ ավելի հեռուն գնացող հետևանքներ: Դարձյալ վտանգվում էր վիրահայության անդորրը, որը չէր էլ բուժել հայ-վրացական պատերազմի օրերին իրեն հասցված վերքերը: Հետևաբար Ա. Հակոբյանը պարտադրված էր անմիջապես հերքել վրացական կողմի կեղծ մեղադրանքը: «Վրացական կառավարութիւնը և մամուլը, – գրում է նա,– էլի «զագովոր» տեսնի այս գործերի մէջ: Բայց պնդում ենք, որ Սոչիի Ազգ. Խորհուրդը ոչ մի կապ չունի այս պատմութեան մէջ, և միայն վրաց վարչական մեքենայի ապիկարութիւնը և զինուորների ու պաշտօնեաների ծայրայեղ անկարգութիւնները առաջ բերին իրդեհ և անկում վրաց կառավարութեան՝ Սոչիի շրջանում»¹²²:

1919 թ. սկզբին Կամավորական բանակի կողմից Սոչիի գրավումից հետո շրջանի բնակչության դրությունը չբարելավվեց: Նոր իշխանությունները շարունակեցին բնակչության կողոպուտը: Կամավորական բանակի՝ Սոչիի շրջանում 18-40 տարեկան տղամարդկանց զորակոչ հայտարարելուց հետո բնակչության մեջ սկսվեց դժգոհությունների նոր ալիք: 1919 թ. ապրիլին այն վերաճեց զինված դիմադրության: 1919 թ. նոյեմբերին ձևավորվեց Սևծովյան ազատագրության խորհուրդը, որը ստանձնեց ապստամբության ղեկավարումը: Ապստամբներին աջակցեց նաև վրացական կառավարությունը¹²³:

1919-1920 թթ. ընթացքում Հ. Սաղաթեյանի կողմից նշանակված ժամանակավոր հյուպատոսները զգալիորեն աջակցեցին երկրամասի հնարնակ և գաղթական հայությանը: Օրինակ՝

¹²² «Աշխատանք», 25. III. 1919:

¹²³ **Б. Маилян**, К вопросу о территориальном конфликте на Черноморском побережье Кавказа (июль 1918 г.– май 1920 г.)// Историческое пространство. Проблемы истории стран СНГ (сборник научных статей, издание Международной Ассоциации институтов истории стран СНГ), Москва, 2013, с. 206-207.

Հ. Սաղաթեյանը Սոչիում լիազոր նշանակեց Արամ Հակոբյանին¹²⁴, որի ջանքերով 1919 թ. երկրորդ կեսից քաղաքի Հայոց ազգային խորհուրդը և երկրամասի հայությունը դադարեց մասնակցել Կամավորական բանակի և ապստամբների ընդհարումներին¹²⁵:

Կամավորական բանակի հրամանատարությունը ապստամբությունը ճնշելու համար օգտագործեց ոչ տեղացի հայերից կազմված կապիտան Ն. Չմշկյանի հայկական գումարտակը, որտեղ ծառայում էր 150-300 հայ զինվոր¹²⁶: Շրջանի ապստամբների շարքերում ևս մեծ թվով հայեր կային¹²⁷: 1920 թ. հունվարի վերջին ապստամբները գրավեցին Սոչիի շրջանը: Կամավորական բանակի կազմում գործող հայկական գումարտակը ապստամբների դեմ կռվելիս զգալի կորուստներ ունեցավ: Կամավորական բանակի նահանջի ժամանակ հայկական գումարտակի զինվորների մեծ մասը մնաց Սոչիում և ձերբակալվեց ապստամբների կողմից: Ա. Հակոբյանի ջանքերով նրանց ազատեցին այն պայմանով, որ վերջիններս ուղարկվեն Հայաստանի Հանրապետություն¹²⁸:

Երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին տեղեկացավ Հյուսիսային Կովկասի հայության զորակոչի մասին, փորձեց կանխել այն: Օրինակ՝ Սոչիի շրջանի հայության իրավունքները պաշտպանելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը 1920 թ. հուլիսին Վրաստանում դիվանագի-

¹²⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 118:

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 1:

¹²⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 409, թ. 3:

¹²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 100, թ. 81:

¹²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 4:

տական առաքելության ղեկավար Տիգրան Բեկզադյանին կարգադրեց վերականգնել Ա. Հակոբյանի լիազորությունները: Տ. Բեկզադյանը նրան նշանակեց Սոչիի շրջանի փոխիյուպատոս¹²⁹: Սակայն Ա. Հակոբյանին չհաջողվեց զորակոչից պաշտպանել Սոչիի շրջանի հայությանը: Ավելին, հալածվելով բոլշևիկների կողմից՝ նա և հյուպատոսարանի քարտուղար Հակոբ Թոռլաքյանը ստիպված հեռացան շրջանից¹³⁰: Բոլշևիկները ձերբակալեցին նաև Հայոց ազգային խորհրդի (որը վերանվանվել էր գյուղացիական միության) նախագահ Վաղարշակ Մինասյանցին և այլ գործիչների, գլխավորապես դաշնակցականների¹³¹:

Հյուսիսային Կովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայ բոլշևիկները և նրանց կողմից ստեղծված կառույցները երկրամասի հնաբնակ և գաղթական հայության շրջանում խորհրդային գաղափարներ տարածելու և Դաշնակցությանը վարկաբեկելու նպատակով ակտիվ քարոզչություն սկսեցին: Այդ նպատակին ծառայեցվեցին երկրամասում վերաբացված հայկական թերթերը¹³² («Բանվորի ձայն», «Բանվորի կարիք»՝ Արմավիրում, «Կարմիր աստղ»՝ Եկատերինոդարում (Կրասնոդար) և այլն¹³³): Օրինակ՝ «Կարմիր աստղ» թերթը հրատարակվել է 1920-1921 թթ. շաբաթը երեք անգամ, երեք հազար օրինա-

¹²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 536, թ. 19, 21, 28:

¹³⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 551, թ. 28:

¹³¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 3, գ. 4, թ. 87 ց.1, գ. 607, թ. 54:

¹³²Армяне Ставрополя и Терека, под общей редакцией канд. ист. наук. В. Аккопьяна, Пятигорск, Государственное образовательное учреждение высшего профессионального образования “Пятигорский государственный лингвистический университет”, Ставропольское региональное отделение “Союз армян России”, 2007, с. 16:

¹³³ Հ. Ալեքսանյան, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., էջ 177:

կով: Լրագրի խմբագրության նպատակը Կուբանի և Հյուսիսային Կովկասի ողջ հայության համախմբումն ու նրանց մեջ խորհրդային գաղափարների տարածումն էր¹³⁴:

Ըստ 1926 թ. համամիութենական մարդահամարի տվյալների՝ սևծովյան շրջանում ապրում էր 27.729 հայ¹³⁵: Մեծաթիվ հայեր կենտրոնացված էին Սոչիի շրջանում: Հայկական տնտեսությունների ավելի քան 70 %-ը Սոչիի շրջանում էր: Տնտեսությունների թվաքանակով Սևծովյան շրջանի հայ բնակչությունն զբաղեցնում էր 4-րդ տեղը՝ զիջելով միայն ռուսական, ուկրաինական և հունական տնտեսություններին: Բարձրացել էին մարզի հայ բնակչության քաղաքական ակտիվությունն ու մշակութային մակարդակը:

ՌԿ(Բ)Կ Կուբան-սևծովյան մարզկոմի կազմում ազգային փոքրամասնությունների ենթաբաժինը ձևավորվել էր 1920 թ. ապրիլին: Այն ուներ նաև հայկական սեկցիա: Նման սեկցիաներ կազմակերպվեցին նաև Նովոռոսիյսկի, Եկատերինոդարի և Արմավիրի կուսակցական կոմիտեներին կից: Նույն ժամանակ Մարզկոմի ժողովրդական լուսավորության բաժնի ազգային փոքրամասնությունների ենթաբաժնի կազմում կազմակերպվում էր հայկական սեկցիա: Այդ սեկցիաների հիմնական խնդիրն էր նկատի ունենալ և սպասարկել տվյալ ազգային փոքրամասնության մշակութային ու կենցաղային առանձնահատկությունները, բարձրացնել աշխատավոր զանգվածների սոցիալական ու դասակարգային ինքնագիտակցությունը, նպաստել խորհրդային իշխանության աջակցման գործին, ազ-

¹³⁴ Տե՛ս Армяне Ставрополя и Терекa, под общей редакцией канд. ист. наук. В. Акопяна, с. 226:

¹³⁵ Տե՛ս Всесоюзная перепись населения на 1926 г., Москва, 1928, т. 5, с. 314:

գային լեզվով ներկայացնել, տեղեկացնել կոմկուսի քաղաքականությունը տարբեր ոլորտներում: Սևծովյան նախկին նահանգում գործող հայկական սեկցիան իր գոյության առաջին իսկ ամսում մի շարք հանդիպումներ է կազմակերպել և դասախոսություններ իրականացրել հայության շրջանում՝ ծանոթացնելով նրանց խորհրդային պետության հասարակական ու քաղաքական նպատակներին: Կոմկուսի մարզկոմի հաշվետվություններում ընդգծվում էր երկրամասի հայության դրական տրամադրությունը խորհրդային իշխանության և նրա կիրառած քաղաքականության հանդեպ: Այսպես, արդեն 1921 թ. նոյեմբերին կոմկուսի տեղի մարզկոմի վավերագրերում նշված է, որ հայկական զանգվածները բարեհաջող են տրամադրված Նէպի միջոցառումների նկատմամբ: Հայկական սեկցիայի գործունեությունը տեղի հայության շրջանում տնտեսական ու մշակութային ձեռնարկներ իրականացնելիս և քարոզելու առումով բավական մեծ էր: Կուբանի և Սևծովյան շրջանների միացյալ մարզի հայության հասարակական կյանքում կարևոր նշանակություն ունեցավ 1921 թ. մայիսին այստեղ անցկացված ազգային փոքրամասնությունների երկրորդ կուսակցական նստաշրջանը, որը մատնանշեց ազգային սեկցիաների մշակութային ու տնտեսական հիմնական խնդիրները:

Այսպիսով՝ խորհրդային իշխանությունը կոմկուսի ազգային սեկցիաների միջոցով խթանում էր երկրում Նէպի քաղաքականության սկզբունքների քողի տակ իր ազդեցության տարածումը:

Կոմկուսի Սոչիի հայկական սեկցիան լայն աշխատանք ծավալեց նույն օկրուգի մեծաթիվ հայ գյուղացիությանը կոոպերատիվների և արտելների մեջ ներգրավելու ուղղությամբ: Սևծովյան օկրուգի հայկական առաջին հողագործական արտելները

կազմակերպվեցին 1920 թ. վերջին: Օկրուգի հայ բնակչության շրջանում կոոպերացիայի կազմակերպման հիմնական ձևերը ծխախոտի համատեղ աճեցման, մշակման և հավաքելու ընկերություններն էին: Այն շրջաններում, որտեղ բանջարանոցապահությունն ու այգեգործությունը առաջնակարգ տեղ էին զբաղեցնում հայերի տնտեսության մեջ, կազմակերպվեցին հողագործական-բանջարանոցային, այգեգործական-ծխախոտագործական և ուրիշ միավորներ: Այսպես, Սևծովյան օկրուգում հայկական ծխախոտագործական առաջին ընկերությունները հիմնվել են 1921 թ., նախ՝ «Վարդաշենը», ապա՝ «Լույս», «Արշալույս», «Կարմիր մաճկալ» ընկերությունները և այլն, որոնք սոցիալական կազմով աղքատ և միջակ գյուղացի հողօգտագործողներ էին:

1925 թ. Սևծովյան օկրուգում հիմնված «Ծխախոտագործների միության» ազգային կազմում հայերը մեծամասնություն ունեին՝ 3105 մարդ (ընդամենը՝ 5757 անդամ): Հարկ է ընդգծել, որ Սևծովյան օկրուգում հայերը կոոպերատիվ շարժման առավել ակտիվ մասնակիցներ էին, հատկապես առանձնանում էր Սոչիի շրջանը, որի առանձին հայկական գյուղխորհուրդներում տնտեսական այդ եղանակը տիրապետող էր՝ ընդհուպ 60-70 %, մինչդեռ ամբողջ շրջանի համար այդ կշիռը կազմում էր մոտ 33 %: Ծխախոտագործ հայության շրջանում տարվող կոոպերատիվ աշխատանքները գտնվում էին Հյուսիսկովկասյան երկրկոմի ուշադրության կենտրոնում, և նշված հանգամանքը առանձնահատուկ կարևորվում էր: Պատահական չէր, որ 1926 թ. Հյուսիսկովկասյան երկրկոմը Սոչիի շրջկոմի աշխատակազմում հաստիք առանձնացրեց հայության շրջանում աշխատանքների ուժեղացման նպատակով: Կոոպերացիայի զարգացման գործընթացին

երկրամասի հայության ներգրավման հետագա աշխատանքներն ընդգրկվեցին հողօգտագործման կազմակերպման ասպարեզում, որտեղ իշխող սկզբունք էր ոչ թե հատկացվող հողի տնօրինման, այլ աշխատանքային օգտագործման եղանակը: Հայկական գյուղխորհուրդների կտրվածքով 1927-1928 թթ. հողաբաժանման գործընթացն ավարտվել էր և օկրուգում ձևավորվել էին մի քանի խոշոր կուլեկտիվ միավորումներ՝ Միկոյանի անվ., «Պայքար», «Նորաստեղծ» և այլն:

1928 թ. տվյալներով Սևծովյան օկրուգի հայության հիմնական մասն ապահովված էր հողակտորներով և իր տնտեսությունների թվով (3417) ու անձին ընկնող եկամուտներով առաջնակարգ դիրքեր էր զբաղեցնում, իսկ հետագայում ակտիվորեն ներգրավվեց կոլտնտեսությունների մեջ¹³⁶:

1925 թ. Մայկոպի օկրուգում ձևավորվեց Հայկական ազգային շրջանը, որի կենտրոնը Ելիսավետպոլ գյուղն էր, որը հետագայում վերանվանվեց Շահումյան: Շրջանն ուներ յոթ գյուղխորհուրդ (Չեռնիգոլյան, Կուբանահայկական, Ռեժետյան, Գոյտխյան, Ելիսավետպոլի, Գունայի, Ապշերոն-Խադիժենի՝ Մայկոպի օկրուգում, Սադովին՝ Կուբանի օկրուգի Տաքադըյուրի շրջանում)՝ 68 գյուղով և խուտորներով, որտեղ ապրում էր 6026 հայ, ինչը կազմում էր շրջանի ամբողջ բնակչության 74 %-ը: Շրջանն ուներ 1,286 քառ. կմ տարածք¹³⁷: 1927-1928 թթ. այնտեղ բացված 23 հայկական դպրոցներում սովորում էր 1120 աշակերտ: Հաջողությամբ գործում էր հայկական թատրոնը, հրա-

¹³⁶ Տե՛ս **В. Адобашьян**, Армяне Черноморского округа в 1920-1928 гг.// «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 6, Երևան, 1975, էջ 27-32:

¹³⁷ Տե՛ս **Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան**, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Երևան, 2015, էջ 225:

տարակվում էր «Մուրճ-մանգաղ» պարբերականը, տպագրվում էր հայ գրականություն: Հետաքրքիր է նշել, որ թեև 1931 թվականից սկսվել էր շրջանային աշխատակազմի և գյուղական կազմակերպությունների հայացումը և անցումը հայերեն գործավարությանը, այնուամենայնիվ չհաջողվեց այն արմատավորել¹³⁸: Շրջկոմի բյուրոն արձանագրել էր, որ «շրջանային կազմակերպությունների մեծ մասը բացահայտ չեն ցանկանում գործավարությունը տանել մայրենի լեզվով, չնայած աշխատակազմերում աշխատակից հայերի կշիռի շարունակական աճին»: 1934 թ. հայկական շրջանի բնակչությունը կազմում էր 9900 մարդ, որոնք բնակվում էին 8 գյուղխորհուրդներում ընդգրկված 52 բնակավայրերում: Դրանք հիմնականում փոքրաթիվ բնակչություն (25-250 բնակիչ) ունեցող գյուղեր էին: Հայերը կազմում էին տեղի բնակչության շուրջ 82 %-ը: Այս միավորը գոյատևեց մոտ 28 տարի, և չնայած խորհրդային վարչակարգին՝ ինքնավար շրջանի ստեղծումը նպաստում էր բնակչության ազգային ինքնության պահպանմանը: 1953 թ. Կրասնոդարի երկրամասում 24 շրջանների լուծարմամբ վերացավ նաև Հայկական շրջանը: Նրա տարածքը վերաբաշխվեց Տուապսեի և Ապշերոնի շրջանների միջև¹³⁹: Այսպես ավարտվեց Հայկական ազգային շրջանի պատմությունը, որը թեև վարչական առումով ինքնուրույն չէր, սակայն ուներ կրթալուսավորչական լուրջ դերակատարություն:

¹³⁸ Տե՛ս **В. Акопян**, Национальные районы и их официальный язык (армянские районы Северного Кавказа в 20-е годы)//Армяне Северного Кавказа. Studia Pontocausica. Вып. 2, Краснодар, 1995, с. 150:

¹³⁹ Տե՛ս **В. Bulletin**, «Вопросы арменоведения», ЕГУ, № 2 (5). 2015, с. 31-46:

Խորհրդային շրջանում հայերի վերաբնակեցումը Կրասնոդարի երկրամասում բնութագրվում էր ակտիվության բուռն փայլատակումների բացակայությամբ: 1920 թ. Կուբանի և սևծովյան շրջանների հայ բնակչության թիվը կազմում էր համապատասխանաբար 45,3 և 13 հազար մարդ, որոնցից 65,1 և 41,8 %-ը քաղաքաբնակներ էին և զբաղվում էին առևտրով ու արհեստներով: Հայերն առավել հոծ բնակվում էին Մայկոպում և Եկատերինոդարում (16,7 հազար մարդ), ինչպես նաև Սոչիում և Տուապսեում (8,5 հազար մարդ)¹⁴⁰:

Հյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում բնակվում էր ստվար քանակությամբ հայ բնակչություն՝ ինչպես գյուղաբնակ, այնպես էլ քաղաքաբնակ: Այսպես, օրինակ, ըստ 1970 թ. մարդահամարի տվյալների՝ զգալիորեն աճել էր Կրասնոդարի երկրամասի հայության թվաքանակը, որից 25.4 %-ն ուներ բարձրագույն, անավարտ բարձրագույն կամ միջին մասնագիտական, 58.6%-ը՝ միջնակարգ կամ ոչ լրիվ միջնակարգ, 11.3 %-ը՝ տարրական կրթություն: Այս ցուցանիշը քաղաքային վայրերում կազմում էր 31.3, 55.6, 9.1 %, գյուղերում՝ 17.3, 62.7, 14.3 %:

Կրասնոդարի երկրամասի հնաբնակ հայության շրջաններում մեծ թիվ էին կազմում ծառայողները, մտավորականները, իսկ 1970-1980-ականներին վերաբնակվածների մոտ՝ ձեռներեցները: Հայերը նախընտրում էին բնակություն հաստատել Անապայի, Գորյաչի Կյուչի, Բելորեչենսկի, Ապշերոնսկի, Տուապսեի, Լազարնսկի, Խոստայի և Ադլերի շրջանների ավելի քան 100 գյուղական վայրերում: Ըստ 1989 թ. մարդահամարի տվյալների՝

¹⁴⁰ Տե՛ս **В. Белозеров**, Этническая карта Северного Кавказа, Москва, 2005, с. 49:

Կրասնոդարի երկրամասի հայության 75.2 %-ն իր մայրենի լեզուն համարում էր ազգայինը, 24.7 %-ը՝ ռուսերենը: Քաղաքաբնակ հայերի 68.2 %-ի, գյուղաբնակների 84 %-ի համար հայերենը մայրենի լեզու էր¹⁴¹:

Բ. Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները հետխորհրդային տարիներին

Հետխորհրդային տարիներին Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները որոշակի փոփոխություններ կրեցին: Դա դրսևորվեց ոչ միայն ժողովրդագրական իրավիճակի փոփոխությամբ, այլև հասարակական որոշակի ակտիվությամբ:

Հայկական միգրացիային բնորոշ էր սահուն աճ, որի ակտիվության հերթական բարձրակետը կապված էր 1988 թ. երկրաշարժի հետ և այնուհետև սաստկացավ 1990-ական թթ.: Վրացաբխազական զինված հակամարտության շրջանում Աբխազիայի 80 հազարանոց հայ բնակչությունը կրճատվեց 50 %-ով, որի զգալի մասը տեղափոխվեց Կրասնոդարի երկրամաս¹⁴²: Հայերի թիվը երկրամասում, ոչ պաշտոնական տվյալներով, աճեց մոտավորապես մինչև 290 հազար մարդ՝ նրանց երկրորդ տեղը դնելով ռուսներից հետո, առաջինը՝ ազգային փոքրամասնությունների շարքում: Այս փաստը, ինչպես նաև հայերի՝ ձեռնարկատիրական բիզնեսի, էթնիկ շփումներում որոշակի գերա-

¹⁴¹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ս. Ալեքսանյան, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, էջ 319-320:

¹⁴² Տե՛ս Ա. Тулумджян, Армянские общины на современном этапе: выживание, перспективы//Бюллетень научно-образовательного фонда Нораванк. Материалы научно-практической конференции 19-20 июня 2007 г., Ереван:

զանցության ձգտումը, իսկ երբեմն էլ՝ տեղի սոցիոմշակութային միջավայրին չհարմարվելը, կենսական ավելի բարձր չափորոշիչն ու ապահովված նյութական բարեկեցությունը համընդհանուր սոցիալ-տնտեսական դժվարությունների պատկերում նպաստում էին նրանց և տեղի սլավոն բնակչության ներկայացուցիչների միջև ազգամիջյան լարվածության խորացմանը¹⁴³:

Հարկ է նշել, որ հայերը, տնտեսական առումով մրցունակ լինելով, տիտղոսակիր ազգի ընկալմամբ մրցակից են դառնում ռեսուրսների բաշխման ոլորտում և աշխատանքի ներքին շուկայում: Դա առանձնապես ակնհայտ դրսևորումներ ստացավ Կուբանում: 1992 թ. Անապայում, Կրասնոդարում և Կրասնոդարի երկրամասի այլ շրջաններում հարձակումներ կատարվեցին հայերի վրա: 1993 թ. ամռանն Անապայում միջադեպեր տեղի ունեցան ռուսների և հայերի միջև, 1997 թ.՝ Կորենովսկում հանրահավաքի ժամանակ, հնչեցին հայերին արտաքսելու պահանջներ: Զուգահեռաբար մամուլում ավելի հաճախ սկսեցին տպագրվել հակահայկական բնույթի հրապարակումներ, հաճախադեպ էին հակահայկական արտահայտություններ հնչում Կրասնոդարի երկրամասի ղեկավարների կողմից: Հայկական համայնքները ոչնչով չկարողացան հակադարձել այս ամենին, նույնիսկ չկարողացան համապատասխան իրավաբանական պաշտպանություն ու ապահովում կազմակերպել Կրասնոդարի և Կուբանի Սլավյանսկի ջարդարարների նկատմամբ հարուցված դատավարությունների ընթացքում, երբ երիտասարդ ջար-

¹⁴³ Ст'а А. Тер-Саркисянц, Межнациональные отношения в Краснодарском крае, 1993 г. (основные тенденции развития), Москва, Институт этнологии и антропологии РАН, 1994, с. 8:

դարարները, որոնք Կրասնոդարի հայկական գերեզմաններն էին պղծել ու թալանել Կուբանի Սլավյանսկի հայկական խանութները, ազատ արձակվեցին դատարանի դաշիլճից՝ անշան պայմանական ժամկետներ ստանալով: Հայության շուրջ պարբերաբար ծագող անհանդուրժողության մթնոլորտը երկյուղներ էր ծնում՝ ստիպելով հայերին մի կողմ քաշվել հայկական կազմակերպությունների գործունեությունից:

Կրասնոդարի երկրամասի հայկական սփյուռքը պատկանում է հայ էթնիկ հանրության տարածաշրջանային ամենամեծաթիվ խմբերին: Ըստ Ռուսաստանի 2002 թ. մարդահամարի տվյալների՝ երկրամասում ապրում էր 274.566 մարդ, որոնք իրենց հայ են համարել (այդ թվում՝ 141.501-ը՝ տղամարդ, 133.065-ը՝ կին)¹⁴⁴: Նրանցից 211.397-ը տիրապետում էր հայերենին¹⁴⁵, ՀՀ քաղաքացիություն ուներ 6948 մարդ¹⁴⁶: 1989-2002 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում հայերը դարձան Կրասնոդարի երկրամասի թվաքանակով երկրորդ էթնիկ հանրությունը: Սակայն դեռ 2000 թ. դրությամբ Կուբանում ապրում էր ընդհանուր առմամբ (ինչպես օրինական, այնպես էլ անօրինական հիմունքներով) հայ ազգի շուրջ 500 հազար ներկայացուցիչ¹⁴⁷, ոմանք էլ պնդում են՝ անգամ 600 հազար¹⁴⁸:

¹⁴⁴ Ст'у Итоги Всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю. Национальный состав и владение языками, гражданство, т. 4, Краснодар, 2005, с. 7:

¹⁴⁵ Ст'у նույն տեղում, էջ 223:

¹⁴⁶ Ст'у նույն տեղում, էջ 436:

¹⁴⁷ Ст'у Миграция и безопасность в России / под ред. Г. Витковской и С. Панарина. Москва, 2000, с. 173:

¹⁴⁸ Ст'у **К. Корякин**, Социальные и культурные аспекты адаптации мигрантов-армян в Краснодарском крае: 1988-2006 гг.: автореферат дис. ... кандидата

2000-ական թթ. բնորոշ է հիմնականում հայերի տնտեսական միգրացիան: Ռուսաստանի 2010 թ. մարդահամարի տվյալներով՝ երկրամասում ապրում էր 281680 մարդ, որոնք իրենց հայ են համարել¹⁴⁹: Նրանցից 211397-ը տիրապետում էր հայերենին¹⁵⁰: Կուբանի հայ բնակչության թվաքանակի մասին տեղեկությունները ներկայումս պետք է էականորեն փոփոխված լինեն, քանի որ նախ ութ տարի առաջ անցկացված մարդահամարը փաստացիորեն հաշվի էր առել երկրամասում ապրող ոչ ամբողջ բնակչությանը, և երկրորդ՝ 2010 թվականից հետո էլ շարունակվում էր հայ բնակչության միգրացիոն հոսքը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այստեղ բնակվում էր նաև 180 հազար հայ ներգաղթյալ, որոնք կա՛մ դեռ չէին հասցրել Ռուսաստանի քաղաքացիություն ստանալ, կա՛մ ժամանակավոր աշխատողներ էին¹⁵¹:

Հայերի ներգաղթը Կրասնոդարի երկրամաս մինչ օրս էլ, ավաղ, շարունակվում է: Դրա քանակական աստիճանը, թերևս, զգալիորեն ցածր է, քան մեկ-երկու տասնամյակ առաջ¹⁵²: Հայաստանի տարբեր անկյուններից եկածները (հայ բնակչության մյուս խմբերից տարբերելու համար «երևանյան հայերը») մինչև հիմա էլ տեղի հասարակությանն ինտեգրվելու դժվարություններ

исторических наук: 07.00.07 [Место защиты: Ин-т этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая РАН], Москва, 2007, с. 19:

¹⁴⁹ Տե՛ս **С. Шаповалов**, Некоторые аспекты армянской миграции в Краснодарский край// Общество: социология, психология, педагогика, 2015, № 4, с. 14:

¹⁵⁰ Տե՛ս Итоги Всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю. Национальный состав и владение языками, гражданство, т. 4, Краснодар, 2005, с. 223:

¹⁵¹ Տե՛ս Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, Երևան, 2010, էջ 126:

¹⁵² Տե՛ս **С. Суцкий**, Армяне Юга России и Крыма (геодемографический очерк), Ростов-на-Дону, 2015, с. 129-130:

են կրում: Այսօր հայկական միգրացիայի զգալի մասը կազմում են գյուղական վայրերից և փոքր քաղաքներից եկածները, որոնք հաճախ վատ են տիրապետում ռուսերենին: Հայագրի այլ խմբերի հետ եկվորները երբեմն նախընտրում են հարաբերվել միայն մայրենի լեզվով, ընդ որում՝ անընդհատ նշելով, որ իրենց բարբառը գրական չէ, ուրեմն իրենք երկրորդ կարգի հայեր են¹⁵³:

Կրասնոդարի երկրամասում ապրում են նաև հայալեզու հեմշիլներ՝ մոտավորապես 150 ընտանիք: Հեմշիլների համար հատկանշական է մի քանի ինքնության միաժամանակյա առկայությունը՝ մուսուլմանական, թուրքական (հավանաբար՝ կապված իսլամականի հետ) և սեփական՝ հեմշիլյան:

Ինչպես ցույց է տալիս իրականությունը, սոցիոմշակութային այլ միջավայրին ինտեգրումն անխուսափելիորեն ենթադրում է էթնիկ փոքրամասնության մի ինչ-որ մասի ծուլում: Օտարության մեջ հայտնված հայերի արդեն երրորդ սերունդը չի խոսում, չի հասկանում իր մայրենի լեզուն: Յավալի փաստ է, որ տեղի հայերի որոշ մասը չի էլ ցանկանում առանձնապես մայրենի լեզուն սովորել, քանի որ արդեն ռուսախոս է դարձել և ոչ մի հետաքրքրություն հանդես չի բերում հայերենի նկատմամբ¹⁵⁴:

Պետք է նշել, որ 20-րդ դարի առաջին կեսին դրությունը համեմատաբար ավելի բարվոք էր առանձնապես Սոչիի շրջանում: ՀԱԽ-ը սկիզբ էր դրել տեղի դպրոցական գործին՝ հրավիրելով ուսուցչական խումբ և ընտրելով շրջանային դպրոցական իր տեսուչին: Պահանջված ծախսերը ՀԱԽ-ն իրականացնում էր դրա-

¹⁵³ **Г. Денисова**, Армянская миграция на Юге России в зеркале общественного мнения//Проблемы миграции на Юге России: опыт социологического анализа, Ростов-на-Дону, 2003, с. 43.

¹⁵⁴ **С. Суций**, Армяне Юга России и Крыма (геодемографический очерк), Ростов-на-Дону, 2015, с. 129-130.

մական հատուկ ֆոնդից, որը ստեղծվել էր գյուղական համայնքներից եկամտի 5 %-ի գանձման միջոցով:

Այսպիսով՝ ՀԱԽ-ի գործադրած ջանքերով հիմնվեց 14 տարական հայկական դպրոց, և Սոչիի շրջանի հայաբնակ բոլոր գյուղերը, բացառությամբ թերևս 2 բնակավայրի, ունեցան իրենց կրթարանները³⁵: Ա. Բ. Հակոբյանն իր հուշերում լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում Սոչիի շրջանում կրթական ոլորտի կազմակերպման մասին. «Ազգ. խորհուրդը դպրոցի գործին յատուկ յանձնաժողով մը ընտրեց, որ սկսաւ զբաղիլ այդ գործով: Անոր կողմէ լիազօր ընկեր մը ղրկուեցաւ Թիֆլիս, ուր կուսակցական ընկերներու աջակցութեամբ վարձեց 28 հոգանոց ուսուցչական խումբ մը ընկ. Յ. Զառաֆեանի ղեկավարութեան տակ: Ընկ. Յ. Զառաֆեան կովկասահայ լաւագոյն մանկավարժներէն մէկն էր, աւարտած էր Սորբոնի համալսարանը, ուղղամիտ, լուրջ և պատրաստուած ուժ մը: Ան պիտի մնար քաղաքը և իբրև կրթական տեսուչ պիտի այցելէր շրջանները՝ ուղղութիւն տալու ուսուցիչներին և հսկելու ծրագրի գործադրութեան»¹⁵⁵:

Խորհրդային իշխանության հաստատման սկզբնական շրջանում շարունակվեց հայկական դպրոցների կազմակերպման գործը: Կուբան-սևծովյան մարզում 1920 թ. գարնանը հայկական դպրոցների թիվը հասնում էր 61-ի: Հայկական դպրոցներ էին գործում ոչ միայն Շահումյանի ազգային շրջանում, այլև ողջ Կրասնոդարի երկրամասում: Օրինակ՝ Սոչիի շրջանում բացվել է նման 29, Մայկոպի օկրուգում՝ 15, Նովոռոսիյսկում՝ 26 դպրոց: Բացի դրանից՝ գործում էին հայկական 3 մանկատուն,

¹⁵⁵ Տե՛ս «Հայրենիք», 1931, սեպտեմբեր, էջ 159:

անգրագիտության վերացման 9 բաժանմունք, մեծահասակների համար 2 դպրոց և 2 ընթերցարան:

Արմավիրի քաղաքի հայկական դպրոցները 1921 թ.¹⁵⁶

Դպրոցի համարը	Ուսուցիչների թիվը	Սովորողների թիվը
18	5	148
35	5	133
36	9	234
37	2	88
38	4	103
Ընդամենը	25	706

Կրասնոդար քաղաքի հայկական դպրոցները 1921 թ.¹⁵⁷

Դպրոցի անվանումը	Դպրոցի աստիճանը	Սովորողների թիվը
Հայկական	1	36
1-ին հայկական	2	14
2-րդ հայկական	2	70
3-րդ հայկական	2	150
4-րդ հայկական	2	75
5-րդ հայկական	2	62
6-րդ հայկական	2	150
7-րդ հայկական	2	70
8-րդ հայկական	2	75

¹⁵⁶ Տե՛ս Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, Երևան, 2010, էջ 216:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

Կուբանի (Կրասնոդարի երկրամաս) հայկական կրթական հաստատությունների ցանցը բավականին մեծ էր՝ պայմանավորված մեծաթիվ հայ բնակչությամբ. «Երկրամասի հայկական դպրոցների ամենածաղկուն տարիներն են 1930–1955 թվականները, երբ համարյա բոլոր հայաբնակ գյուղերում և գյուղակներում, բազմաթիվ հայ բնակչություն ունեցող քաղաքներում գոյություն է ունեցել 134 հայկական դպրոց: Դրանցից 81-ը եղել է տարրական, 39-ը՝ 7-8-ամյա և 14-ը՝ միջնակարգ (10-ամյա)»¹⁵⁸: 1953 թ. Կրասնոդարի երկրամասի կազմում գտնվող Հայկական ազգային շրջանի լուծարումից հետո երկրամասի հայկական դպրոցների թիվը նկատելիորեն կրճատվել է: Սա այն դեպքում, երբ հետպատերազմյան բոլոր մարդահամարների տվյալներով, ինչպես արդեն նշվել է, Կրասնոդարի երկրամասի հայության թվաքանակն անշեղորեն աճել է: Դպրոցներում մտցվել էր ռուսական կրթական ծրագիր, իսկ հայերենը դասավանդվում էր որպես առանձին առարկա¹⁵⁹:

1950-ական թթ. երկրամասում կար 140 հայկական դպրոց, որից 13-ը՝ միջնակարգ և 40-ը՝ ութամյա¹⁶⁰: Սակայն հետագայում երկրամասում դպրոցների թիվը զգալիորեն կրճատվեց. 140-ի փոխարեն՝ 12 1967 թ., և 3՝ 1992 թ.: Մեծապետական ամբողջատիրական համակարգը, որը պայքարում էր ԽՍՀՄ-ում բնակվող ժողովուրդների ազգային ինքնագիտակցության դեմ,

¹⁵⁸ Ա. Անտոնյան, Համշենահայության պատմությունից // «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3 (55), 1979, էջ 121:

¹⁵⁹ Տե՛ս Հ. Ալեքսանյան, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941–1991 թթ., Երևան, 2016, էջ 32–33:

¹⁶⁰ Տե՛ս Ուծացման ճանապարհին. հայերենի ուսուցումը ՌԴ Արմավիր քաղաքում // <http://www.lezu.am/?p=505> (առկա է համացանցում, ներբեռնվել է՝ 28.04.2018):

չէր կարող հանդուրժել հայկական ազգային դպրոցների բնականոն գործունեությունը, ինչը հանգեցրեց բազմաթիվ հայկական դպրոցների շարունակական փակմանը: Այժմ միայն Ադլերի թիվ 31 միջնակարգ դպրոցում հայերենը ուսուցանվում է որպես մայրենի լեզու¹⁶¹, բայց այստեղ էլ աշակերտների թիվը տարեցտարի նվազում է, կրթության որակն այն չէ, ավելին՝ դպրոցում համապատասխան մանկավարժ չլինելու պատճառով չի ուսուցանվում այնպիսի կարևոր առարկա, ինչպիսին հայ ժողովրդի պատմությունն է, իսկ հայ գրականությունը դասավանդվում է ֆակուլտատիվ, կամընտրական հիմունքներով: Մեծ Սոչիի մի քանի գյուղերի միջնակարգ դպրոցներում գործող, այսպես կոչված, «հայկական սեկտորներն» այսօր փակ են, և հայերենը դրանցում դասավանդվում է ոչ պարտադիր կերպով, այլ սովորողների ցանկությամբ: 2002 թ. մարդահամարի համաձայն՝ Սոչիում ապրում էր 7-17 տարեկան ավելի քան 15 հազար հայ երեխա, այնինչ հայկական դպրոցներում և հայկական սեկտորներում այդ նույն շրջանում ուսանում էր ընդամենը 1380 աշակերտ, այսինքն՝ 9 %-ից մի փոքր ավելի¹⁶²:

Հայկական համայնքներից շատերում գործող և սկզբում որոշակի դեր խաղացած կիրակնօրյա դպրոցներն այսօր կորցնում են իրենց նշանակությունը, քանի որ այդ դպրոցների խմբակներում պարապում են խիստ սակավաթիվ երեխաներ, որոնք, դասընթացն ավարտելով, անգամ հայերեն գրել-կարդալ սովորելուց հետո չեն կարողանում խոսել մայրենի լեզվով:

¹⁶¹ Տե՛ս В Сочи прошла олимпиада по армянскому языку//САР, №2 (141), 28.02.2007, с. 7:

¹⁶² Տե՛ս Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում, էջ 34:

Նշենք, որ հայ ժողովրդի պատմություն առարկան կիրակնօրյա շատ դպրոցներում չի դասավանդվում: Ավելին՝ այս կրթօջախներից շատերը ստեղծվել են ուսուցիչների մասնավոր նախաձեռնությամբ և համայնքներից աջակցություն չեն ստանում, ինչի հետ կապված էլ դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների լուրջ պակաս են զգում: Սարսափելի թվաբանություն է, ինչը վկայում է Կրասնոդարի երկրամասի հայերի ոչ հեռու ապագայում արագ ուժացման վտանգի մասին:

Միևնույն ժամանակ դեռ կիրառվում են ինքնությունը պահելու այլընտրանքային տարբեր եղանակներ: Հայկական մշակույթի վերածննդի համար նկատելի դերակատարություն են ունեցել Հյուսիսային Կովկասում 1980-ական թթ. վերջին հիմնված հայկական մշակութային-լուսավորչական կազմակերպությունները՝ «Մ. Մաշտոց միությունը» (Կրասնոդար), «Արմավիրը» (Արմավիր), «Ցանքը» և Հայ ազգային մշակույթի կենտրոնը (Անապա), «Համշենը» (Տուապսե), «Սևանը» (Սոչի), «Անին» (Գելենջիկ), «Լույսը» (Նովոռոսիյսկ), «Բարեկամությունը» (Մայկոպ) և այլ միություններ¹⁶³:

Հայաշատ քաղաքներում գործում են կիրակնօրյա, էթնոմշակութային բազմաթիվ դպրոցներ, հայոց լեզվի ուսուցման դասընթացներ, հայկական դասարաններ: Սոչիի «Սևան» հայկական մշակութային կենտրոնը կազմակերպում է շաբաթօրյա և կիրակնօրյա հայկական դպրոցներ: Արմավիր քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից բացվել է հայկական դպրոց, որտեղ սովորում է 120 աշակերտ: Կրասնոդար քաղաքում գործում է հայ առաքելական եկեղեցու «Խաչքար» կիրակնօրյա դպրոցը,

¹⁶³ Տե՛ս Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 38-39:

որտեղ ուսուցանվում են հայագիտական առարկաներ: Նովոռոսիյսկ քաղաքի հայկական կիրակնօրյա դպրոցում դասավանդվում է հայոց լեզու և պատմություն: Կուբանի պետական համալսարանում գործում են հայոց լեզվի դասընթացներ: Կիրակնօրյա դպրոցներ են բացվել նաև Կրասնոդարի երկրամասի Կրիմսկ և Գորյաչի Կյուչ քաղաքներում, Չերեշնյա գյուղում: Դրանցում պարտադիր դասավանդվում են հայոց լեզու, գրականություն, հայոց պատմություն և այլ առարկաներ: Գործում են նաև նախադպրոցական կրթական հաստատություններ:

Հայկական կազմակերպությունները, այսպես կոչված համայնքները, տարածաշրջանում սկսեցին իրավաբանորեն ձևակերպվել 1990-ական թթ. սկզբներից: Դրանք ներկայումս, համաձայն գրանցող մարմինների տվյալների, գոյություն ունեն Ռուսաստանի հարավի գրեթե բոլոր սուբյեկտներում: Սակայն իսկապես գործող կարելի է համարել դրանցից շատ քչերը: Սկզբում այս կամ այն շրջանում ստեղծվելով որպես միակ և համընդգրկուն կազմակերպություններ՝ դրանք զարգացման մի քանի փուլ են անցել: Որպես կանոն, դրանց ստեղծման նախաձեռնողներն ու առաջին ղեկավարները եղել են հայության պահպանման և ծուլումից փրկելու ջատագով մտավորականության ներկայացուցիչները, որոնք, սակայն, ֆինանսական հնարավորություններ չեն ունեցել՝ այդ նպատակներն իրագործելու համար: Հետագայում համայնքի ղեկավար մտավորականներն աստիճանաբար փոխարինվեցին բիզնեսի ներկայացուցիչներով, որոնք ունեին ֆինանսական հնարավորություններ՝ հստակ չպատկերացնելով այդ հնարավորությունների կիրառման ոլորտները: Այսպես, օրինակ, Կրասնոդարի երկրամասի տարբեր շրջաններում համայնքների կողմից ստեղծվեցին մի քանի ֆուտ-

բուլային թիմեր՝ հայկական անվանումներով, որոնք մասնակցում էին համաքաղաքային կամ շրջանային առաջնություններին, և որոնց վրա լուրջ միջոցներ էին ծախսվում, որոնք հավաքվում էին փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներից: Ընդ որում՝ այդ նույն համայնքներում միջոցներ և հնարավորություններ չգտնվեցին հայերենի ուսուցման խմբեր կազմակերպելու համար, թեև դա անհամեմատ ավելի քիչ միջոցներ էր պահանջում: Համայնքների ղեկավարների համար ավելի հեշտ էր ֆինանսավորել մի ինչ-որ մեկանգամյա միջոցառում, որը ոչ մի կապ չուներ հայկական սփյուռքի հետ (օրինակ՝ Ռուսաստանի բողոքի-դիմադրության առաջնությունը, որի մասին հետո կարելի է երկար հիշել), քան երկարաժամկետ մի նախագիծ սկսել, որը ոչ միայն և ոչ այնքան ֆինանսական ծախսեր կպահանջեր, որքան ինտելեկտուալ ջանքեր:

Հայկական կազմակերպությունների առավել մեծ ակտիվության շրջանը համընկավ Ղարաբաղի ազատագրական պատերազմի ժամանակահատվածին, երբ համայնքների մեծամասնությունն աշխատում էր «ամեն ինչ՝ ճակատի, ամեն ինչ՝ հաղթանակի համար» սկզբունքով՝ կազմակերպելով հումանիտար և այլ օգնության առաքումը Հայաստան, ապահովելով պատերազմում տուժածների ընդունումը, բուժումը և այլն: Բայց երբ նման աշխատանքի անհրաժեշտությունը վերացավ, հայկական շատ կազմակերպություններ իրենց գործունեությունը հասցրին նվազագույնի կամ ընդհանրապես դադարեցրին այն:

Այս և շատ այլ գործոններ, որոնք թեև քիչ, բայց տեղի ունեցան Ռուսաստանի հարավի այլ շրջաններում նույնպես, հանգեցրին նրան, որ տարածաշրջանի հայ բնակչությունը հիմնականում հիասթափվեց իրեն համայնքներ անվանող հայկական

կազմակերպությունների գործունեությունից՝ կտրվելով կազմակերպված հայությունից: Միևնույն ժամանակ հայկական կազմակերպությունները, որոնց մեծամասնությունը գրանցված էր որպես «հայկական մշակույթի ընկերություն», հավակնում էր լինել միակ հայկական կազմակերպությունն այս կամ այն շրջանում և խանդով ու անգամ թշնամաբար էին վերաբերվում հայկական սփյուռքի առանձին ներկայացուցիչների՝ էլի ինչ-որ կազմակերպություն ստեղծելու փորձերին: Կարծիք կար, թե այս կամ այն բնակատեղի բոլոր հայերն ինքնաբերաբար այդ հայկական կազմակերպության անդամներ են, ուստի և պարտավոր են այդ կազմակերպության հանդեպ որոշակի պարտականություններ ունենալ, հիմնականում՝ անդամավճար ներմուծել: Կազմակերպություններից մեկի կանոնադրությունում անգամ կետ կար այն մասին, որ այդ կազմակերպության անդամ չհանդիսացող, բայց կազմակերպության գործունեության տարածքում բնակվող հայը պետք է դիմում գրի ազգային պատկանելությունից հրաժարվելու մասին: Հայկական համայնքներից մեկը պաշտոնական նամակ էր հղել արդարադատության երկրամասային վարչություն՝ պահանջելով, որ վերջինը, առանց համայնքի թույլտվության, չգրանցի հայկական այլ կազմակերպություններ: Նման իրավիճակը միանգամայն ձեռնտու էր նաև իշխանության ներկայացուցիչներին, որոնց հարմար էր իրենց շրջանում մեկ հայկական կազմակերպություն ունենալ՝ մի ղեկավարով, որը «կորցնելու բան ուներ» (նկատի է առնվում բիզնեսը), և որին, դրա հետ կապված, կարելի էր կառավարել: Երկրամասի հայկական հասարակական կյանքում տիրող այս իրավիճակը ձեռնտու չէր ակտիվությամբ աչքի ընկնող բազմաթիվ հայերի, որոնք դուրս էին մնացել հայկական համայնքների գործունեությունից, դրա հա-

մար էլ, երբ 1996 թ. Կրասնոդարում սկսեց լույս տեսնել հետխորհրդային Ռուսաստանի տարածքում առաջին հայկական անկախ «Երկրամաս» թերթը, նրանցից շատերը, ովքեր ցանկանում էին փոփոխություններ կատարել, համախմբվեցին թերթի շուրջ և այն պաշտպանեցին հայկական մի շարք համայնքների ճնշումներից, որոնք կարծում էին, թե թերթ հրատարակելու իրավունք միայն իրենք ունեն:

«Երկրամաս» թերթի անկախ գործունեության փորձն արդյունքներ տվեց, և երկրամասում աստիճանաբար, չնայած հայկական շատ համայնքների ղեկավարների դիմակայությանը, սկսեցին ստեղծվել նոր, համայնքներից անկախ հասարակական կազմակերպություններ՝ հայրենակցական, երիտասարդական, գիտական, գրական, մարզական և այլն: Դրանք սակավաթիվ էին և ֆինանսապես էլ կայուն չէին, ինչով պայմանավորված՝ դրանցից շատերը գոյատևեցին ընդամենը 2-3 տարի, սակայն այդ կազմակերպությունների շնորհիվ շատ հայեր սկսեցին ցուցաբերել հասարակական ակտիվություն, իսկ հայկական բազմաթիվ համայնքներ, նոր կազմակերպություններն ընդունելով որպես մրցակիցներ, փորձեցին ավելի ակտիվացնել իրենց աշխատանքը: Նոր կազմակերպությունների շարքում կային այնպիսիները, որոնք, անշուշտ, կարող էին վստահաբար ոտքի կանգնել և իրենց տեղն ունենալ Կուբանի հայկական հասարակական շարժման մեջ: Այդպիսի կազմակերպություններից են Հայկական գիտական տեղեկատվական-մշակութային «Համշեն» կենտրոնը, որն ստեղծվել է 2000 թ., 2005 թ. ստեղծված «Նարեկ» մշակութային և կրթական կենտրոնը, «Երկրամաս» թերթի հասարակական կառույցները, որոնք իրենց ներկայացուցիչներն ունեն երկրամասի շատ շրջաններում:

Հայկական կազմակերպությունների գործունեությունը պարբերաբար ակտիվանում էր, ինչը կապված էր Ռուսաստանի հայկական սփյուռքում տեղի ունեցող գործընթացներով: Այսպես, համայնքների զարգացման հերթական փուլը սկսվեց Մոսկվայում Համառուսական հասարակական «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) կազմակերպության հիմնմամբ, ինչը Կուբանում մեծ խանդավառությամբ ընդունեցին: Բայց տեղի ղեկավարները յուրովի մոտեցան ՌՀՄ տեղական բաժանմունքների ստեղծման հարցին: Եթե Ռուսաստանի այլ շրջաններում հայկական համայնքները դառնում էին ՌՀՄ կոլեկտիվ անդամներ, ապա Կուբանում զանգվածաբար սկսեցին իրավաբանորեն փակվել հայկական համայնքները և բացվել ՌՀՄ տեղի բաժանմունքներ: Մի շարք համայնքներ, օրինակ՝ Նովոռոսիյսկում, Կուբանի Սլավյանսկում, Անապայում և էլի մի շարք շրջաններում, ընդդիմացան համայնքների փակմանը: Որոշ դեպքերում ՌՀՄ երկրամասային ղեկավարությունն օգտագործեց վարչական ռեսուրսը՝ «անհնազանդ» համայնքները փակելու համար, և շատ դեպքերում դա հաջողվեց: Բայց Նովոռոսիյսկում համայնքը (հայկական մշակութային «Լույս» ընկերություն) ոչ միայն հրաժարվեց փակվել, այլև մտնել ՌՀՄ, ինչի արդյունքում ՌՀՄ-ն այստեղ ստիպված էր սկզբում զուգահեռ կառույց ստեղծել, միայն հետագայում փոխզիջում գտնվեց, և երկու կազմակերպությունները միաձուլվեցին: Կուբանի շատ շրջաններում ՌՀՄ-ն և համայնքներն իրավաբանորեն գոյություն ունեն զուգահեռ, բայց կառավարվում են միևնույն մարդկանց կողմից: Ռուսաստանի հարավի հայերի մեծամասնությունն այսօր էլ պահպանում է այն հոգեբանական ընկալումը, որ իրենք առ այսօր Հայաստանի հետ միասին նույն պետականության արեալում են գտնվում:

ԻՍՀՄ գոյության տարիներին մշակված ինքնագիտակցությունը թույլ չի տվել տեղի հայերին ինքնուրույն մշակել ներէթնիկ ինքնակազմակերպման մեխանիզմներ, քանի որ շատերի համար հետխորհրդային տարածքում գլխավոր դերը կատարում է պետությունը, և «ներքևից» եկող նախաձեռնությունները չեն խրախուսվում: Մինչ Ռուսաստանի հարավի հայաբնակ շրջաններում գործում են ավանդական ազգային կառույցներ (եկեղեցի, կրթական հաստատություններ, ոչ կառավարական կազմակերպություններ և այլն), իրականում հայ ինքնության պահպանմանն ուղղված գործունեությունն իրականացվում է առանձին մարդկանց անձնուրաց ու հետևողական ջանքերով, որոնցից էլ կախված է կազմակերպությունների գործունեությունը:

Ինքնակազմակերպումը բարդացնող լուրջ հիմնախնդիր է հայկական սփյուռքի բազմաստեղությունը, որի ձևավորումը տեղի է ունեցել փուլ առ փուլ: Հայության տարբեր խմբերի միջև գոյություն ունեն գործոններ՝ լեզվի իմացության, նախկին բնակության վայրի և այլն, որոնք նպաստում են, որ հայերը հեռանան միմյանցից:

Ազգային թերթերն ու ամսագրերը մեկ հիմնական հիմնախնդրի առջև են կանգնած, այն է՝ կայուն ֆինանսավորման բացակայության: Դրանք հրատարակվում են տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական այլ աղբյուրների կողմից ֆինանսավորման լիակատար բացակայության պայմաններում: Որպես կանոն, այդ հրատարակությունները հազվադեպ են ապահովում ինքնաձախսաձածկումը վաճառքի կամ բաժանորդագրության միջոցով: Այդպիսով՝ շարունակում են ֆինանսավորման հիմնական աղբյուր մնալ առանձին հայրենասերների ներդրումները կամ էլ հրատարակչական կոլեկտիվի անհատույց

ջանքերն ու չվճարվող ժամանակը, որը գոհաբերվում է հանուն ազգային գործի:

Հայ մշակույթի բնագավառում Ռուսաստանի հարավում առաջատարը Սոչին է, ավելի ճիշտ՝ քաղաքի Լազարևյան շրջանը, որտեղ 1992 թ. Լազարևյան շրջանի վարչակազմի մշակույթի վարչության պետ Կիրկոր Մազլումյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Ազգային մշակույթների կենտրոն մունիցիպալ հաստատությունը, որի շրջանակներում գործում է Հայկական մշակույթի կենտրոնը: Հայկական մշակույթի կենտրոնին կից գործում են մի քանի վոկալ և պարային պրոֆեսիոնալ կոլեկտիվներ, որոնք հայտնի են ոչ միայն ողջ Կուբանում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Բացի այդ՝ քաղաքային բյուջեից են ֆինանսավորվում նաև Հայկական մշակույթի կենտրոնի 18 գյուղական մասնաճյուղերը, որոնց մեծ մասն ունեն պարի և երգի խմբեր: Ընդ որում՝ Հայկական մշակույթի կենտրոնը կառուցվածքային ոչ մի հարաբերություն չունի Սոչի քաղաքի հայկական համայնքի հետ (մտնում է ՌՀՄ-ի մեջ), որի բաժանմունք է գործում նաև Լազարևսկ գյուղում: Ավելին, մինչև վերջերս կենտրոնի և համայնքի հարաբերությունները խիստ լարված էին: Եվ միայն ՌՀՄ տեղի բաժանմունքի նախագահի վերընտրությունից հետո, որն ուղեկցվում էր մամուլում սկանդալային հրապարակումներով, հաջողվեց շտկել իրավիճակը:

Վերջին տարիներին մշակույթի ոլորտում դրական փոփոխություններ են նկատվել նաև Կրասնոդարում, որտեղ Պաշկովսկի գյուղի Հայկական մշակույթի կենտրոնին կից ստեղծվեց «Արին բերդ» ժողովրդական պարերի համույթը: Օգտվելով մեկենասների աջակցությունից՝ այս համույթը գոյության չորս տարվա ընթացքում կատարողական բարձր մակարդակ ապա-

հովեց և նույնիսկ ժողգործիքների սեփական նվազախումբ ունեցավ:

Գաղտնիք չէ, որ Սփյուռքի գրեթե բոլոր համայնքների գլխին դամոկլյան սրի նման կախված է ուժացման վտանգը: Կրասնոդարի երկրամասի հայ համայնքն այս հարցում նույնպես բացառություն չէ: Կուբանում հաստատված հայերը, ինտեգրվելով տեղի միջավայրին, կորցնում են ազգային ինքնության այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են մայրենի լեզուն, ազգային մշակույթին ու հոգևոր ժառանգությանը հաղորդակցությունը, ազգային ինքնագիտակցությունը և կարևոր այլ որակներ: Հետևաբար Կրասնոդարի հայ համայնքում հայապահպանության խնդիրը նույնպես դրված է ամենայն սրությամբ: Սա այն բնագավառն է, որտեղ հաջողության հասնելու համար պահանջվում է ազգային ներուժի առավելագույն համախմբում:

Այսպես, վերջին տարիներին ակտիվացել է հայ ազգային կառույցների գործունեությունը Կրասնոդարում, որտեղ այսօր գործում են հետևյալ հասարակական կազմակերպությունները և մեդիա-կառույցները՝ Կրասնոդարի երկրամասի ՌՀՄ շրջանային բաժանմունքը, Կրասնոդար քաղաքի ՌՀՄ տեղի բաժանմունքը, Պաշկովսկի գյուղի Հայկական մշակութային կենտրոնը, Կրասնոդարի քաղաքային «Խաչքար» մշակութային-կրթական կենտրոնը, Կրասնոդարի երկրամասային գիտատեղեկատվական-կրթական «Համշեն» կենտրոնը, Կրասնոդարի երկրամասային «Գործակցություն» կազմակերպությունը, հայկական եկեղեցին (մեկը գործող և մյուսը կբացվի մինչև տարեվերջ), երկրամասային «ՌՀՄ» թերթը, «Խաչքար» հանդեսը և արդարադատության նախարարությունում գրանցված ու չգրանցված հասարակական այլ կառույցներ:

Տեղի հայ բնակչության համար լուրջ հարված էր նաև ՌՀՄ շրջանային բաժանմունքի 2003 թ. ընդունած որոշումը՝ Կրասնոդարի երկրամասում հայկական բոլոր թերթերը փակելու անհրաժեշտության մասին, ինչն արվում էր միասնական թերթի՝ «ՌՀՄ»-ի հրատարակման համար համայնքների ջանքերը միավորելու նպատակով: Դրանից հետո Կուբանում համայնքների կողմից հրատարակվող մի քանի հայկական թերթեր՝ «Մաշտոց» (Կրասնոդար), «Կռունկ» (Արմավիր), «Հայկական լուրեր» (Սոչի), փակվեցին: ՌՀՄ ֆունկցիոներներին չհաջողվեց փակել միայն «Երկրամաս» անկախ և Նովոռոսիյսկի հայկական համայնքի «Լույս» թերթերը: Սակայն եթե համայնքների հրատարակած թերթերի («Մաշտոցը» Կրասնոդարում, «Կռունկը» Արմավիրում, «Հայկական լուրերը» Սոչիում) ընդհանուր տպաքանակը կազմում էր մոտ 10.000 օրինակ, ապա տպագրվող «ՌՀՄ»-ի տպաքանակը չէր գերազանցում 4-5 հազար օրինակը¹⁶⁴:

Տեղի բնակչությանն իր գործունեության մասին տեղեկացնելու հարցում առկա հիմնախնդիրը հանգեցրեց նրան, որ ՌՀՄ Սոչիի բաժանմունքը որոշեց 2010 թ. վերսկսել սեփական թերթի թողարկումը: Հայկական կառույցները արել են փորձեր՝ հիմնելու սեփական էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ: 2002 թ. Կրասնոդարում երկու ամիս, FM հաճախականությամբ շաբաթը մեկ եթեր էր արձակվում «Հայաստանի ձայն» կեսժամյա ռադիոհաղորդումը, որը բացել էր «Երկրամաս» թերթը, սակայն այս նախագիծը չստացավ տեղի բիզնես շրջանակների աջակցությունը, իսկ թերթը սեփական ֆինանսական հնարավորություն-

¹⁶⁴ Տե՛ս <http://sarinfo.org/regional/?r=krasnodar&np=1>(առկա է համացանցում, ներբեռնվել է՝ 28.04.2018):

ներ չուներ՝ գործունեությունը շարունակելու համար: Եվ, վերջապես, Սոչիի Լազարևսկի շրջանում տեղի ձեռներեցներից մեկը ստեղծել է «TB3B» հեռուստաընկերությունը, որն ամեն օր տեղի հեռուստատեսությամբ եթեր է հեռարձակվում մեկժամյա տեղեկատվական բլոկով, որը հասանելի է Կրասնոդարի երկրամասի Լազարևսկի, մասամբ՝ Տուապսեի շրջանների տարածքում: Հեռուստաընկերությունը չի ներկայանում որպես հայկական, սակայն իր ծրագրերում օգտագործում է տեղի հայկական սփյուռքի կենսագործունեության մասին տեղեկատվությունը և TBAPM.Py. արբանյակային հեռուստաալիքի ներկայացուցիչն է:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին հասարակական-քաղաքական կյանքում և տնտեսական գործունեության մեջ տեղեկատվության վերահսկողության նշանակության ընկալումը թափանցում է նաև հայկական սփյուռքի շրջանակներ: Հայտնի է, որ հայ ձեռներեցները Ռուսաստանի հարավի մի շարք շրջաններում ներդրումներ են կատարում տեղի (ոչ հայկական) ԶԼՄ-ներում և նույնիսկ դրանց մի մասի սեփականատերն են: Սակայն այս փաստերն ամենևին էլ չեն նշանակում, թե այդ լրատվամիջոցները որևէ կերպ և պլանաչափորեն աջակցում են հայկական սփյուռքի նպատակներին և խնդիրներին կամ ոչ հայ բնակչությանն այլ լրատվամիջոցներից ավելի ակտիվ են տեղեկացնում տեղի հայկական սփյուռքի ներկայացուցիչների մասին:

Հայերի դերը զգալի է դառնում նաև մեկ այլ ոլորտում՝ քաղաքականությունում: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում տարեցտարի ավելի մեծ թվով հայեր են ընտրվում, ընդ որում՝ նրանցից շատերն անմիջական կապ ունեն հայկական համայնքների հետ. կա՛մ հայկական համայնքների նախագահներ են, կա՛մ այդ համայնքների վարչություններ:

րի անդամներ: Նրանցից ոմանք նույնիսկ տեղի ինքնակառավարման մարմինների ղեկավարներ են ընտրվում (օրինակ՝ Կրասնոդարի երկրամասի Ապշերոնի շրջանի Խադիժենսկ քաղաքի դումայի նախագահը քաղաքի հայկական համայնքի նախկին նախագահ Արթուր Թաթույանն է):

Վերջին ժամանակներս ծագում են նաև այնպիսի իրավիճակներ, երբ հայկական համայնքների ղեկավարությունը տեղական ընտրություններում պաշտպանում է այն հայերի թեկնածությունը, որոնց առաջադրել է տեղի իշխանությունը, այլ ոչ թե ինքը՝ համայնքը: Այդպես պատահեց Սոչիում 2010 թ. ընտրությունների ժամանակ, երբ տեղի վարչակազմը ներկայացրեց ազգությամբ հայ թեկնածուների («Միասնական Ռուսաստան» կուսակցության անդամներ) ցանկը և հայկական համայնքին առաջարկեց պաշտպանել նրանց թեկնածությունը: Հայկական համայնքն այդպես էլ արեց՝ հրաժարվելով պաշտպանել քաղաքական այլ կուսակցություններից առաջադրված հայերին:

Հայ առաքելական եկեղեցու ԽՍՀՄ ներքին թեմերում հետազայում կատարվեցին կառուցվածքային այլ փոփոխություններ ևս: Այսպես, ՌԴ կազմավորումից հետո Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերակազմավորվել է երեք թեմերի, որոնց շարքում է Հարավային Ռուսաստանի թեմը: Նրա առաջնորդանիստն է Կրասնոդարի Սուրբ Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին: Թեմն ընդգրկում է Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում և Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետություններում գործող հայկական եկեղեցիներն ու համայնքները¹⁶⁵:

Կրասնոդարի երկրամասի հայերի մեծ մասը առաքելական քրիստոնեություն է դավանում: Հայկական եկեղեցին այն կա-

¹⁶⁵ Տե՛ս Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 25:

ռույցն է, որի շուրջ ամենահեշտն է տեղի ունենում հայ բնակչության համախմբումը կրոնական մեծ տոների կամ եկեղեցամերձ տարածքներում կազմակերպվող զանգվածային միջոցառումների ժամանակ: 2009 թ. սեպտեմբերին հայ առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի կյանքում տեղի ունեցավ մեծ իրադարձություն. Կրասնոդարում հանդիսավոր շուքով նշվեց առաջնորդարանի բացումը: Հայկական եկեղեցական համայնքներ են գրանցված Կրասնոդարի երկրամասի ոչ ավելի, քան 10 քաղաքում: Կրասնոդարում, Նովոռոսիյսկում, Սոչիում և Ադլերում նոր եկեղեցիներ են կառուցվել¹⁶⁶: Այսպես, օրինակ, Սոչիի Լազարյան թաղամասում հիմնադրվել է հայ առաքելական եկեղեցի (Սուրբ Սարգիս): Եկեղեցու հիմքի օծումը տեղի է ունեցել 1993 թ. հոկտեմբերին Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Տիգրան Կյուրեղյանի կողմից: Տաճարը ամբողջությամբ կանգնեցվել է 2011 թվականին:

Միևնույն ժամանակ երկրամասի հայ բնակչության որոշ մասը հարում է բողոքական համայնքին, որի ձևավորումը կապված է 1990-ական թթ. Հայաստանից այստեղ բողոքական հայերի ներգաղթի հետ¹⁶⁷: Մեծ Սոչին, բացի նրանից, որ նույնպես աչքի է ընկնում հայահոծությամբ, հայ ավետարանականության տեսանկյունից նշանավոր է նաև նրանով, որ այստեղ են կենտրոնացված Ռուսաստանի հայ ավետարանական կազմակերպչական կառույցներից երկուսը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Ռուսաստանի հայ ավետարանականների մի զգալի հատված էլ կենտրոնացած է այստեղ: Հայ ավետարանական եկեղեցիներ

¹⁶⁶ Տե՛ս **Н. Шахназарян**, Армяне Краснодарского края, Краснодар. ЮРПЦ, 2008, с. 6:

¹⁶⁷ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության հայության կրոնադավանանքային կողմնորոշումները, Երևան, 2011, էջ 30:

հիմնադրվեցին Սոչիում (1997 թ.) և Խոստայում (2001 թ.): Փոքրաթիվ ավետարանական հայեր կան նաև այլ վայրերում (օրինակ՝ Կրասնոդարում), որոնք, չունենալով իրենց կազմակերպչական կառույցները, ստիպված են օգտվել բողոքական այլ եկեղեցիներից: Համարելով իրենց հայության անբաժանելի մասը՝ հայ ավետարանականները միշտ էլ հաղորդակից են եղել հայության առջև ծառայած խնդիրներին ու մարտահրավերներին՝ փորձելով հայության մյուս հատվածների հետ համատեղ լուծել այդ խնդիրները կամ դիմագրավել այդ մարտահրավերներին¹⁶⁸: Նշենք, որ այս առումով հայ կաթողիկեսները խնդիրներ չունեն, քանի որ ընկալվում են որպես հայեր, այսինքն՝ էթնիկական գործոնն առաջնային է: Մյուս կողմից՝ հայ կաթողիկեսներն առանձին ինչ-որ ուժ չեն ներկայացնում և բավական լավ հարաբերություններ ունեն առաքելական հայերի հետ, ինչպես նաև լավ ինտեգրված են ռուսական սոցիումին: Միջոգավանական՝ առաքելական-կաթոլիկ հարթությունում հայերի միջև հակասություններ չկան: Երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող հանդուրժողականությունը մերձեցրել է նաև նրանց հետևորդներին, ինչն էլ նպաստել է ՌԴ հայության հասարակական համերաշխությանն ու համախմբմանը:

Հայկական համայնքի անդամներին միավորող գլխավոր իրադարձությունը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է՝ ապրիլի 24-ը: Այդ օրն անցկացվող միջոցառումներին մասնակցում են սփյուռքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Համայնքի անդամների շփման նշանակալի վայր են հայկական եկեղեցիները:

¹⁶⁸ Տե՛ս **Վ. Հովյան**, Բողոքական հայերը՝ տարադավան հայության շերտ // «Գլուբուս», Ազգային անվտանգություն, 2010, թիվ 1, էջ 15-20:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Ա. Ստավրոպոլի երկրամասի հայկական համայնքների
ժողովրդագրական իրավիճակը 20-րդ դարում**

19-րդ դարում հայության հոսքը Հյուսիսային Կովկաս շարունակվեց: 18-րդ դարում առաջացած հայկական գաղթավայրերի կողքին ձևավորվեցին նորերը (Արմավիրում, Եկատերինոդարում, Վլադիկավկազում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Գեորգիևսկում, Գրոզնիում, Ստավրոպոլում և այլն):

Առաջին աշխարհամարտի նախօրեին Հյուսիսային Կովկասում բնակվող հայերի թիվը հասել էր 70754-ի: 1915-1917 թթ. թուրքական ջարդերից մազապուրծ եղած արևմտահայերի և պարսկահայերի գաղթի հետևանքով Հյուսիսային Կովկասի հայ բնակչության թիվը մոտ 30 հազարով ավելացավ¹⁶⁹:

19-րդ դարի վերջին զգալի թվով հայեր են ներգաղթել Ստավրոպոլ Տրապիզոնի և Սամսունի գյուղերից: Կենտրոնացել են Ստավրոպոլ, Գեորգիևսկ, Եսենտուկի, Ժելեզնովոդսկ, Կիսլովոդսկ, Միներալնիե Վոդի, Սուրբ Խաչ, Պյատիգորսկ քաղաքներ-

¹⁶⁹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 645, **А. Арутюнян**, Первая мировая война и армянские беженцы (1914-1917гг.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, с. 56, **Б. Ованесов**, Отношение армянских общин Ставропольской губернии к Первой мировой войне (1914-1917гг.) // «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, մայիս-օգոստոս, N 2 (604), էջ 127, **Р. Багдасарян**, История армянской общины Грозного (середина XIX – 1920гг.), диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, специальность 5.00.01 – История армянского народа, Ереван, 1999, с. 160:

րում և մի շարք գյուղերում: Երկրամասի քաղաքաբնակ հայ բնակչությունը հիմնականում զբաղվել է առևտրով, ավելի ուշ՝ 19-րդ դարի կեսից, մասնակցել է երկրամասում արդյունաբերական ձեռնարկությունների (հիմնականում գյուղատնտեսական մթերքների վերամշակմանը) ստեղծման ու զարգացման գործին: Զգալի թվով հայեր աշխատել են տեղական իշխանության մարմիններում, առողջապահության և լուսավորության բնագավառներում: Գյուղերի, մասամբ նաև քաղաքների հայ բնակչությունը զբաղվել է հողագործությամբ և անասնապահությամբ:

Երկրամասի մի շարք քաղաքներում գործել են հայկական եկեղեցիներ և դպրոցներ, իսկ Պրիկումսկում եղել է հայկական մագիստրատ, մինչև 1870 թվականը պահպանվել է հայկական դատարանը¹⁷⁰:

1918-1920 թթ. ընթացքում Հյուսիսային Կովկասի քաղաքական քարտեզի վրա ձևավորվեցին և անհետացան մոտ մեկ տասնյակ խորհրդային և ոչ խորհրդային պետական կազմավորումներ: Դրանց սահմանները և անվանումները հիմնականում համընկան Ռուսական կայսրության փլուզման նախօրեին Հյուսիսային Կովկասում գոյություն ունեցող վարչատարածքային միավորների սահմաններին և անվանումներին (օրինակ՝ Թերեքի, Կուբանի, Ստավրոպոլի, Չեռնոմորսկի խորհրդային հանրապետություններ և այլն): Ռուսական կայսրության փլուզման նախօրեին Հյուսիսային Կովկասը վարչատարածքային առումով կազմված էր Կուբանի, Թերեքի, Դաղստանի մարզերից և Չեռնոմորսկի, Ստավրոպոլի նահանգներից:

¹⁷⁰ «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 474:

1918-1920 թթ. և դրանց նախորդած տարիներին Դոնի հալաչատ համայնքները չեն մտել Հյուսիսային Կովկասի աշխարհագրական և վարչատարածքային սահմանների մեջ, և միայն 1920-ական թթ. խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասը և Դոնը ժամանակավորապես միավորեց Հյուսիսկովկասյան երկրամասի մեջ¹⁷¹: Այս տարիներին ցեղասպանության հետևանքով հայության մեծաթիվ զանգվածներ տեղափոխվեցին Հյուսիսային Կովկաս: Դրանց էին ավելանում տարածաշրջանում անկայուն իրադրության հետևանքով հայերի տեղաշարժերը, ինչի արդյունքում Հյուսիսային Կովկասը դարձավ հայերի գլխավոր ապաստաններից մեկը: Վլադիկավկազից Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններ տեղափոխված գաղթականների թիվն այնքան մեծ էր, որ տեղական իշխանությունները պարենային ճգնաժամից և համաճարակներից խուսափելու համար ստիպված եղան արգելել նոր գաղթականների մուտքը քաղաքներ: Օրինակ՝ Արմավիրում ապաստանած գաղթականների թիվը հասել էր 18 հազարի, իսկ Եկատերինոդարում՝ 8 հազարի¹⁷²: Արդեն հունիսի 11-ի դրությամբ Արմավիրը, Սուրբ Խաչը, Մոզդոկը, Գեորգիևսկը և այլ քաղաքներ հրաժարվեցին ընդունել նոր գաղթականներ: Հազարավոր գաղթականներ մնացին ճանապարհներին և երկաթուղային կայարաններում: Նրանցից շատերը սովամահ եղան: Հաշվի առնելով Հյուսիսային Կովկասում գաղթականների համար ստեղծված անբարենպաստ պայ-

¹⁷¹ Մանրամասն տե՛ս **А. Цуциев**, Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), Москва, 2006, **В. Шнайдер**, Советское нациестроительство на Северном Кавказе (1917 - конец 1950 гг.): Закономерности и противоречия, Армавир, 2007:

¹⁷² Տե՛ս **Ս. Մինասյան**, Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., Երևան, 2016, էջ 32:

մանները՝ հունիսի 11-ից երկրամասի հայկական կազմակերպությունները և առանձին գործիչներ դիմեցին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին Հյուսիսային Կովկաս գաղթող հայերի հոսքն առժամանակ դադարեցնելու խնդրանքով¹⁷³:

Հյուսիսային Կովկասում գաղթականության խնդիրը այնքան հրատապ էր դարձել, որ այն քննարկելու նպատակով հունիսի 15-ին Միներալնիե վոդիում (Հանքային ջրերում) պետք է կայանար Թերեքի, Կուբանի և Ստավրոպոլի (խորհրդային) հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը:

Կուբան անցած գաղթականների հիմնական մասը ապաստանեց Արմավիր, Եկատերինոդար, Մայկոպ, Եյսկ, Անապա քաղաքներում, իսկ մյուս մասը՝ շրջանի բազմաթիվ գյուղերում և կազակների հանգրվանի վայրերում¹⁷⁴:

1918 թ. հունիս-հուլիս ամիսներին միայն Արմավիրում կուտակվել էին Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի 18 հազար գաղթականներ: Կուբանի գյուղերում և կազակների ստանիցաներում ապաստանած հայերի մի հատվածին խորհրդային իշխանությունը ապահովեց հողակտորներով: Ստավրոպոլ անցած Կարսի ու Ալեքսանդրապոլի հայ գաղթականների թիվը 10.000-ից անցնում էր: Նրանց մի հատվածը ապաստանել էր Վորոնցով-Ալեքսանդրովսկ գյուղում, իսկ մնացածը՝ գերազանցապես Ստավրոպոլ և Սուրբ Խաչ քաղաքներում¹⁷⁵:

Արմավիրում խորհրդային զորքերի կողմից իրականացրած հայերի ջարդերի հետևանքով շատերը փախան քաղաքից: «Աշխատավորն» իր 1918 թ. հոկտեմբերի 30-ի համարում գրում է.

¹⁷³ Տե՛ս Ս. Մինսայան, նշվ. աշխ., էջ 32:

¹⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 35:

¹⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

«Եկատերինոդարից եկածները հաղորդում են, որ Արմավիրի գաղթականները խուճապի մեջ փախել են Ստավրոպոլ և Եկատերինոդար և գտնվում են անօգնական ու խղճուկ դրության մեջ, ցանկանում են հայրենիք գալ»¹⁷⁶:

Քաղաքացիական կռիվներից տուժեց նաև Վլադիկավկազի հայությունը: 1918 թ. օգոստոսի սկզբին քաղաքը դարձավ հակամարտող ուժերի ռազմական գործողությունների թատերաբեմ: Այդ օրերին զոհվեց 12 հայ գաղթական: Վլադիկավկազում բուլշևիկների հաղթանակին նպաստեց հայ սպա Գրիգոր Սիրունյանի զրահագնացքը: Հյուսիսային Կովկասում մոլեգնող քաղաքացիական կռիվները խլեցին նաև խորհրդային և ոչ խորհրդային բանակներում ծառայող հարյուրավոր հայ զինվորների կյանքեր:

Այսպիսով՝ 1918 թ. մայիսին, երբ թուրքական զորքերը Թիֆլիսի նահանգ ներխուժեցին, սկսվեց այնտեղ ապաստանած արևմտահայ, արևելահայ գաղթականության և տեղի հայության գաղթը Հյուսիսային Կովկաս, որի հետևանքով 42-45 հազար գաղթականներ անցան Ռազմավիրական ճանապարհով, իսկ 40 հազարն էլ Փոթիից՝ նավերով: Այս գաղթականական զանգվածը Հյուսիսային Կովկասում հայտնվեց քաղաքացիական պատերազմի ճիրաններում¹⁷⁷:

1918 թ. հունիս-հուլիս ամիսներին հայ բուլշևիկների և դաշնակցական գործիչների պայքարի հետևանքով երկրամասի հայկական կազմակերպություններն ի վիճակի չեղան համակարգ-

¹⁷⁶ «Աշխատավոր», 1918, հոկտեմբերի 30, N 169:

¹⁷⁷ Տե՛ս Ս. Մինասյան, նշվ. աշխ., էջ 47:

ված օգնություն ցույց տալ գաղթականությանը, որի հետևանքով նրանց շրջանում զգալի զոհեր եղան¹⁷⁸:

Առաջին աշխարհամարտը, Հայոց ցեղասպանությունը, 1917 թ. ռուսական հեղափոխությունն ու նրան հաջորդած քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի տարբեր անկյուններում ապաստան գտած տասնյակ հազարավոր հայ փախստականների համար դարձան լրջագույն փորձությունների տարիներ:

Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրվեցին հայերի նոր զանգվածներով: ՌԽՖՍՀ-ում բնակվող հայության թվաքանակը, տեղաբաշխման շրջանները, լեզուներին տիրապետելը, գրագիտության աստիճանն ու այլ գործընթացներ հանգամանորեն դիտարկվել են Խորհրդային Ռուսաստանում, ապա՝ ԽՍՀՄ-ում 1920-1930-ական թթ. անցկացված մարդահամարներով: 1920-ական թթ. անցկացվել են 3 մարդահամարներ՝ 1920 թ. Համառուսաստանյան, 1923 թ.՝ ԽՍՀՄ քաղաքային և 1926 թ.՝ Համամիութենական մարդահամարները: 1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացվել են ևս երկու Համամիութենական մարդահամարներ՝ 1937 թ. և 1939 թ.¹⁷⁹: 1939 թ. մարդահամարը

¹⁷⁸ Տե՛ս **Ս. Մինասյան**, նշվ. աշխ., էջ 47:

¹⁷⁹ 1937 թ. մարդահամարն անցկացվեց բարդ պայմաններում, և նույն թվականի սեպտեմբերի 25-ին նրա արդյունքները հայտարարվեցին թերի, մարդահամարի կազմակերպումը՝ անբավարար: Իրականում այս մարդահամարի նյութերը «ձերբակալվեցին» և տասնամյակներ շարունակ պահվեցին արխիվներում: Մարդահամարն անցկացվեց գիտական նորմերի բացահայտ խախտումներով, քանի որ մամուլում, հրատարակված բրոշյուրներում և հանդեսներում արդեն նախանշվում էին մարդահամարի արդյունքները, ըստ որի՝ սպասվում էին «բացառիկ հաջողություններ և հսկայական տեղաշարժեր»՝ բնակչության թվի աճի, կրթության մակարդակի և գրագիտության, աթեիստական տրամադրությունների աճի կտրվածքով: ԽՍՀՄ քաղաքական ղեկավարության «պատվիրած» մարդահամարը վեր էր հանելու երկրի ժողովրդագրական պատկերի բուռն զարգացումը, որն անհամեմատ մեծ էր լինելու կապիտալիստական աշխարհում

կազմակերպված և նախապատրաստված էր, արդյունքում վեր հանվեց բնակչության և նրա էթնիկ կազմի վերաբերյալ 1930-ական թթ. պաշտոնական պատկերը:

1920 թ. Համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամարը վիճակագրական արդյունքներ էր ներկայացրել ռուսաստանյան 44 նահանգներից (ընդամենը 48-ն էին): Հայ ազգաբնակչությունն առկա էր մարդահամարի արդյունքներն ամփոփած 44 նահանգներից 41-ում: Մարդահամարի արդյունքում Ռուսաստանում (առանց ինքնավար միավորների) արձանագրվել է 137.119 հայ, որոնց մեջ գերակշռում էին քաղաքաբնակները¹⁸⁰:

Հյուսիսկովկասյան երկրամասի՝ Կուբան-Չեռնոմորիեի, Թեբրեքի, Ստավրոպոլի և Դոնի հայ ազգաբնակչությունը միասին կազմում էր 129.126 մարդ: Ռուսաստանում հայերով խիտ բնակեցված գյուղական շրջանները ևս գտնվում էին Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Կուբան-Չեռնոմորիեում և Դոնում¹⁸¹:

Հյուսիսային Կովկասի էթնիկ խնդիրներով զբաղվող Վ. Բելոզերովը իրավամբ նշում է, որ արդեն 1920 թ. Կուբան և Չեռնոմորիե նահանգների հայ բնակչության թվաքանակը համապատասխանաբար կազմում էր 45.3 հազար և 13.0 հազար, որոնցից 65.1 %-ը և 41.8 %-ը քաղաքային բնակիչներ էին¹⁸²: Որպես առա-

առկա արդյունքներից (տե՛ս Всесоюзная перепись населения 1937 г., Краткие итоги, Москва, 1991, с. 4-5):

¹⁸⁰ Մանրամասն տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, Ռուսաստանի հայ գաղթաբնակների պատմություն, էջ 298-299:

¹⁸¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁸² Տե՛ս В. Белозеров, Этническая карта Северного Кавказа, Москва, 2005, с 49:

վել հոժ հայ համայնքներ՝ նույն շրջանում Վ. Բելոզերովն առանձնացնում էր նաև Մայկոպի, Եկատերինոդարի, Սոչիի և Տուապսեի շրջանները: Հեղինակը ճիշտ է նկատում, որ հայության իսկական հոսքը տարածաշրջան սկսվել է 1894-1895 թթ., ապա՝ նաև Թուրքիայում 1915-1916 թթ. և Անդրկովկասում՝ 1918 թ. տեղի ունեցած հայության ջարդերից հետո, որոնց արդյունքում արդեն 1917 թ.՝ ներգաղթային գործընթացներից հետո, Հյուսիսային Կովկասում ձևավորվել էր բազմամարդ հայկական գաղութ՝ կազմելով երկրամասի բնակչության 1.3 %-ը¹⁸³:

Հյուսիսային Կովկասի որոշ շրջաններում հայության թվի կտրուկ աճը պայմանավորված էր հայ գաղթականների այստեղ ավելի միասնական հաստատմամբ. «Հեղափոխությունն ու քաղաքացիական պատերազմը հանգեցրին դեպի Հյուսիսային Կովկաս զգալի ներգաղթային հոսքի: Հայերի տեղավորման հիմնական արեալը դարձավ Տուապսե-Խադիժենսկը, ուր նրանք, ստանալով հող, սկսեցին աճեցնել ծխախոտ և եգիպտացորեն, սակայն մի մասն էլ հաստատվեց ավելի հյուսիս ընկած գյուղական վայրերում (Դոնի, Սալսկի, Թերեքի և Ստավրոպոլի օկրուգներում) կամ էլ քաղաքներում (Վլադիկավկազում, Արմավիրում, Մոզդոկում և Պրիկումսկում)»¹⁸⁴:

1920 թ. անցկացված մարդահամարն առաջինն էր 1920-ական թթ. և տեղեկատվական լուրջ հիմք դարձավ հաջորդ մարդահամարների անցկացման ժամանակ՝ հնարավորություն ընձեռելով հետևել ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններին Ռուսաստանում:

¹⁸³ Տե՛ս **В. Белозеров**, Этническая карта Северного Кавказа, с 49:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 55:

1923 թ. ԽՍՀՄ-ում անցկացվեց առաջին մարդահամարը, որն ընդգրկում էր միայն քաղաքային բնակավայրերը և պարունակում էր վիճակագրական տվյալներ ոչ միայն էթնիկ կազմի, սեռի, այլ նաև բնակչության զբաղվածության վերաբերյալ (ինքնագործ, ոչ ինքնագործ խմբեր)¹⁸⁵:

Մարդահամարով արձանագրված ՌԽՖՍՀ 195.410 հայագգի բնակիչները գլխավորապես կենտրոնացած էին Դոնի, Չեռնոմորիեի, Թերեքի, Կուբանի, Արմավիրի, Մայկոպի և Ստավրոպոլի (2.237 մարդ) օկրուգներում:

1926 թ. դեկտեմբերի 17-ի Համամիութենական մարդահամարը ցույց տվեց ՌԽՖՍՀ-ում բնակվող հայության իրական թվաքանակն ու տեղաբաշխման շրջանները: Հյուսիսկովկասյան երկրամասի բոլոր նահանգներն ու ինքնավար հանրապետությունները հայաբնակ էին: Հյուսիսային Կովկասի հայությունը միասին կազմում էր 168.109 մարդ (որից Դաղստանի ԻԽՍՀ-ում՝ 5923 հայ): Հյուսիսային Կովկասի և Դոնի հայ բնակչությունը միասին կազմում էր ՌԽՖՍՀ ամբողջ հայ բնակչության 86 %-ը:

ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության մոտ 87 %-ի համար հայերենը մայրենի լեզուն էր, իսկ 11,6 %-ի համար՝ ռուսերենը (մնացյալը նշել են այլ լեզու): Գրագետ էր ՌԽՖՍՀ հայության մոտ 50 %-ը, իսկ վերջիններիս կեսից ավելին գրագետ էր նաև իր ազգային լեզվի իմացության առումով: Հայերենը մայրենի լեզու էր համարում Չեռնոմորիեի օկրուգի հայ ազգաբնակչության 97,6 %-ը, որն ամենաբարձր ցուցանիշն էր ՌԽՖՍՀ-ում: Արդեն 1920-ական թթ. ՌԽՖՍՀ-ում կային հոծ հայ բնակչություն ունե-

¹⁸⁵ Մանրամասն տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 303:

ցող քաղաքներ, որոնց գերակշիռ մասը գտնվում էր Հյուսիսային Կովկասում և Դոնում: ՌԽՖՍՀ քաղաքային հայ բնակչության թիվը 116.157 էր, գյուղականը՝ 79.253: Այսպես, ամենամեծ թվով քաղաքային հայ բնակչություն ուներ Ռոստով-Նախիջևանը՝ 17.592, ապա՝ Արմավիրը՝ 13.768, Կրասնոդարը՝ 13.469, Մոսկվան՝ 6.369 մարդ: Ստվար քաղաքային հայ բնակչություն ունեին Նովոռոսիյսկը՝ 4.122, Պյատիգորսկը՝ 4.294, Պրիկումսկը՝ 4.924 և Ղզլարը՝ 3.156¹⁸⁶: Մեծաթիվ հայություն էր ապրում նաև ինքնավար քաղաքներ Վլադիկավկազում և Գրոզնիում¹⁸⁷:

Քաղաքաբնակ հայերը մեծ թիվ էին կազմում նաև Հյուսիսային Կովկասի մի շարք այլ վայրերում՝ Կիսլովոդսկում, Կրոպոտկինում, Մոզդոկում և այլն. «Հյուսիսային Կովկասի խոշոր քաղաքներում, Կուբանում և Ստավրոպոլում հայերը երրորդն էին ռուսներից և ուկրաինացիներից հետո»¹⁸⁸: Քաղաքային հայ բնակչությունն իր թվաքանակով երրորդն էր Արմավիրում (ամբողջ բնակչության 19 %-ը), Կրասնոդարում (8.6%-ը), Նովոռոսիյսկում (6.3 %-ը) և Պյատիգորսկում (7.9 %-ը): Թերեքի օկրուգի Պրիկումսկ և Դալստանի Ղզլար քաղաքներում հայերն իրենց թվաքանակով երկրորդն էին՝ կազմելով բնակչության համապատասխանաբար 31 %-ը և 33 %-ը: ՌԽՖՍՀ ամենահայաշատ քաղաք Ռոստով-Նախիջևանում հայերն իրենց թվաքանակով էթնիկ խմբերի մեջ չորրորդն էին՝ կազմելով քաղաքի բնակչության մոտ 5.7 %-ը:

¹⁸⁶ Տե՛ս **Հ. Ալեքսանյան**, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2014, էջ 65:

¹⁸⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸⁸ Տե՛ս **Ա. Տերեչենկո**, նշվ. աշխ., էջ 5:

ՌԻՖՅԱԿ գյուղական հայ բնակչությունը ևս, գլխավորապես Հյուսիսային Կովկասում էր բնակվում և տեղաբաշխված էր երկրամասի, առանց բացառության, բոլոր վարչական միավորներում և օկրուգներում, բայց առանձնանում էին հոծ բնակության մի քանի շրջաններ: Ամենահայաշատ գյուղական շրջանը Դոնի օկրուգի Մյասնիկյանի շրջանն էր, որտեղ բնակվում էր ամբողջ ՌԻՖՅԱԿ գյուղաբնակ հայության 30,3 %-ը (24.059 մարդ): 1926 թ. Մյասնիկյանի շրջանն ուներ 6 գյուղխորհուրդ, 15 բնակավայր՝ 4434 տնտեսությամբ: Դոնի օկրուգի բոլոր 11 գյուղական շրջաններում էլ կար հայ բնակչություն. Դոնի գյուղաբնակ հայության թվաքանակի կտրվածքով երկրորդը Մեչետինսկի շրջանն էր, որտեղ բնակվում էր 1.064 գյուղաբնակ հայ¹⁸⁹:

ՌԻՖՅԱԿ-ում հայ գյուղական բնակչության թվաքանակով երկրորդը Չեռնոմորիեի օկրուգի Սոչիի շրջանն էր, որտեղ բնակվում էր 17.237 մարդ կամ օկրուգի գյուղական հայության 80 %-ը, ստվար հայ բնակչություն ունեին Տուապսեի (2.081) և Անապայի (1.337) գյուղական շրջանները: Մայկոպի օկրուգի Արմյանսկի շրջանն ուներ 6218 գյուղական հայ բնակիչ, Բելորեչենսկի շրջանը՝ 1.109:

Կուբանի և Արմավիրի օկրուգներում գյուղական հայ բնակչությունը գրեթե հավասարաչափ տեղաբաշխված էր օկրուգների գյուղական շրջաններում: Կուբանի օկրուգի գյուղական հայ բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ շրջաններում՝ Ուստ-Լաբինսկում 1.224 հայ, Գորյաչի-Կյուչում՝ 1.022, Սլավյանսկում՝ 891: Արմավիրի օկրուգում գյուղական հայությունը թվով ամենամեծն էր Կրասպոտկինի շրջանում՝ 703 մարդ: Թերեքի օկրուգում

¹⁸⁹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Երևան, 2015, էջ 304:

առանձնանում էր Ստեպնովսկի շրջանը, որտեղ բնակվում էր 3.717 գյուղաբնակ հայ¹⁹⁰:

Հյուսիսկովկասյան տարածաշրջանի վարչական միավորների հայ ազգաբնակչությունը շարունակում էր կազմել ՌԽՖՍՀ-ի հայ ազգաբնակչության հիմնական մասը: ՌԽՖՍՀ Հյուսիսկովկասյան տարածաշրջանում 1920-1930-ական թթ. անընդհատ տեղի ունեցող տարածքային վերաձևավորումները հանգեցնում էին այս կամ այն վարչական միավորում հայության թվի պատկերի տատանումների, ինչը, սակայն, տարածաշրջանի հայ ազգաբնակչության ընդհանուր թվի վրա ազդել չէր կարող: Այսպիսին էին ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակն ու նրա տեղաբաշխման հիմնական շրջանները 1920-1930-ական թթ. և Հայրենականի մեծ պատերազմի նախօրյակին, որից հետո ՌԽՖՍՀ-ում, նրա առանձին տարածաշրջաններում տեղի ունեցան ժողովրդագրական պատկերի լուրջ փոփոխություններ:

1939 թ. մարդահամարով ամբողջ ԽՍՀՄ-ում բնակվում էին **2.152.860** հայեր (ԽՍՀՄ բնակչության 1.26 %-ը), որոնք ԽՍՀՄ էթնիկ խմբերի մեջ իրենց թվով գրավում էին 10-րդ տեղը: Այս մարդահամարով միայն Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր **1.061.997** հայ, այսինքն՝ ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության ընդամենը 49.33 %-ը, իսկ մյուս միութենական հանրապետություններում միասին՝ **1.090.863** հայ կամ 50.67 %-ը:

1939 թ. մարդահամարը վերջինն էր 1930-ական թթ. ու նախապատերազմական շրջանում, որի ավարտից հետո ամբողջ ԽՍՀՄ-ում, նրա առանձին հանրապետությունների էթնիկ ու ազ-

¹⁹⁰ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 305:

գային խմբերի մեջ տեղ գտան ժողովրդագրական լուրջ փոփոխություններ:

Հայրենական պատերազմում հայության վիթխարի ներդրումը, հարյուր հազարավոր մարդկային կորուստները, սովը և համաճարակները, Հյուսիսային Կովկասից և Ղրիմից հազարավոր հայերի աքսորը Միջին Ասիա, Ուրալ, Ալթայ և Սիբիր, լուրջ փոփոխություններ մտցրին միութենական հանրապետությունների, այդ թվում՝ ՌԽՖՍՀ հայության թվաքանակի և տեղաբաշխման շրջանների մեջ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին նկատելիորեն տուժեցին ՌԽՖՍՀ հայկական այն համայնքները, որոնք հայտնվեցին նացիստական օկուպացիայի տակ գտնվող շրջաններում, հայ բնակչությունը ենթարկվեց բռնությունների, տարհանման և աքսորի¹⁹¹:

ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչությունն աճեց նաև հետպատերազմյան շրջանում՝ գործուն մասնակցություն ունենալով երկրի պետական, տնտեսական, գիտամշակութային և կյանքի մյուս ոլորտներում:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները կարևոր նշանակություն ունեին, քանի որ առաջինն էին հետպատերազմյան շրջանում, որ արձանագրեցին բնակչության թվաքանակի վերաբերյալ նոր տվյալներ:

1959 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 2.786.912 մարդ¹⁹², որից միայն Հայկական ԽՍՀ-ում՝ 1.551.610 մարդ կամ 55.7 %-ը: Ըստ ՌԽՖՍՀ-ում 1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների՝ հայ ազգաբնակչու-

¹⁹¹ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 315:

¹⁹² Տե՛ս http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_59.php?reg=8:

թյունը Ստավրոպոլի երկրամասում կազմում էր 25618 մարդ, որից 17077-ը որպես մայրենի լեզու նշել է հայերենը, 8464-ը՝ ռուսերենը, իսկ այլ լեզուներ՝ 77-ը¹⁹³:

Հաջորդ Համամիութենական մարդահամարն անցկացվել է 1970 թ. և նպատակ ուներ ապահովելու ԽՍՀՄ «զարգացած սոցիալիզմի» փուլի ժողովրդագրական, տնտեսական, կրթական և այլ ոլորտների զարգացման վիճակագրական պատկերը:

1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ՌԽՖՍՀ-ում բնակվող հայերի թվաքանակը կազմում էր 298.718 մարդ կամ ԽՍՀՄ ամբողջ հայության 8.4 %-ը: Ստավրոպոլի երկրամասում հայերի թիվը կազմում էր 31096 մարդ, որից հայերենը մայրենի լեզու էր համարում 21188-ը, իսկ ռուսերենը՝ 9878-ը: Այլ օտար լեզուներ մայրենի էր համարում 30-ը: 3343-ը հայերենը նշել են որպես երկրորդ օտար լեզու, 18800-ը՝ ռուսերենը, իսկ 214-ը՝ այլ լեզուներ:

1970 թ. ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակը նախորդ մարդահամարի համեմատ գրանցել էր հայության աճ 42.740 մարդով կամ 16.7 %-ով: Հիշյալ մարդահամարով ՌԽՖՍՀ ամբողջ հայության 33 %-ը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում: Ռոստովի մարզում էր բնակվում ՌԽՖՍՀ հայության շուրջ 18 %-ը, որը նախորդ մարդահամարի համեմատ աճել էր 8.8 %-ով¹⁹⁴: Վերոհիշյալ երկու վարչական միավորների հայությունը միասին կազմում էին ՌԽՖՍՀ հայության կեսից ավելին: Հատկանշական է, որ Հյուսիսկովկասյան տարածաշրջանի բոլոր վարչատարածքային միավորներում առկա էր ստվար հայ

¹⁹³ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 316:

¹⁹⁴ Տե՛ս Национальный состав населения Ростовской области (по данным Всесоюзной переписи населения 1970 г.), Ростов на Дону, 1974, с. 5:

բնակչություն, ընդ որում՝ ինչպես գյուղական, այնպես քաղաքային շրջաններում:

1979 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ԽՍՀՄ-ում բնակվող հայությունն իր թվաքանակով երկրի էթնիկ խմբերի մեջ 8-րդն էր¹⁹⁵ և կազմում էր ամբողջ ԽՍՀՄ բնակչության ընդամենը 1.58 %-ը: Հայերենը մայրենի լեզու էր ՌԽՖՍՀ հայության ավելի քան 65 %-ի համար: 1979 թ. մարդահամարի տվյալներով Ստավրոպոլում ապրում էր 40504 հայ, որից 28805 քաղաքաբնակ էր, իսկ 11699-ը՝ գյուղաբնակ¹⁹⁶:

1989 թ. Համամիութենական վերջին մարդահամարը նախորդի համեմատ արձանագրել է ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակի աճ՝ 471.991 մարդով: Հայության թվաքանակի նկատելի աճ է արձանագրվել ՌԽՖՍՀ-ում. այստեղ բնակվող շուրջ **532.000** հայերից Հյուսիսային Կովկասում բնակվում էր 355.600 մարդ կամ ՌԽՖՍՀ հայության 66.7 %-ը, ընդ որում՝ նրանց գերակշիռ մասը (67 %) ապրում էր քաղաքներում¹⁹⁷:

1989 թ. մարդահամարով Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ-ում բնակվող հայերի 97.4 %-ը քաղաքաբնակներ էին և կենտրոնացած էին հիմնականում Գրոզնիում (դեռևս 1959 թ.՝ 11.533 հայ): Այստեղ բնակվող հայության 73.2 %-ն իր մայրենի լեզուն համարում էր հայերենը, 26.7 %-ը՝ ռուսերենը: 1990-ական թթ. սկզբից և Չեչնիայում ռազմական իրադարձությունների ծավալմանը զուգահեռ տեղի հայությունը հեռացել էր հիմնականում Ստավրո-

¹⁹⁵ Տե՛ս СССР в цифрах в 1984 году, Москва, 1985, с. 12:

¹⁹⁶ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 316:

¹⁹⁷ Տե՛ս А. Тер-Саркисянц, Армяне. История и этнокультурные традиции, Москва, 1998, с. 357:

պոլի երկրամաս¹⁹⁸: Ստավրոպոլի երկրամասում 1989 թ. մարդահամարի տվյալներով ապրում էր 72530 հայ, որից քաղաքաբնակ էր 47075-ը, իսկ գյուղաբնակ՝ 25455-ը¹⁹⁹:

1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբին զգալիորեն ուժեղացել է հայերի ներհոսքը Ստավրոպոլի երկրամաս: 1993 թ. հայերը կազմել են երկրամասի բնակչության մոտ 3 %-ը՝ զբաղեցնելով երրորդ տեղը ռուսներից ու կարաչայներից հետո²⁰⁰: Դա պայմանավորված էր 1990-ական թթ. սկզբներին չեչենական պատերազմների պատճառով, ինչի արդյունքում տեղի հայությունը հիմնականում հեռացավ Ստավրոպոլի երկրամաս²⁰¹:

Ընդհանուր առմամբ 50 տարվա ընթացքում՝ 1939-1989 թթ., ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակը ավելի քան կրկնապատկվել էր (2.152.860 հայ՝ 1939 թ., 4.623.232 հայ՝ 1989 թ.), իսկ Հայկական ԽՍՀ-ում՝ գրեթե եռապատկվել (1.061.997 հայ՝ 1939 թ., 3.083.616 հայ՝ 1989 թ.):

ՌԽՖՍՀ հայությունն իր հերթին 1920-1989 թթ. արձանագրեց թվաքանակի կտրուկ աճ՝ գրեթե քառապատկվելով: ԽՍՀՄ փլուզման նախօրեին ՌԽՖՍՀ-ում բնակվում էր Միության ամբողջ հայ բնակչության 11.5 %-ը: ԽՍՀՄ փլուզումից հետո էլ Ռուսաստանի հայ ազգաբնակչության թվաքանակը շարունակեց կտրուկ մեծանալ՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական պատճառներով:

¹⁹⁸ Տե՛ս **В. Белозеров**, Этническая карта Северного Кавказа, с. 293:

¹⁹⁹ Տե՛ս Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 года, Москва, 1990, с. 103-149:

²⁰⁰ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 474:

²⁰¹ Տե՛ս **Հ. Ալեքսանյան**, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991, էջ 13:

2002 թ. ՌԴ Հարավային Դաշնային օկրուգի 13 վարչական միավորներում միասին բնակվում էր 615.123 հայ, որը կազմում էր ՌԴ ամբողջ հայ բնակչության ավելի քան 54 %-ը: Ընդ որում՝ միայն Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում և Ռոստովի մարզում միասին բնակվում էր ավելի քան կես մլն հայ կամ ՌԴ ամբողջ հայության 47 %-ից ավելին: Ստավրոպոլի երկրամասում ապրում էր 149 249 հայ: Նրանցից ռուսերենին տիրապետում էր 147 644-ը²⁰²:

1990-ական թթ. սկզբից սկսած՝ ԽՍՀՄ-ի տարածքում բնակվող հայությունը կանգնեց, այսպես կոչված, սփյուռքացման գործընթացի առջև, ինչի արդյունքում նախկին խորհրդային պետությունների գրեթե մեծ մասում, ԱՊՀ երկրներում աստիճանաբար հիմնադրվեցին ընդհանուր և տեղային բնույթի համայնքային հասարակական կազմակերպություններ²⁰³: Մասնավորապես Ստավրոպոլ, Պյատիգորսկ, Բուդյոնովսկ, Եսենտուկ, Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ քաղաքներում կազմակերպվել են հայկական մշակութային միություններ և ընկերություններ, եկեղեցական խորհուրդներ:

Ստավրոպոլ քաղաքում գործում են Ստավրոպոլյան հայկական ազգային ինքնավարությունը և Ստավրոպոլի երկրամասի հայկական համայնքների համադրիչ խորհուրդը²⁰⁴: Ստավրոպոլում հետխորհրդային տարիներին լույս էր տեսնում «Նաիրի» թերթը:

²⁰² Տե՛ս Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), т. 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, с. 57-87:

²⁰³ Տե՛ս **Է. Մինասյան**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.), Երևան, 2018, էջ 5:

²⁰⁴ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 474:

Ինչպես նշվեց, 1990-ական թթ. խոշոր էր Ստավրոպոլի երկրամասի Բուդյոնովսկ քաղաքի հայկական համայնքը: Այդ տարիներին ձևավորվել է հայկական համայնքը՝ իր վարչություններով: Գործում է հայկական եկեղեցին: Քաղաքի հայկական դպրոցներից մեկում մտցվել է հայոց լեզվի և գրականության արտադասարանական ուսուցում²⁰⁵:

Ստավրոպոլի երկրամասի մյուս խոշոր հայկական համայնքը Գեորգիևսկում է, որտեղ, ըստ 1989 թ. մարդահամարի տվյալների, բնակվում էր 3162, իսկ 2003 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ հայությունը կազմում էր շուրջ 5000: Այստեղ հիմնադրվել է մշակութային «Կանչ» ընկերությունը: Քաղաքի երկու դպրոցներում կազմակերպվել են հայոց լեզվի և գրականության ֆակուլտատիվ ժամեր: Գեորգիևսկի շրջանի հայաբնակ գյուղերից են Նեզլոբնայան, Նովին, Կրասնոկոմսկը, Նիժնեգոլակը, Նովոզավետնոյեն, Օբիլնոյեն, Նովոույանովսկը և այլն²⁰⁶:

Ստավրոպոլի երկրամասի Կուրսկայա շրջանի Եդսիա հայկական գյուղը տեղի խոշոր հայկական բնակավայրերից է²⁰⁷: 1989 թ. մարդահամարի տվյալներով Եդեսիայում բնակվել է 3275, իսկ 2000 թ.՝ 3650 հայ: Գործում են հայկական երկու միջնակարգ և մեկ ութամյա դպրոցներ, պրոֆտեխուսումնարան,

²⁰⁵ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 474:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 475:

²⁰⁷ Գյուղը հիմնադրվել է 1791 թ., հիմնադիրները Խաչմաս և Քիվար գյուղերից (Հարավային Դաղստան) գաղթած հայերն են: 1830 թ. գյուղում կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ կից վարժարանով, իսկ 1884 թ.՝ երկրորդ դպրոցը: 1913 թ. Եդեսիայում ապրում էր 4.5 հազար հայ, որոնց միջոցներով 1914 թ. կառուցվել է նոր եկեղեցի:

Սուրբ Աստվածածին եկեղեցին, գրադարան, մշակույթի տուն և այլն²⁰⁸:

Եսենտուկիում հայերը բնակություն են հաստատել 20-րդ դարասկզբին: 1989 թ. մարդահամարի տվյալներով հայերի թիվը 1912 էր: 2003 թ. Եսենտուկիում բնակվում էր 7000-ից ավելի հայ: Գործում էին «Բարեկամություն» և մարզական «Արարատ» ընկերությունները, կառուցվել է հայկական մատուռ: Քաղաքի երկու դպրոցում հայ երեխաներին 2-10-րդ դասարաններում ուսուցանվում է հայոց լեզու և գրականություն: Հիմնվել է նաև կիրակնօրյա հայկական դպրոց²⁰⁹:

Ստավրոպոլի երկրամասի մեկ այլ բնակավայրում՝ Ժելեզնովոդսկում, հայերը բնակվել են դեռևս 20-րդ դարասկզբից: Վերջիններս այստեղ են գաղթել Սամսունի գյուղերից: Ըստ 1989 թ. մարդահամարի տվյալների՝ Ժելեզնովոդսկում բնակվել է 1015 հայ: Ներկայումս հայերի թիվը շուրջ 5000 է: Գործում է «Արշալույս» հայկական ընկերությունը:

Ժելեզնովոդսկին սահմանակից Կիսլովոդսկում հայերը բնակություն են հաստատել 19-րդ դարավերջից: 1980-1990-ական թթ. այստեղ են տեղափոխվել նաև Ադրբեջանից գաղթած հայեր: Գործում է հայկական մշակութային-բարեգործական «Կռունկ» ընկերությունը: 1997 թ. օծվել է նորակառույց Սուրբ Վարդան եկեղեցին²¹⁰:

Ստավրոպոլի երկրամասի մեկ այլ բնակավայր Միներալնիե Վոդիում հայերը բնակվել են 20-րդ դարասկզբից: Հայրենական պատերազմից հետո այստեղ հայեր են եկել Վրաստանի շրջան-

²⁰⁸ «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 475:

²⁰⁹ Տե՛ս նույն տեղում:

²¹⁰ Տե՛ս նույն տեղում:

ներից և Շիրակի գյուղերից: 2000-ական թթ. տեղի հայությունը կազմում էր շուրջ 2.5 հազար: Գործում էին «Հայք» ընկերությունը և կիրակնօրյա հայկական դպրոցը²¹¹:

Ստավրոպոլի երկրամասի ամենակազմակերպված համայնքներից է Պյատիգորսկի հայությունը, որը հարուստ մշակութային կյանք ունի: Դեռևս 1918 թ. այստեղ լույս էր տեսնում «Լրաբեր» հայկական թերթը, իսկ 1919-1920 թթ.¹ գրական-գեղարվեստական «Ալիք» ժողովածուն: ԽՍՀՄ բռնի ու տոտալիտար քաղաքականության հետևանքով 1930-ական թթ. այստեղ ազգային-մշակութային կյանքը սկսել է մարել և վերստին աշխուժացել է միայն 1980-1990-ական թթ.: Այդ տարիներին այստեղ բացվեց Վահան Տերյանի անվան մշակույթի հայկական ընկերությունը: 1992 թվականից Պյատիգորսկում գործում է Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին: 1992-1993 թթ. հրատարակվել է հայ առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի «Խաչքար» թերթը: 1995 թ. լույս է տեսել «Համայնք» («Амаһк») պատմամշակութային հանդեսը (ռուսերեն), իսկ 1997 թ.¹ «Արմյանսկի վեստնիկ» թերթը: 2000-ական թթ. տեղի հայության թվաքանակը հասավ 35-40 հազարի²¹²:

2010 թ. մարդահամարով ՌԴ հայ բնակչության մեծ մասը տիրապետում էր ռուսերենին: Նախորդ մարդահամարի տվյալների համեմատությամբ կտրուկ նվազել էր հայերենին տիրապետողների թվաքանակը: Հայերենին տիրապետում էր 660.935 մարդ, որից հայերը՝ ընդամենը 592.086 կամ ՌԴ հայ բնակչության ուղիղ 50 %-ը: Այս մտահոգիչ ցուցանիշն ամենացածրն էր երբևիցե անցկացված մարդահամարների ժամանակ արձա-

²¹¹ Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 475:

²¹² Տե՛ս նույն տեղում:

նագրված տվյալներից: Հայերենին տիրապետում էին նաև ՌԴ ոչ հայազգի քաղաքացիներ՝ ռուսներ՝ 30.537, ադրբեջանցիներ՝ 3.491, վրացիներ՝ 2.211, հույներ՝ 1.176, ուկրաինացիներ՝ 860, օսեր՝ 723 մարդ և այլն²¹³: Ըստ համառուսական վերջին մարդահամարի՝ Ստավրոպոլի երկրամասում ապրում էր 161 324 հայ, որից 159 708-ը տիրապետում էր ռուսերենին²¹⁴:

Հյուսիսային Կովկասի Դաշնային օկրուգում միասին բնակվում էր 190.825 հայ, ընդ որում՝ գերակշիռ մասը՝ միայն Ստավրոպոլի երկրամասում: Չեչենական և Ինգուշական Հանրապետություններում հայության փոքր թվաքանակը զգալիորեն պայմանավորված էր հետխորհրդային տարիներին տեղի ունեցած պատերազմական իրադարձություններով²¹⁵:

Այսպիսով՝ հայությունը Հյուսիսային Կովկասում բավական ակտիվ դերակատարություն ունի և համարվում է տեղի հիմնական բնակչությունը, որը վաղուց ինտեգրվել է տեղի հանրությանը, յուրացրել է տեղական լեզուն, ստեղծել է ազգային կազմակերպություններ: Սակայն հայկական համայնքը Ստավրոպոլում, ինչպես և ողջ Ռուսաստանում ունի լեզվապահպանության խնդիր: Ստավրոպոլի երկրամասում հայությունը աստիճանաբար դադարում է հիմնական լեզու համարել հայերենը՝ աստիճանաբար անցնելով ռուսերենի, ինչը մեծ վտանգ է հայապահպանության համար:

²¹³ Ст'а Итоги Всероссийской переписи населения 2010 года, (В 11 томах), т. 4, Национальный состав и владение языками, гражданство, книга 1, с. 11, 25:

²¹⁴ Ст'а նույն տեղում, էջ 76-113:

²¹⁵ Ст'а Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 400:

Բ. Ստավրոպոլի երկրամասի հայության հոգևոր-եկեղեցական կյանքը

Խորհրդային կարգերի հաստատմամբ հայ առաքելական եկեղեցին ենթարկվեց նոր հասարակարգի թելադրած օրենքներին. եկեղեցին և հոգևոր արժեքները թևակոխեցին իրավազրկման, նվաստացման և գոյապահպանման ժամանակաշրջան:

Խորհրդային Ռուսաստանում, ապա նաև խորհրդային մյուս հանրապետություններում ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու դեմ: Խորհրդային Ռուսաստանում ռուս ուղղափառ եկեղեցու նկատմամբ կիրառված պայքարի և բռնությունների մեթոդները դարձան էտալոնային մյուս հանրապետություններում:

Խորհրդային իշխանության՝ Ժողկոմխորհի առաջին օրենսդրական որոշումներից էր 1918 թ. հունվարի 20-ի «Խղճի ազատության, եկեղեցական և կրոնական ընկերությունների մասին» դեկրետը, որում ասվում էր. «Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդի ազատությունը ճանաչվում են բոլոր քաղաքացիների համար»²¹⁶:

1922 թ. Համառուսաստանյան կենտգործկոմը գաղտնի դեկրետ ընդունեց եկեղեցական արժեքների առգրավման մասին՝ սովի դեմ պայքարի, միաժամանակ սեփական գանձարանը լցնելու ու եկեղեցուն վճռական հարված հասցնելու նպատակով²¹⁷:

²¹⁶ Տե՛ս Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը կրոնի և եկեղեցու մասին, Երևան, 1960, էջ 55-56:

²¹⁷ Տե՛ս Վ. Բարխուդարյան, Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 316:

Ուղղափառ եկեղեցին, չդիմանալով աճող ճնշմանը, 1922-1923 թթ. տրոհվեց մի քանի հոսանքների, որոնցից նորոգչողական կամ «կենդանի կարմիր եկեղեցական հոսանքը խրախուսվում էր պետության կողմից՝ ուղղորդվելով պաշտոնական պատրիարքության դեմ: Նորոգչողական հոսանքը կամ «ազատ եկեղեցականների» շարժումը Կովկաս և Հայաստան թափանցեց կարճ ժամանակ անց՝ հանդես գալով որպես «ըմբոստացում» պաշտոնական եկեղեցու դեմ. «Ազատ եկեղեցու հիմնադրմանը 1925 թ. մայիսին հաջորդեց նաև «Ազատ եկեղեցական եղբայրության» ստեղծումը»²¹⁸:

«Ազատ եկեղեցի» շաբաթաթերթի առաջին համարում «Մեր նպատակն ու ծրագիրը» վերնագրի ներքո ներկայացված էր եղբայրության երկու հիմնական մասերից բաղկացած ծրագիրը, որը վերաբերում էր եկեղեցական կյանքի բոլոր ոլորտներին, և մատնանշվում էր՝ «Ռուսաստանից դուրս գտնված մեր եկեղեցական կյանքը իր վարչական և մասամբ էլ՝ ծխական խնդիրներում բոլորովին նման չէր ռուսահայ յեկեղեցական կյանքին»²¹⁹:

«Ազատ եկեղեցականները», նպատակ ունենալով պառակտել հայ եկեղեցին, մերժում էին հայ հոգևորականությանը և Գերագույն հոգևոր խորհուրդը՝ իբրև միակ օրինական իշխանություն ընդունելով կաթողիկոսին:

1930 թ. մայիսին վախճանվեց Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսը, և նրա տեղակալ Խորեն սրբազանը դիմեց Հայաստանի կենտգործկոմին և Ժողկոմխորհին՝ թույլատրելու գումա-

²¹⁸ Տե՛ս **Խ. Ղազարյան**, Բարենորոգչական նախաձեռնությունները հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999, էջ 218:

²¹⁹ **Հ. Տեր-Հարությունյան**, Մեր Նպատակը. Հայոց յեկեղեցական բարեփոխությունը յեվ նրան հասնելու միջոցները, Թիֆլիս, 1926, էջ 6:

րել Ազգային եկեղեցական ժողով, և իշխանությունները զիջեցին՝ հակառակ այն պարագային, որ ռուս ուղղափառ եկեղեցին չուներ հոգևոր առաջնորդ և սկսած 1925 թվականից՝ բազմիցս բարձրացնում էր այդ հարցը:

Կաթողիկոսի առաջիկա ընտրություններին մասնակցելու համար հոգևոր թեմերում անհրաժեշտ էր անցկացնել պատգամավորների ընտրություններ. «Սակայն ԽՍՀՄ-ում գտնվող թեմերի մեծ մասում բացակայում էին առաջնորդները, որոնք պիտի կազմակերպեին ընտրությունները: Այդ նպատակով էլ Ս. Էջմիածնից ուղարկվեցին Մայր աթոռի ներկայացուցիչներ: Մինչույն ժամանակ ԳՀԽ-ը որոշեց ... առաջադրել Խորհրդային Միության սահմաններում եղած թեմերի առաջնորդներին ընտրությունների գործը ղեկավարելիս առաջնորդվել նախապես տրված հրահանգներով, միաժամանակ հարմարվելով պայմաններին՝ արագացնել և թեթևացնել պատգամավորների ընտրության գործը»²²⁰:

1931 թ. դրությամբ խորհրդահայ թեմերն անմխիթար վիճակում էին գտնվում. Հյուսիսային Կովկասի և Աստրախանի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանը ծանր հիվանդ էր և խնդրում էր Մայր աթոռին հարգել հրաժարականի իր դիմումը: Նոր Նախիջևանի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, վկայակոչելով իր գիտական աշխատանքները, խնդրում էր իրեն փոխադրել Էջմիածին: Մնացյալ թեմերում նույնպես կարող ենք փաստել, որ գրեթե նույն իրավիճակն էր:

²²⁰ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ.՝ Բեիբուդյան Ս., Երևան, 1994, էջ 244:

Խորհրդային Ռուսաստանի հայկական թեմերում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում տիրող անմխիթար վիճակը մանրամասն բնորոշված է կաթողիկոսին ուղղված Նովոռոսիյսկի ծխատեր Գևորգ քահանա Օրդուխանյանի դիմումներում: Վերջինս ճաշակեց նաև աքսորի դառնությունը: Նա գրում էր. «Մեր եկեղեցին վտանգի մեջ է, մեր սուրբ հավատը ոտնակոխ է լինում, մանավանդ վտանգի մեջ է մեր խեղճ ու կրակ ազգի ամբողջությունը... մեր կենտրոնը՝ Արմավիրը, լուռ է Զաքարիայի նման. ո՛չ մի միջոց, ո՛չ մի խորհրդակցություն...: Երևանից եկած մի քանի երիտասարդների քարոզությունները հասարակության խավարագույն մասերում հաջողություն են գտնում...: Իրավապես սա մեր՝ ռուսահայերիս եկեղեցու ճգնաժամն է. իրավապես սա Ռուսաստանում ցրված անթիվ հայերի դամբանականն է»²²¹:

Գևորգ քահանա Օրդուխանյանը 1925 թ հունվարի 3-ին կաթողիկոսին ուղարկած իր նամակում գրում է, որ իրեն ձերբակալել են նախորդ տարվա օգոստոսի 9-ին: Ապա ներկայացնելով Նարիմում (Տոմսկի նահանգ) իր անհուսալի դրությունը, հագուստի և սննդի պակասությունը՝ օգնություն էր հայցում:

Նովոռոսիյսկի հայոց եկեղեցու և Մայկոպի հայաբնակ գյուղերի (Հայկական շրջան) աղոթատների փակման կապակցությամբ Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոսը դիմել է ԳԼԽ-ին իր 1929 թ. ապրիլի 25-ի և մայիսի 22-ի նամակներով, որոնցում մասնավորապես ասվում էր. «Անցյալ 1928 թվի վերջին ամիսներին Հայկական ռայոնի գյուղական իշխանության ներկայացուցիչներն ու գյուղական մի քանի կոմսոմոլներ սկսել են հայ հավատացյալներին նե-

²²¹ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ.՝ Բեհբունյան Ա., էջ 49-50:

ղել և սպառնալիքներով պահանջել, որ աղոթատները հանձնեն: Հայկական ռայոնի հայ գյուղերից գլխավորն ու ազդեցիկը Խոյթա գյուղն էր եղել, որն ուներ Սուրբ Խաչ աղոթատուն 1883 թվից: 1928 թվի նոյեմբերի վերջերին տեղական իշխանությունը սպառնալիքներով գրավել է այդ աղոթատունը: Այնուհետև նույնպիսի միջոցներով վերցրել են նաև Գունայկա, Պերեվալնայա, Սադովայա, Մարաթուկ գյուղերի հայոց աղոթատները»²²²:

Ստավրոպոլի հայկական եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը տեղի է ունեցել 1922 թ., այն գլխավորել է Մայանցը: Ստավրոպոլի հայ լուսավորչական միությունը 1923 թ. հունիսի 29-ին դիմել է Ստավրոպոլի մարզգործկոմին՝ գրանցելու միությունը համապատասխան գործող կարգի, ըստ այդմ՝ որպես միության հիմնադիրներ հանդես են եկել թվով 178 հավատացյալ հայեր, որոնք ստորագրել են վերոհիշյալ դիմումի տակ: Արդեն 1924 թ. փետրվարին պայմանագիր է կնքվել Ստավրոպոլ քաղաքի Բանվորների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհրդի հետ, ըստ որի՝ Ստավրոպոլի հայկական եկեղեցին անժամկետ և անվճար օգտագործման էր վերցվում իր եկեղեցական-ծիսական առարկաներով՝ դրանք պահպանելու պարտավորություններով: Հարկ է նշել որ, այս պայմանագրի տակ ստորագրել են 48 անձինք²²³: Պայմանագրում հստակորեն մատնանշված էին կրոնական համայնքի գործունեության պայմանները՝ հակախորհրդային ուղղվածության քաղաքական հավաքների անթույլատրելիություն, գրքերի, թերթիկների բաժանում, վա-

²²² Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ.՝ Բեիրուդյան Ս., էջ 185-186:

²²³ Տե՛ս **Б. Аванесов**, *Духовная жизнь армянской общины города Ставрополь //* «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2006, № 2 (108), էջ 95:

ճառքի բացառում: Արգելվում էր ելույթների և քարոզի անցկացումը՝ ուղղված խորհրդային իշխանության կամ նրա ներկայացուցչի դեմ և այլն:

Ստավրոպոլի հայկական եկեղեցու գործունեությունն իրականացվում էր խիստ ծանր պայմաններում և հակակրոնական քարոզարշավի մթնոլորտում: Արդեն 1929 թ. վերջին Ստավրոպոլի հայկական եկեղեցին և նրա հետ միասին նաև ծխական դպրոցը փակվեցին, գույքն առգրավվեց, իսկ կից գտնվող գերեզմանները թալանվեցին:

Եկեղեցու դեմ ուղղված պայքարը, ինչպես նաև հակակրոնական քարոզարշավն ենթադրում էր ոչ միայն եկեղեցիների փակում, նրա սպասավորների նկատմամբ բռնությունների և աքսորի կիրառում, այլև ֆինանսական հարկադրանք: 1930 թ. ապրիլի 9-ին Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանի՝ կաթողիկոսին ուղղված նամակից պարզվում էր, որ Արմավիրի ֆինտեսչությունը ծանր հարկեր է դրել առաջնորդի վրա՝ պահանջելով դրա անհապաղ մուծումը: Գրեթե նույն բովանդակությամբ 1930 թ. փետրվարի 26-ին ԳՀԽ-ի անունով հայտարարություն է արել Նոր Նախիջևանի թեմական խորհուրդը: Այստեղ խոսվում էր ծանր հարկումների պատճառով գործից հրաժարված Մեծ Սալա և Նիսվիթա գյուղերի քահանաների, ինչպես նաև փակված եկեղեցիների մասին:

Այսպիսի պայմաններում 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարվեց Ազգային եկեղեցական ժողով, որին մասնակցեցին ԽՍՀՄ և արտասահմանյան հայկական թեմերի պատգամավորները: Նոյեմբերի 12-ին Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Խորեն

արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, իսկ Գերագույն հոգևոր խորհրդի նախագահ՝ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը:

1934 թ. մայիսին կաթողիկոս Խորեն Ա-ն իր կոնդակով Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին նշանակեց Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների կառավարությունների ներկայացուցիչների հետ տարվող բանակցություններում հայ եկեղեցու ներկայացուցիչ: 1934 թ. արտասահման ուղարկվեց ԳՀԽ նախագահ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը՝ որպես նվիրակ և լիազոր ներկայացուցիչ սփյուռքի եկեղեցական գործերում:

Փարիզի «Վէմ» հանդեսը փաստում էր Էջմիածնի իրավագուրկ վիճակը Խորհրդային Միությունում, ակտիվության կոչ էր անում սփյուռքի կենտրոններին. «...Խորհրդային սահմաններում եկեղեցին, ազգային հաւաքական կեանքի տեսակէտից, իրաւագուրկ եւ այլեւս անարժէք հաստատութիւն է...»²²⁴: «Վէմ» իր էջերում լուրջ քննարկման առարկա էր դարձրել Էջմիածնում մշակվող հայ եկեղեցու Սահմանադրության նախագիծը և այդ խնդրի վրա էր հրավիրում ամբողջ սփյուռքի, մանավանդ նրա ղեկավար շրջանների ուշադրությունը՝ գտնելով, որ այդ եկեղեցական ժողովը պետք է գումարել սփյուռքում և այն առավելապես շոշափելու է իրենց շահերը:

1930-ական թթ. հայ հոգևորականությունը բռնաճնշվեց, որի արդյունքում փաստացիորեն հայ առաքելական եկեղեցու կառույցը ՌԽՖՍՀ տարածքում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում վերացվեց: Փակվեցին, ապա տարբեր տարիների վերացվեցին Արմավիրի, Աստրախանի, Նոր Նախիջևանի,

²²⁴ «Վէմ», Փարիզ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1934, էջ 121:

Կրասնոդարի, Ստավրոպոլի, Սուրբ Խաչի (Բուդյոնովսկի), Պյատիգորսկի, Գրոզնու, Ղզլարի, Մոզդոկի և այլ բնակավայրերի հայկական եկեղեցիները²²⁵:

1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Խորեն Ա Մուրադբեկյանը բռնության զոհ դարձավ: Կանխազգալով մոտալուտ դժբախտությունը՝ Խորեն Ա-ն փորձառու գործչին հատուկ հեռատեսությամբ, տեղակալ էր նշանակել՝ աչքի առաջ ունենալով Գևորգ Ե կաթողիկոսի մահվանից հետո հայ եկեղեցում ստեղծված խառնակ վիճակը: Հայ եկեղեցու շուրջ ստեղծված տագնապը, խորհրդահայ համայնքներից զատ, փոխանցվել էր նաև արտասահմանի հայաշատ կենտրոններ:

1938 թվականը սահմանագիծ դարձավ Խորհրդային Միությունում հայ առաքելական եկեղեցու դեմ վճռական քայլերի անցման համար. հայ եկեղեցու գլխին կախվել էր փորձությունների նոր վտանգ:

Խորհրդային իշխանությունը արտասահմանի հայության աչքում իր հեղինակությունը բարձրացնելու և նացիզմի դեմ պայքարում եկեղեցու ունեցած կշիռն օգտագործելու համար երկրի ներսում թույլատրեց Ազգային եկեղեցական ժողովի անցկացում: 1941 թ. ապրիլի 10-13-ը տեղի ունեցած Ազգային եկեղեցական ժողովը ցանկալի արդյունքի չբերեց, կաթողիկոս չընտրվեց. «Թեև արտասահմանյան թեմերից մի քանի պատվիրակներ էին ժամանել, և ժողովի աշխատանքներին մասնակցեցին Խորհրդային Միության առկա թեմերի ներկայացուցիչները, սա-

²²⁵ Տե՛ս **В. З. Акопян**, Армянская Апостольская церковь города Пятигорска, Пятигорск, 2007, с. 13:

կայն ներկաների թիվը չէր բավարարում՝ կաթողիկոսի ընտրություններ անցկացնելու համար»²²⁶:

Արտասահմանի հայ եկեղեցական թեմերը մի քանի պատվիրակ էին ուղարկել ժողովին, ինչն ակնհայտ անվստահություն էր նշանակում խորհրդային վարչակարգի և նրա եկեղեցական քաղաքականության հանդեպ: Այնուհանդերձ, ժողովը որոշեց ԳՀԽ նախագահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանին թողնել ղեկավարել հայ առաքելական եկեղեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի Ազգընտիր տեղապահի կոչումով, իսկ ԳՀԽ-ն լիազորվեց «...պարբերաբար ուղարկել լիազոր ներկայացուցիչներ միութենական հանրապետության և արտասահմանյան թեմեր՝ ծանոթանալու նրանց իրական վիճակին, հոգևոր իշխանության գործունեության, վերահսկողության և ըստ հարկի ցուցումներ տալու նպատակով»²²⁷: Ազգային եկեղեցական ժողովի այս որոշումը ճիշտ էր ստեղծված իրավիճակում և «համապատասխանում էր ինչպես էջմիածնի կաթողիկոսության, այնպես էլ ԽՍՀՄ-ում գտնվող հայոց թեմերի հավատացյալների ձգտումներին, որոնց նպատակն էր վերականգնել և վերաբացել բուլճարի կողմից փակված վանքերն ու եկեղեցիները»²²⁸:

Նշված խնդիրներին հետամուտ լինելուն խանգարեց ռազմաքաղաքական իրավիճակի սրումը. 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Ինչպես ռուս ուղղափառ եկեղեցին, այնպես էլ հայ առաքելական եկեղեցին չէր կարող հեռու մնալ տեղի ունեցող իրադարձություններից, ժողովրդին պայքարի ոգեկոչելուց: Արդեն 1941 թ. հուլիսի 5-ին հայ

²²⁶ Տե՛ս Ս. Ստեփանյանց, նշվ. աշխ., էջ 135:

²²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 135-136:

²²⁸ Տե՛ս նույն տեղում:

եկեղեցու Գերագույն հոգևոր խորհուրդը թշնամու դեմ պայքարի կոչով դիմեց աշխարհի հայ հավատացյալներին:

Հայ առաքելական եկեղեցուն պարտադրված վիճակից դուրս բերելու և նրա դիրքերը ամրապնդելու միակ ճանապարհը Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին իրավացիորեն տեսնում էր ակտիվ քաղաքական գործունեության ու բարեգործության մեջ:

Հայ եկեղեցու ձեռնարկների գնահատականն էր Ստալինի՝ 1943 թ. հունվարի 26-ին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին ուղղված հեռագիրը, որում ասվում էր. «Խնդրում եմ իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու Էջմիածնի կաթողիկոսարանի հոգևորականությանը...»²²⁹: Այս արձագանքին սպասող հայ եկեղեցուն ակտիվ գործելու և պաշտոնապես ճանաչվելու իրավունք էր տրվում: Ավելին՝ ընդգծելու համար պետություն-եկեղեցի «շտկված» հարաբերությունները Ստալինի ցուցումով 1943 թ. նոյեմբերի 28-ին Ժողկոմ-խորհրդ հայտերի ներկայացման դեպքում եկեղեցիների վերաբացման կարգի մասին որոշում կայացրեց, որը, սակայն, մասամբ իրականացվեց:

1945 թ. ապրիլի 19-ը շրջադարձային էր հայ եկեղեցու պատմության մեջ: Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին Կրեմլում ընդունեց Ի. Ստալինը: Այս հանդիպմանն Ազգրնտիր տեղապահը ներկայացրեց Էջմիածնի հետագա գործունեության համար անհրաժեշտ պահանջ-խնդիրներ, սակայն դրանցից ամենազխավոր ձեռքբերումն Ազգային եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսի ընտրություններ անցկացնելու թույլտվությունն էր:

²²⁹ Ա. Տերչանյան, Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.), Երևան, 2001, էջ 47:

Ազգային եկեղեցական ժողովի բացումը տեղի ունեցավ 1945 թ. հունիսի 16-ին, որին արտասահմանի թեմերից ներկա էին Եգիպտոսի, Ամերիկայի, Արևելյան, Բուլղարիայի, Իրանա-Հնդկական և Թեհրանի, Ռումինիայի և Աստրախանի թեմական ներկայացուցիչները՝ իրենց թեմերի պատգամավորներով, ՍՍՌ Միության թեմերից՝ Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Բաքու-Թուրքեստանի, Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի, Բեսարաբիայի թեմական առաջնորդները՝ իրենց պատգամավորներով. Ընդամենը՝ 102 պատգամավոր, որոնցից՝ 28 հոգևորական և 74 աշխարհական²³⁰:

Հունիսի 22-ին Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը (Գևորգ Զ): 1945 թ. Ազգային եկեղեցական ժողովը շրջադարձային նշանակություն ունեցավ. «Եկեղեցու կառուցվածքում հայտնվեցին նոր թեմեր ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում»²³¹:

1920-1930-ական թթ. խորհրդահայ թեմերում՝ Հյուսիսային Կովկասից մինչև Հեռավոր արևելք, հայ եկեղեցին և նրա սպասավորներն ենթարկվեցին բռնությունների, դատավարության, աքսորի և պառակտման: Խորհրդային բռնաճնշիչ համակարգի՝ հայ եկեղեցուն, նրա սպասավորներին ու հավատացյալներին հասցրած վնասները հսկայական էին: Հետպատերազմյան տարիներին հայ առաքելական եկեղեցին դանդաղորեն, սակայն կարողացավ վերագտնել իրեն և կրկին ստանձնել իր հոգևոր-ազգային դերակատարությունը:

Միջազգային ռազմաքաղաքական իրավիճակով և Երկրորդ համաշխարհային պատերազմով պայմանավորված՝ խորհրդ-

²³⁰ Տե՛ս Ա. Տերչանյան, նշվ. աշխ., էջ 97:

²³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 174:

դային իշխանությունների վերաբերմունքը հայ եկեղեցու հանդեպ սկսել էր փոխվել արդեն 1940-ական թթ.: Խորհրդային իշխանությունների ճնշումը թուլացավ, որն ամենևին էլ չէր նշանակում եկեղեցու հետ հաշտություն և նրա դիրքերի վերականգնում: Այդ դժվարին փուլում հայ առաքելական եկեղեցու ղեկի մոտ կանգնած էր Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանը:

Այսպիսով՝ հայ առաքելական եկեղեցու գահին յոթ տարվա բացակայությունից հետո բարձրացավ Գևորգ Զ-ն, որին վիճակված էր անելանելի թվացող իրավիճակից դուրս բերել եկեղեցին: Ազգային եկեղեցական ժողովն ընդունեց հայ առաքելական եկեղեցու նոր սահմանադրություն, իսկ շատ չանցած՝ վերականգնվեց Ճեմարանի գործունեությունը, սկսեցին գործել տպարանը, վանքի գրադարանը, «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը: Հետևում մնացին սարսափելի հալածանքներն ու խորը ճգնաժամը, եկեղեցին վերագտավ իրեն, ամրապնդեց խարխուլված հիմքերը, վերականգնվեցին Էջմիածնի հեղինակությունն ու դերը, նրա համազգային նշանակությունը: 1945 թ. Ազգային եկեղեցական ժողովն իր որոշումներով, Ամենայն հայոց հայրապետի ընտրությամբ հայ եկեղեցուն վերակազմվելու և գործելու հնարավորություն ընձեռեց՝ իր պատմական դերը կատարելու հայության հոգևոր-մշակութային կյանքում:

Գևորգ Զ Չորեքյանի գահակալությամբ հայ առաքելական եկեղեցում սկսված նորոգիչ գործընթացը շարունակվել և ավելի ամուր հիմքերի վրա է դրվել Վազգեն Վեհափառի օրոք:

Հայկական ԽՍՀ մինիստրների սովետին կից ՀԵԳԽ-ի (Հայ եկեղեցու գործերի խորհրդի) նախագահ Հ. Գրիգորյանի՝ Հայկական ԽՍՀ մինիստրների սովետի նախագահ Ա Քոչինյանին ուղղված 1955 թ. մայիսի 6-ի գրությունը տեղեկանք էր Ամենայն

հայոց կաթողիկոսի ընտրության, ազգային-եկեղեցական ժողովի անցկացման վերաբերյալ: Դրա համաձայն՝ Ազգային եկեղեցական ժողովին մասնակցելու համար արտասահմանյան թեմերից սպասվում էր 31 հոգևորական և 39 աշխարհական, ներքին թեմերից՝ 12 հոգևորական և 88 աշխարհական մասնակից: Ըստ այդմ՝ Նոր Նախիջևանի և Բաքու-Թուրքեստանի թեմերից մասնակցելու էին 1-ական հոգևորական և 6-ական աշխարհականներ, Հյուսիսային Կովկասի թեմից և Լեռնային Ղարաբաղից՝ 1-ական հոգևորական և 7-ական աշխարհականներ, Վրաստանի թեմից՝ 1 հոգևորական և 17 աշխարհական, իսկ Կիրովաբաղից՝ 1 հոգևորական և 4 աշխարհական²³²:

1955 սեպտեմբերի 30-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստում Ամենայն հայոց 130-րդ կաթողիկոս է ընտրվել Վազգեն եպիսկոպոս Պալճյանը (Վազգեն Ա, 1955-1994 թթ.): Վազգեն Ա կաթողիկոսն իր գահակալության տարիներին մեծ ավանդ ունեցավ հոգևոր-մշակութային վերածննդի, եկեղեցաշինության, հայ եկեղեցու միասնության հաստատման և հայրենիք-սփյուռքյան համայնքներ կապերի ամրապնդման գործում: Վազգեն Ա-ի գահակալության տարիները, հակառակ Խորհրդային Միության ճնշող քաղաքականությանը, եղել են բեղուն ու արդյունավետ, հայ եկեղեցին իր հովվապետի ճկուն գործելակերպի շնորհիվ մնացել է իր բարձունքի վրա²³³:

Վազգեն Ա-ի ազգանվեր, եկեղեցասեր գործունեության ու ջանքերի վկայությունն են խորհրդային ամբողջատիրական հա-

²³² Տե՛ս Վաերագրեր Հայ եկեղեցու պատմության: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա (1955-1994 թթ.), փաստաթղթերի և նիստերի ժողովածու, գիրք ԺԶ, կազմող՝ Գ. Եազըճեան, Երեւան, 2008, էջ 130:

²³³ Տե՛ս Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոս, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 4:

մակարգի պայմաններում նրա ցուցաբերած աննահանջ դիրքորոշումն ու քայլերը Հայկական ԽՍՀ և միութենական հանրապետությունների հայկական հոգևոր-մշակութային հաստատությունները վերադարձնելու ուղղությամբ: Այդ համատեքստում կարևոր էին ԽՍՀՄ պետական մարմինների ու ղեկավարության առջև ունեցած ձեռնարկները (նամակները՝ Ն. Բուլգանին, Ն. Խրուշչով, Ա. Կոսիգին և ուրիշների), որոնցում ակնհայտորեն դրսևորվել են կաթողիկոսի՝ որպես մեծ հայրենասերի, հոգևոր առաջնորդի և ազգային-պետական գործչի հատկանիշները:

Ուշագրավ է Վազգեն Ա-ի՝ ՀԵԳԽ նախագահ Ս. Գասպարյանին 1958 թ. օգոստոսի 26-ի ուղղված բողոքագիրը, որում մտահոգություն և հիասթափություն է արտահայտվել Ադրեջանական ԽՍՀ-ում հայկական եկեղեցիների շարունակվող անմխիթար վիճակի և Հյուսիսային Կովկասի Ստրավրոպոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաքի հայկական եկեղեցին քանդելու տեղական իշխանությունների քայլի առնչությամբ²³⁴ (հակառակ տրված խոստումների, որ եկեղեցին վերաբացվելու է):

Նշված նամակում Վազգեն Ա-ն հանգամանորեն ներկայացրել է Կովկասյան հանքային ջրերի շրջանի հայահոծ Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, Պյատիգորսկ և Եսենտուկի քաղաքների ավելի քան 25 հազար հայ ազգաբնակչության և հավատացյալների ցանկությունը՝ գործող տեսնել շուրջ 30 տարի առաջ փակված իրենց երկու եկեղեցիները (Պյատիգորսկում և Կիսլովոդսկում): Վազգեն Ա-ն հույս էր հայտնում, որ ՀԵԳԽ նախագահն այդ նամակի բովանդակության մասին տեղյակ կպահեր Հայաստանի և միութենական պատկան մարմիններին:

²³⁴ Տե՛ս Վալերագրեր Հայ եկեղեցու պատմության: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա (1955-1994 թթ.), նշվ. աշխ., էջ 672-673:

ԽՍՀՄ տարածքի հայ եկեղեցական թեմերում առկա խնդիրները և խորհրդային իշխանությունների վերաբերմունքը հնարավորություն չէն տվել հայ առաքելական եկեղեցին դնելու հարկավոր բարձրության վրա: 1964 թ. մայիսի 22-ին ԽՍՀՄ ԿՊԳԽ նիստը, քննարկելով ՀԵԳԽ-ի նույն թվականի ապրիլի 2-ի թիվ 91 նամակը, համաձայնություն է տվել հայ եկեղեցու Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի թեմը Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի վերակազմակերպմանը՝ այդ թեմի կենտրոնը Ռոստովից Մոսկվա տեղափոխելով²³⁵:

Այդ որոշումից հետո՝ 1966 թ., Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակով Նոր Նախիջևանի, Հյուսիսային Կովկասի, Աստրախանի նախկին թեմերի և Մոսկվայի հովվության միավորմամբ կազմավորվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը²³⁶՝ Մոսկվա կենտրոնով, առաջնորդանիստը՝ Մոսկվայի Սուրբ Հարություն եկեղեցին: Նորաստեղծ թեմը միավորել է ԽՍՀՄ հանրապետությունների հայ եկեղեցական համայնքները՝ բացառությամբ Անդրկովկասի:

1988 թ. ապրիլին գրանցվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սանկտ Պետերբուրգի համայնքը, վերաբացվել և համայնքին է վերադարձվել քաղաքի Սուրբ Հարություն, իսկ ավելի

²³⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 254, թ. 18:

²³⁶ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը գլխավորել են եպիսկոպոս Պարզև Գևորգյանը (1966-1976 թթ.), արքեպիսկոպոս Տիրան Կյուրեղյանը (1976-2000 թթ.): 2000 թ. հոկտեմբերից թեմը գլխավորում է եպիսկոպոս Եզրաս Ներսիսյանը:

ու՝ Սուրբ Կատարինե եկեղեցին²³⁷: 1991 թ. հիմնվել է Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդությունը: Մինչև 1990-ական թթ. սկիզբը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմն ուներ ընդամենը 7 եկեղեցի՝ Մոսկվայի Սուրբ Հարություն, Սանկտ Պետերբուրգի, Արմավիրի, Դոնի Ռոստովի, Չալթրի, Վլադիկավկազի, Բուդյոնովսկի (Սուրբ Խաչ) եկեղեցիները:

Վազգեն Ա-ի գործունեությանն են առնչվում միջեկեղեցական կապերի ամրապնդման ճանապարհով հայ առաքելական եկեղեցին նոր բարձրության վրա դնելը, ազգային խնդիրներին սատարելը: Իր մեծ հեղինակությամբ նա կանգնել է 1980-ական թթ. համազգային զարթոնքի դիրքերում, կարեկցել և աջակցել է բազմահազար հայ փախստականներին, գոտեպնդել Լեռնային Ղարաբաղի ազատամարտի զինվորներին:

Այսպիսով՝ խորհրդային տարիներին հայկական տասնյակ եկեղեցիներ ավերվեցին, քանդվեցին և օգտագործվեցին այլ նպատակներով: Եկեղեցու դեմ արշավի տարիներին, չնայած կրած մեծ զրկանքներին, բազմաթիվ հայկական եկեղեցիներ դարձան ազգային-համայնքնային կյանքի դրսևորման յուրօրինակ կենտրոններ՝ շարունակելով ծառայել հայության հոգևոր, կրթական, մշակութային առաջընթացին:

Հայ առաքելական եկեղեցին՝ Վազգեն Ա-ի առաջնորդությամբ, դիմակայելով ծանր փորձությունների, կարողացավ ազատվել ամբողջատիրական համակարգի կապանքներից և գործունեության լայն հնարավորություն ստանալ՝ իր ազգանվեր գործը շարունակելու համար:

²³⁷ 2000 թ. հուլիսի 12-ին Սանկտ Պետերբուրգի վերանորոգված Սուրբ Կատարինե եկեղեցին միասնաբար օծել են հայ առաքելական և ռուս ուղղափառ եկեղեցիների առաջնորդները՝ Գարեգին Երկրորդն ու Ալեքսի Երկրորդը:

ՌԴ կազմավորումից հետո Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի կոնդակով 1997 թ. հունվարի 13-ին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերակազմավորվեց երեք թեմերի: Դրանց թվում է նաև Հարավային Ռուսաստանի թեմը, որի առաջնորդանիստն է Կրասնոդարի Սուրբ Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին: Թեմն ընդգրկում է Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում և Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետություններում գործող հայկական եկեղեցիներն ու համայնքները: Թեմը 1997-2000 թթ. գլխավորել է Ծայրագույն վարդապետ Եզնիկ Պետրոսյանը, որից հետո մինչև օրս թեմի առաջնորդն է եպիսկոպոս Մովսես Մովսեսյանը:

ՌԴ հայկական համայնքի թվաքանակի աննախադեպ աճով և բնակության աշխարհագրության ընդլայնմամբ պայմանավորված հայկական եկեղեցիների շինարարություն է ծավալվել ինչպես հայահոծ, ավանդական համայնքներում, այնպես էլ այնտեղ, որտեղ եկեղեցիներ չեն եղել:

Հայկական եկեղեցաշինությունն ընդգրկել է Հյուսիսային Կովկասը, Կենտրոնական Ռուսաստանը, Ուրալը, Սիբիրն ու Հեռավոր Արևելքը: Ակտիվ եկեղեցաշինության շնորհիվ այսօր Ռուսաստանի Դաշնությունում գործում է շուրջ 40 հայկական եկեղեցի²³⁸, որի մի մասը՝ Ստավրոպոլի երկրամասում:

1990-ական թթ. - 2013 թ. տասնյակ հայկական նորակառույց եկեղեցիներ իրենց հոգևոր-լուսավորչական գործունեությունն են ծավալել Մոսկվայում, Նովոռոսիյսկում, Կրասնոդարում, Ադլերում, Տենգինկայում, Պյատիգորսկում, Սոչիում, Ստավրոպոլում, Կուրգանինսկում, Կիլովոդսկում, Ապշերոնս-

²³⁸ Տե՛ս **Է. Մինասյան**, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, 2018, էջ 290:

կում, Կալինիգրադում, Նիժնի Նովգորոդում, Վսևոլժսկում, Կիրովում, Վոլգոգրադում, Կրասնոյարսկում, Նովոկուզնեցկում, Բառնաուկում, Վլադիվոստոկում և այլուր:

Պյատիգորսկի ծխական խորհուրդը կազմակերպվել է 1991 թ., որի պահանջով էլ հատկացվեց համապատասխան տարածք, և ՌԴ-ում կառուցված առաջին եկեղեցին Պյատիգորսկի Սուրբ Սարգիս աղոթատունն էր, որն օծվել է 1992 թ.²³⁹:

Տասնյակ հայկական եկեղեցիների շինարարությունը գտնվում է ընթացքի մեջ, մյուսների համար հատկացվել են հողատարածքներ:

2009 թ. սեպտեմբերի 23-ին հայ առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի կյանքում տեղի ունեցավ մեծ իրադարձություն. հանդիսավոր շուքով նշվեց առաջնորդարանի բացումը:

Գրեթե բոլոր հայկական եկեղեցիներին կից գործում են կիրակնօրյա դպրոցներ կամ մշակութային կառույցներ, որոնք կարևոր առաքելություն են ստանձնել հայապահպանության, ազգային մշակույթի, լեզվի տարածման ու քարոզչության իրականացման ուղղությամբ:

Այսպիսով՝ Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները լուրջ դերակատարում ունեցան ոչ միայն հայապահպանության, այլև հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործում:

²³⁹ Տե՛ս **В. Акопян**, Возраждение церковной жизни армян Пятигорска, Армяне Ставрополя и Терека, Коллективная монография, под общ. ред. Акопяна В. З., Пятигорск, 2007, с. 198-199:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները, որոնք, ըստ էության, ձևավորվել էին 18-րդ դարում, աճեցին ու ամրապնդվեցին հետագայում: Դրան մեծապես նպաստեցին ռուսական կայսեր կողմից տրված արտոնությունները: Պատահական չէ, որ հենց ձևավորման ժամանակներից սկսած՝ տրված արտոնությունների շնորհիվ այդ համայնքները իրենց կողմը ձգեցին հայահոժ զանգվածների՝ բռնելով իրենց զարգացման ուղին: Դրանք սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացմամբ աչքի ընկան հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսից և 20-րդ դարասկզբին, ինչի լավագույն վկայությունն էր Ռուսական կայսրության կազմում այդ համայնքներում արդյունագործության, գյուղատնտեսության, արհեստագործության և առևտրի աստիճանական զարգացումը:

Վերելք ապրեց նաև Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքը: Տեղի ունեցան պատմաժողովրդագրական գործընթացներ, համայնքների բնակչության տեղաշարժեր, փոփոխություններ, որոնց վերլուծությանն էլ նվիրված է սույն աշխատությունը:

Հյուսիսային Կովկասի հայաշատ կենտրոններ Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Վլադիկավկազում, Ստավրոպոլում և բազմաթիվ այլ բնակավայրերում ազգային կյանքի օջախների դեր կատարող հայկական կրթական հաստատությունները հայրենանվեր գործունեություն ծավալեցին մինչև Հայրենական մեծ պատերազմը: Դպրոցների զգալի մասը պատերազմի և հետպատերազմյան առաջին տարիներին լուծարվեցին: Պյատիգորսկի հայկական դպրոցը փակվել է հետպատերազմյան տարիներին,

իսկ Կիսլովոդսկի հայկական դպրոցը, որի հիմնադրման հարցում մեծ է եղել Վ. Տերյանի աջակցությունը, գործել է մինչև 1940-ական թթ. կեսերը: Տևական ընդմիջումից հետո՝ 1972 թ., տեղի հայ մանկավարժների ջանքերով Կիսլովոդսկի երեք դպրոցներում կազմակերպվեցին հայոց լեզվի ֆակուլտատիվ, կամընտրական խմբեր, որոնք, սակայն, գործեցին ընդամենը մեկ տարի:

Վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ Խորհրդային Ռուսաստանի, այդ թվում՝ Հյուսիսային Կովկասի հայ համայնքներում նկատվել է ազգային կրթական գործի անկման միտում:

Հյուսիսային Կովկասի մի շարք հայաշատ կենտրոններում՝ Եկատերինոդարում, Արմավիրում և այլ վայրերում, հրատարակվել են հայկական մի շարք պարբերականներ, որոնք խորհրդային իշխանության հաստատումից հետո փակվել են:

Այսպիսով՝ հոգևոր-մշակութային կյանքը խորհրդահայ համայնքներում 1917-1941 թթ. ապրեց բեկումնային ժամանակաշրջան՝ ունենալով կարճատև ձեռքբերումների ու զարթոնքի ժամանակաշրջան, որին, 1920-1930-ական թթ. սկսած, հետևեց ազգային դիմագծի աստիճանական կորստի շրջան:

Հյուսիսային Կովկասում բնակվող հայահոծ համայնքները լիարժեք ներգրավվել էին ԽՍՀՄ-ում ընթացող հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացներին՝ իրենց վրա կրելով ժամանակի տարաբնույթ մարտահրավերներն ու խնդիրները, որոնք հատուկ էին ստալինյան պատմափուլին:

Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների թվաքանակի մեխանիկական աճը պայմանավորված էր Ադրբեջանից, միջինասիական հանրապետություններից, մասամբ Վրաստանից և Աբխազիայից հայ բնակչության բռնագաղթով կամ աստիճա-

նական արտահոսքով: Նորանկախ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարությունները, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրողությունները, Ադրբեջանա-արցախյան պատերազմը, Հայաստանի շրջափակումը պատճառ դարձան ՀՀ-ից հիմնականում դեպի ՌԴ, մասնավորապես Հյուսիսային Կովկասի հազարավոր հայերի ներգաղթի, հայաշատ այդ համայնքների հայության թվաքանակի աճի, հայկական նոր համայնքների ձևավորման²⁴⁰:

Մեծ չափերով համալրում ստացած հայկական այս համայնքներում որոշ ժամանակ անց արձանագրված կարևոր ձեռքբերումների կողքին նկատելի էին նաև բացթողումներ, կազմակերպչական խնդիրներ, հայապահպանությունն ու հայկականությունը վտանգող մարտահրավերներ: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների հետագա զարգացումը, հզորացումը, կազմակերպչական նոր որակները կարող են դրանք դարձնել ոչ միայն Հայաստանի բնակչությանը, այլև համայն հայությանը սատարող, միջպետական հարաբերությունները խթանող կարևոր գործոն:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրությունը կարող է նպաստել և խթան դառնալ հայրենիք-սփյուռք հետագա համագործակցության ամրապնդման գործում:

²⁴⁰ Տե՛ս Հ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 176:

ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Արխիվային սկզբնաղբյուրներ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 200, ց.1, գ. 7, թ. 66, 80; գ.158, թ.47; գ. 409, թ. 60; գ. 551, թ. 118; գ. 100, թ. 81; գ. 409, թ. 1,3; գ. 551, թ. 4; գ. 536, թ. 19, 21, 28; ֆ. 275, ց.3, գ. 4, թ. 87; ց.1, գ. 607, թ. 54, ֆ. 409, ց. 1, գ. 57; ց. 3, գ. 129; ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 4-9,11, 14; ֆ. 823, ց. 1, գ. 254; ց. 3, գ. 108, 129,160; ց. 4, գ. 23, 36:
2. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 38, թ. 17–27, թ. 38–40:

Բ. Տպագիր սկզբնաղբյուրներ

1. «Հայ սիյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:
2. Վաերագրեր Հայ եկեղեցու պատմութան: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ (16-րդ), Կազմող Գ. Յազըճեան, Երևան, 2008:
3. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), կազմ.՝ Բեհբուդյան Ա., Երևան, 1994:
4. Воронович Н. В., Меж двух огней (Записки зеленого) // Архив русской революции, т. VII. Берлин, 1922.
5. Всесоюзная перепись населения на 1926 г., Москва, т. 5, 1928.
6. Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, Москва, 1991.
7. Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года, Москва, 1984.

Գ. Պարբերականներ

1. «Ազգ», 1991-2017
2. «Արարատ», 1873, 1875
3. «Աշխատավոր», 1918, 1919
4. «Ժողովրդի ձայն», 1919

5. «Հայաստանի Հանրապետություն», 1991-2017
6. «Հայոց աշխարհ», 1997-2001
7. «Հայրենիքի ձայն», 1991-1993
8. «Հայրենիք», 1929, 1931
9. «Հորիզոն», 1918
10. «Մշակ», 1918, 1919
11. «Նոր դար», 1888
12. «Սաքարթվելո», 1918 (վրաց.)
13. «Վէմ», 1934
14. «Տեղեկատու» պաշտոնաթերթ Գահիրեի հայկական բարեգործական ընդհանուր միության, 2002
15. «Борьба», 1918
16. «Кавказское слово», 1919
17. «Народное знамя», 1919

Դ. Ուսումնասիրություններ

1. Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Երևան, 2011:
2. Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., Երևան, 2016:
3. Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Երևան, 2015:
4. Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004:
5. Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովհաննիսյան Է., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, 2017:
6. Եղիշե ա. Քահյ. Սարգսեան, Սուրբ Էջմիածնի հոգետր Ճեմարանը. Գէորգեան Ճեմարան. Աստուածաբանական համալսարան (1945–2006), Ս. Էջմիածին, 2009:

7. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), հ. 1, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները (խմբ.՝ Վ. Միքայելյան), Երևան, 2003:
8. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, 2003:
9. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920-ական թթ.), Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութները, հ. 3, Երևան, 2013:
10. Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010:
11. Մինասյան Է., Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017), Երևան, 2018:
12. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:
13. Մինասյան Ս., Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., Երևան, 2016:
14. Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:
15. Акопян В. З., Армянская Апостольская церковь города Пятигорска, Пятигорск, 2007.
16. Акопян В. З., Возраждение церковной жизни армян Пятигорска, Армяне Ставрополя и Терека, Коллективная монография, под общ. ред. Акопяна В. З., Пятигорск, 2007.
17. Ананян Ж., Хачатурян В. А., Армянские общины России, Ереван, 1993.
18. Армяне Краснодарского края: «лица кубанской национальности»: сб. информ.-метод. материалов / авт.-сост. М.В. Савва. Краснодар, 2007.
19. Всесоюзная перепись населения 1979 года: Сб. статей, Москва, 1984.
20. Григорянц В., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004.

21. Давтян Д., История храма Св. Григория Просветителя армянской Апостольской церкви в Одессе, Одесса, 2004.
22. Маилян Б. В., К вопросу о территориальном конфликте на Черноморском побережье Кавказа (июль 1918 г. – май 1920 г.) // Историческое пространство. Проблемы истории стран СНГ (сборник научных статей, издание Международной Ассоциации институтов истории стран СНГ), Москва, 2013.
23. Минасян М., Армяне Причерноморья, Ереван, 1990.
24. Минасян М., Этнические меньшинства Грузии; потенциал интеграции на примере армянского населения страны, Ереван, 2006.
25. Минасян С. А., Армяне беженцы на Северном Кавказе в 1918–1920 гг. // Армяне юга России: история, культура, общее будущее. Ростов-на-Дону, 2015.
26. Мелконян Э., Армянский всеобщий благотворительный союз, неоконченная история, Ереван, 2010.
27. Мелконян Э., Дятлов В., Армянская диаспора: Очерки социокультурной типологии, Ереван, 2009.

Ե. Գիտական հոդվածներ

1. Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում՝ ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2012:
2. Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում՝ ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների, «Սփյուռքագիտություն, տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Երևան, 2013:
3. Ալեքսանյան Հ., Հայկական ազգային գյուղտնտեսությունը ու շրջանները ՌԽԴՍՀ–ում, «Հայոց պատմության հարցեր», № 14, Երևան, 2013:
4. Անտոնյան Ա., Համշենահայության պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3 (55), 1979:

5. Գրիգորյան Մ., Միգրացիոն պրոցեսները Հայաստանում (1960–1980 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1991, № 5 (581):
6. Համշեն և համշենահայություն (գիտաժողովի նիւթեր), Երևան, 2007:
7. Մելիքսեթ-Բեկ Լ., Գևորգ Մելիքսեթյան Խուրով (նյութեր և նոթեր), ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1950, N 1-2:
8. Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն, տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Երևան, 2012:
9. Մելքոնյան Է., Հայաստան-Սփյուռք հարաբերությունների փոխակերպումը 20-րդ դարում, քաղաքական իշխանության խնդիրը, «Սփյուռքի հեռանկարները գլոբալիզացիոն աշխարհում» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:
10. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները գիտության բնագավառում 1990-ական թթ., «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2005, N8, էջ 1:
11. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչությունները 1990-ական թթ., «Նոր-Դար», N 4, Երևան, 2004:
12. Վարդանյան Ս., Արևմտյան Ուկրաինայի հայկական հուշարձանները, «Վարձք», Երևան, № 9, 2013:
13. Мелконян Э., Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры, Релегия и политика на Кавказе. Материалы международной конференции, Ереван, 2004.

РЕЗЮМЕ

АРМЯНСКИЕ ОБЩИНЫ СЕВЕРНОГО КАВКАЗА В 20-М ВЕКЕ: ИСТОРИЯ И ВЫЗОВЫ

На протяжении 18-19 веков на Северном Кавказе сложилась обширная армянская диаспора, которая в своем развитии прошла совершенно особый исторический путь. В 20-м веке общины армян Северного Кавказа пополнялись в силу ряда политических и экономических факторов. Во многих местных поселениях армяне стали составлять не малое число жителей, заняв на Северном Кавказе место одной из основных этнических групп.

Данная работа преследует задачу всестороннего освещения национальных, конфессиональных, экономических и других проблем армян Северного Кавказа в 20-м веке. Особое внимание уделено общественно-политической, культурно-духовной, образовательной сферам, а также демографическим трансформациям, вопросам безопасности, знанию родного языка и грамотности, преимущественным занятиям, повседневным вызовам и изучению ряда других факторов, связанных с армянскими общинами Северного Кавказа. Главное внимание уделено Краснодарскому и Ставропольскому краям, которые включают в себя основную часть Северного Кавказа.

В течении всего 20-го века армяне на Северном Кавказе проявили себя достаточно активной деятельностью, участвуя в местных политических, культурных и экономических делах. В начале века уже сложились крупные армянские сообщества в ряде городов – в Армавире, Екатеринодаре, Майкопе, Ейске, Анапе, Владикавказе, Кисловодске, Пятигорске, Георгиевске, Грозном, Ставрополе и многих других местах.

Накануне Первой Мировой войны количество армян там достигла 70754-х. В 1915-1917 годах по причине миграции избежавших турецкой резни западных и персидских армян, численность армянского населения Северного Кавказа увеличилась почти на 30 тысяч. Городское армянское население региона в основном занималось торговлей, участвовало в создании и развитии промышленных предприятий (главным образом в отраслях по пререработке сельхозпродукции). Не мало армян работало в органах местной власти, в сферах здравоохранения и просвещения. Сельское, частью и городское армянское население, занималось земледелием и животноводством.

Уже в конце 20-го века армянская диаспора Краснодарского и Ставропольского краев принадлежала к самым многочисленным группам армянского этнического сообщества. По данным переписи населения России в 2002 г. в Краснодарском крае проживало 274.566 человек, которые указали на свою армянскую идентичность (в том числе 141.501 мужчин и 133.065 женщин). Из них 211.397 владели армянским языком, а гражданство Республики Армения имели 6948 человек. В промежутке между переписями 1989-2002 годов армяне стали второй этнической группой в Краснодарском крае. Однако уже по состоянию на 2000 год на Кубани проживало в общей сложности (как легально, так и без прописки) около 500 тысяч представителей армянской национальности, некоторые же источники утверждают, что даже 600 тысяч. В Ставропольском же крае по результатам всероссийской переписи 2002 года находилось 149.249 армян.

Армяне развивают активную культурную деятельность на Северном Кавказе. Здесь выходит целый ряд периодических изданий, публикуются книги, действуют множество заведений

культуры. В частности в Георгиевске основано общество культуры «Канч» («Зов»). В Ессентуках действовали ассоциация «Ба-рекамутюн» («Дружба») и спортивное общество «Арагат». В Железноводске функционировало армянское землячество «Аршалуис» («Рассвет»). В соседнем с ним Кисловодске существовало культурно-благотворительное общество «Крунк» («Журавль»), а в 1997 г. там же была освящена недавно возведенная церковь Святого Вардана. В другом населенном пункте – в Минеральных Водах работало общество «Айк».

В Пятигорске еще в 1918 г. выпускалась армянская газета «Лрабер» («Вестник»), а 1919-1920 гг. литературно-художественный альманах «Алик» («Волна»). В 1930-х годах из-за репрессивного и тоталитарного режима в СССР национально-культурная жизнь здесь начала угасать и вновь ожила лишь в 1980-1990-х гг. В эти же годы здесь было основано армянское общество культуры имени Ваана Терьяна. В 1992-1993 гг. издавалась газета Российской и Ново-Нахичеванской епархии Армянской Апостольской Церкви «Хачкар». 1995 г. выпускается на русском языке историко-культурный журнал «Амайнк» («Община»), а в 1997 г. газета «Армянский вестник». Сочинский армянский культурный центр «Севан» организовал субботние и воскресные армянские школы. В Краснодаре под патронажем Армянской Апостольской Церкви открыта воскресная школа «Хачкар». Там же в 1996 г. стала издаваться первая на территории постсоветской России независимая армянская газета «Еркрамас». Таким образом, армяне на Северном Кавказе в 20-м веке создали одну из крупнейших своих диаспор. Она имеет организованные и деятельные структуры, которые всячески стремятся сохранить армянскую этническую идентичность и свою систему культурных ценностей в этой части большого мира.

SUMMARY

THE ARMENIAN COMMUNITIES OF THE NORTH CAUCASUS IN THE 20TH CENTURY; HISTORY AND CHALLENGES

During the 18th-19th centuries, a populous Armenian colony was formed in the North Caucasus, which passed a unique way of historical development. In the 20th century, conditioned with a number of political and economic factors, the communities of the North Caucasus were supplemented. Armenians constituted a large number in many settlements, becoming one of the main ethnic groups in the North Caucasus.

In the given work an attempt is made to comprehensively present the national, religious, economic, and other issues of the Armenians of the North Caucasus in the 20th century. Particular attention was paid to the study of socio-political, spiritual, cultural, educational life of the Armenian communities of the North Caucasus, as well as the quantity changes, welfare, mastering native language, literacy, occupation, current challenges and other processes. Mainly it was referred to the Krasnodar and Stavropol regions, which encompass the main part of the North Caucasus.

Throughout the whole 20th century Armenians were engaged in quite productive activities in the North Caucasus, taking part in local political, cultural and economic procedures. Already at the beginning of the century there were populous Armenian communities in a number of settlements of the region: Armavir, Yekaterinodar, Maikop, Eysk, Anapa, Vladikavkaz, Kislovodsk, Pyatigorsk, Georgievsk, Grozny, Stavropol and elsewhere.

On the eve of the First World War, the number of Armenians living in the North Caucasus reached 70.754. The number of

Armenian population in the North Caucasus increased by 30.000 as a result of the deportation of Western and Persians Armenians in 1915-1917, who survived the Turkish atrocities.

The urban Armenian population of the region was mainly engaged in trade, as well as participated in the creation and development of industrial enterprises in the region (mainly agricultural products processing). A considerable number of Armenians worked in local government bodies in the spheres of healthcare and education. The Armenian population of the villages, partly also in the towns, was engaged in agriculture and cattle-breeding.

At the end of the 20th century, the Armenian Diaspora in the Krasnodar and Stavropol regions belonged to the regional largest groups of ethnic Armenian communities. According to the 2002 Russia census, 274.566 people lived in the Krasnodar region, who considered themselves Armenian (including 141.501 men and 133.065 women). 211.397 of them mastered Armenian, 6948 people had Armenian citizenship. In the period between the 1989-2002 censuses, Armenians became the second ethnic minority in the Krasnodar region. However, still as of 2000, nearly 500.000 representatives of the Armenian nation lived in Kuban (both legally and illegally), some claimed that this number even reached 600.000. In the Stavropol region, according to the 2002 Pan-Russian Census data, only 149.249 Armenians lived there.

Armenians were actively engaged in cultural activities in the North Caucasus. A number of periodicals and books were published, numerous cultural institutions functioned here. Particularly, “Kanch” (“Call”) cultural society was established in Georgievsk. “Barekamutyun” (“Friendship”) society and “Ararat”

sports club functioned in Yessentuki. “Arshaluys” (“Sunrise”) Armenian society operated in Zheleznovodsk. The Armenian cultural-charitable “Krunk” (“Crane”) society operated in Kislovodsk on the border with Zheleznovodsk, and in 1997 the newly built St. Vartan Church was consecrated here. “Hayk” (“Armenians”) society functioned in another settlement of the Stavropol region – Mineralnye Vody. Still in 1918, “Lraber” (“Herald”) Armenian newspaper and from 1919 to 1920 the literary-artistic “Alik” (“Wave”) collection were published in Pyatigorsk. In the 1930s, as a result of the violent and totalitarian policy of the USSR, the national-cultural life began to fade here and re-activated only in the 1980-1990ss.

During those years “Vahan Teryan” Armenian Cultural Society was opened here. In 1992-1993 “Khachkar” (“Cross-stone”) newspaper of the Nor Nakhichevan and Russian Diocese of the Armenian Apostolic Church was published. Since 1995 “Hamaynk” (“Community”) (“Амайнк”) historical-cultural magazine (in Russian) and in 1997 “Armiansky Vestnik” (“Armenian Herald”) newspaper have been published. “Sevan” Armenian Cultural Center of Sochi has organized Saturday and Sunday Armenian schools. The “Khachkar” Sunday School of the Armenian Apostolic Church operates in Krasnodar. In 1996 the first independent Armenian newspaper “Yerkramas” (“Region”) in the territory of post-Soviet Russia began to be published in Krasnodar. Thus, the Armenians of the North Caucasus present one of the largest Armenian communities in the 20th century. It has organized and functioning structures trying to preserve the Armenian identity and system of national values in this corner of the world.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ....	10
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԿՐԱՄՆՈՂԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ	40
Ա. Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները 1900-1980-ական թթ.	40
Բ. Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքները հետխորհրդային տարիներին.....	75
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ	98
Ա. Ստավրոպոլի երկրամասի հայկական համայնքների ժողովրդագրական իրավիճակը 20-րդ դարում	98
Բ. Ստավրոպոլի երկրամասի հայության հոգևոր-եկեղեցական կյանքը	119
ՎԵՐՋԱԲԱՆ.....	137
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	140
РЕЗЮМЕ	
АРМЯНСКИЕ ОБЩИНЫ СЕВЕРНОГО КАВКАЗА В 20-М ВЕКЕ: ИСТОРИЯ И ВЫЗОВЫ	145
SUMMARY	
THE ARMENIAN COMMUNITIES OF THE NORTH CAUCASUS IN THE 20 TH CENTURY; HISTORY AND CHALLENGES	148

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Մինասյան Էդիկ Գարեգինի,
Մայիլյան Բենիամին Վիկտորի, Մխոյան Հայկ Խաչիկի
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

**Эдик Гарегинович Минасян,
Бениамин Викторович Маилян, Айк Хачикович Мхоян
АРМЯНСКИЕ ОБЩИНЫ В СЕВЕРНОГО КАВКАЗА В XX
ВЕКЕ, ИСТОРИЯ И ВИЗОВЫ**

**Edik Minasyan, Beniamin Mailyan, Hayk Mkhoyan
THE ARMENIAN COMMUNITIES OF THE NORTH CAUCASUS:
HISTORY AND CHALLENGES**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի
Գրքի շապիկին ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր
քաղաքի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին է:

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱԶ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 13.12.2018:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 9.5:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ԵՐԵՎԱՆԻ ՎՃՌՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am